«Հաստատում եմ»

Ռեկտոր _____Կ. Աթոյան

«20» Հունվարի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

_____Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան_____
(Ուսումնական հաստատության անվանումը)
_____ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128_____
(Հաստատության հասցեն)

Երևան 2014

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատակիցների կազմը

№	Անուն, Ազգանուն	Պաշտոն
1.	Պարույր Քալանթարյան	Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր
2.	Ներսես Գևորգյան	Որակի ապահովման բաժնի պետ
3.	Միխաիլ Կարապետյան	Վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր
4.	Աննա Փախլյան	Որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
5.	Մերի Դալլաքյան	Որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
6.	Գայանե Մերդինյան	Որակի ապահովման բաժնի առաջատար մասնագետ
7.	Գագիկ Աղաջանյան	Որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
8.	Մարգարիտ Մարուքյան	Որակի ապահովման բաժնի առաջատար մասնագետ
9.	Նաիրա Դարբինյան	Գիտական քարտուղար
10.	Ռուբեն Հայրապետյան	Կառավարման ամբիոնի դոցենտ
11.	Արևիկ Հովհաննիսյան	Կառավարման ամբիոնի դոցենտ
12.	Ռուզաննա Հաջոյան	Մարքեթինգի ամբիոնի դոցենտ
13.	Գոհար Սարգսյան	Անձնակազմի կառավարման բաժնի պետ
14.	Սուրեն Բաբաջանյան	Ֆինանսական հաշվառման ամբիոնի ասիստենտ
15.	Հասմիկ Համբարձումյան	Հակաճգնաժամային կառավարման ամբիոնի ասիստենտ
16.	Արմեն Գրիգորյան	Մարքեթինգի ամբիոնի դոցենտ
17.	Գրիգոր Նազարյան	Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնակատար
18.	Կարեն Գրիգորյան	Մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ
19.	Վահան Բաբայան	Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի ասիստենտ
20.	Սուրեն Պարսյան	Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ
21.	Հայկ Քամալյան	Կառավարման ամբիոնի ասպիրանտ
22.	Թամարա Հովհաննիսյան	Բիզնեսի կազմակերպման ամբիոնի ասպիրանտ
23.	Տիգրան Դավթյան	Ֆինանսական հաշվառման ամբիոնի ասպիրանտ
24.	Հայկուհի Ավետիսյան	Ֆինանսական շուկաների և ինստիտուտների ամբիոնի ասպիրանտ
25.	Լիանա Բաղդասարյան	Ֆաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահ
26.	Ալբերտ Ղազարյան	Տնտեսական բաժնի պետ
27.	Էդիտա Վարդգեսյան	Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ
28.	Գրիշա Ամիրխանյան	Կառավարման ֆակուլտետի ուսանող
29.	Տիգրան Սահակյան	Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասպիրանտ
30.	Կարեն Հակոբյան	Վիճակագրության ամբիոնի դոցենտ
31.	Հասմիկ Զաքարյան	Վիճակագրության ամբիոնի ասպիրանտ
32.	Գոհար Գևորգյան	Լրատվության և հասարակայնության հետ կապերի

		բաժնի պետ
33.	Սոֆյա Օհանյան	Փիլիսոփայության ամբիոնի դոցենտ
34.	Արամ Սարգսյան	Փիլիսոփայության ամբիոնի վարիչ
35.	Վարդ Ղուկասյան	Արտաքին կապերի բաժնի պետ
36.	Աննա Մարգարյան	«Կրթության կառավարում» մասնագիտացման 2-րդ կուրսի մագիստրոս
37.	Անդրեյ Ավետիսյան	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն
38.	Կարեն Պետրոսյան	տ.գ.թ., ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոն
39.	Արտակ Առաքելյան	տ.գ.թ., ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոն
40.	Գայանե Սալնազարյան	տ.գ.թ., ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոն
41.	Տիգրան Սարգսյան	տ.գ.թ., ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոն
42.	Անի Խաչատրյան	դասախոս, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոն
43.	Վալենտինա Միքայելյան	դասախոս, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոն
44.	Աղավնի Վարդանյան	դասախոս, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի բնագիտական առարկաների ամբիոն
45.	Լիանա Կարապետյան	մանկ.գիտ.թեկ., դոցենտ, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի բնագիտական առարկաների ամբիոն
46.	Սուսաննա Տեր-Ավագյան	դասախոս, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի բնագիտական առարկաների ամբիոն
47.	Անդրանիկ Սարգսյան	տեխն. գիտ. թեկ., դոցենտ, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի բնագիտական առարկաների ամբիոն
48.	Մարինե Մկրտչյան	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ուսումնական մասի ավագ մասնագետ
49.	Ամալյա Սարոյան	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի գործավար-քարտուղար
50.	Հայկարամ Դրմեյան	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ուսանող
51.	Սիրանուշ Թադևոսյան	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ուսանող
52.	Սոս Խաչիկյան	ՀՊՏՀ ԵՄ տնօրեն
53.	Արփինե Հովակիմյան	ՀՊՏՀ ԵՄ փոխտնօրեն
54.	Հայկուհի Ավագյան	ՀՊՏՀ ԵՄ կրթության որակի ապահովման պատասխանատու
55.	Մարիամ Խաչատրյան	ՀՊՏՀ ԵՄ ուսումնական մասի գործավար
56.	Արգիշտի Միքայելյան	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախագահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ 5
Ն Ա Խ Ա Բ Ա Ն 6
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 8
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 28
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 28
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 52
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 63
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 75
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 90
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 98
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 105

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը նպաստող կրթական միջավայրի ստեղծմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի եզրույթներով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայման-ները:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հիմնադրման հիմքերը դրվել են դեռևս 1930 թվականին ԵՊՀ կազմում, սակայն Հայաստանում տնտեսագիտական ինքնուրույն բուհի նորագույն պատմությունը սկիզբ է առել 1975 թ. օգոստոսի 6-ին, երբ ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ ԵՊՀ տնտեսագիտական, ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի, ղեկավար աշխատողների և մասնագետների որակավորման բարձրացման ֆակուլտետների բազայի վրա կազմավորվեց Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: ՀՀ Կառավարության 1999թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ բուհը վերանվանվեց Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ, իսկ 2006թ. հունիսի 6-ին ստացավ համալսարանի կարգավիճակ և կոչվեց «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ՀՊՏՀ 6 ֆակուլտետներում կրթական ծրագրեր են իրականացվում 17 մասնագիտություններով, այստեղ սովորում է ավելի քան 8000 ուսանող: Անցած տասնամյակների ընթացքում ՀՊՏՀ-ն պատրաստել է ոլորտի ավելի քան 30.000 բարձրորակ մասնագետներ, որոնք մասնակցել են նաև հանրապետության տնտեսական բարեփոխումներին: Բուհի դերը Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործում, առաջին հերթին, պայմանավորված է նրանով, որ ներկայումս ՀՀ գործադիր իշխանության, օրենսդիր մարմնի շատ օղակներում աշխատում են ՀՊՏՀ շրջանավարտները, որոնք մշակում են երկրի տնտեսական քաղաքականությունը:

Ուսանողին աշխատաշուկայում արժանի տեղ ապահովելու գլխավոր նպատակին հասնելու համար ՀՊՏՀ-ում քայլեր են ձեռնարկվում գործատուների հետ իրական համագործակցության ուղղությամբ. 2012-2013թթ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, աշխատանքի և սոցիալական հարցերի, բնապահպանության նախարարությունների, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, պետգույքի կառավարման վարչության, բանկերի միության և տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում գործատուների հետ համատեղ իրականացվում են 8 մագիստրոսական ծրագրեր:

2012թ. ՀՀ Կառավարության որոշմամբ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին թույլատրվեց իրականացնել օտարերկրյա դիմորդների նախապատրաստական և բարձրագույն կրթական ուսուցում:

ՀՊՏՀ առաքելությունից բխող միջազգայնացումն ուղղված է կրթության որակի ճանաչմանը, որակավորումների համադրելիության և մրցունակության ապահովմանը: Միջազգայնացումը կարևորագույն գործոն է նաև միջազգային կրթական զարգացումներին իրազեկվելու և լավագույն փորձը կիրառելու նպատակով: 2012 թվականից Եվրոպական միության Տեմպուս ծրագրի շրջանակներում ՀՊՏՀ-ն իրականացնում է երեք, իսկ 2013 թվականից՝ ևս 4 միջազգային ծրագիր:

ՀՊՏՀ-ում կարևորվում է գիտահետազոտական գործունեությունը: Գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և անվտանգության ապահովման ոլորտներում, գիտական մտքի համախմբման և կրթական գործընթացի հետ գիտական հետազոտությունների կապի ապահովման նպատակով 2013թ. համալսարանում ստեղծվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որն իրականացնում է հանրապետության տնտեսության առավել հրա-

տապ հիմնախնդիրների վերլուծական ծրագրեր: Գիտական աշխատանքներ են կատարվում նաև ներբուհական դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

Կրթության միջազգային զարգացումները, աշխարհում տեղի ունեցող ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական և մշակութային գործոններով պայմանավորված փոփոխությունները մեծ մարտահրավերներ են առաջադրում համալսարաններին, որոնց դիմագրավելու ու առաջընթաց աճ ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի արտաքին և ներքին մրցունակության բարձրացման հիմնական բաղադրիչների՝ վարչական, ուսումնական գործընթացի և ֆինանսական կառավարման համակարգերի լայնածավալ փոփոխություններ:

2011թ. սեպտեմբերի 30-ին «Մենք փոխվում ենք» խորագիրը կրող շնորհանդեսով տրվեց բուհում կատարվելիք բարեփոխումների մեկնարկը, ներկայացվեցին ՀՊՏՀ-ի նոր կերպարի ձևավորմանը միտված քայլերը՝ համալսարանի նոր պատկերանշանը (լոգո), կարգախոսը («Մասնագիտացում, փորձ, հնարավորություն», որն արտահայտում է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում տնտեսագիտական համալսարանի դիրքավորման հիմնական ուղղությունները) և զարգացման առաջնահերթությունները:

ՀՊՏՀ տեսլականն է.

Մինչև 2018 թվականը ՀՊՏՀ-ն կդառնա Հայաստանի ամենամրցունակ, կիրառական գիտելիք և կարողություններ տրամադրող և հետազոտություններ իրականացնող տնտեսագիտական ուղղվածությամբ բարձրագույն ուսումնական հաստատությունը:

ՀՊՏՀ վերափոխված առաքելությունն է.

ՀՊՏՀ-ն, հիմնվելով ակադեմիական ազատությունների և ինքնավարության, ուսանողակենտրոն ուսումնառության, կրթություն-աշխատաշուկա համագործակցության, կիրառական գիտելիքի փոխանցման և գիտահետազոտական աշխատանքների վրա՝ մասնագիտական ներուժի կենտրոնացման, ուսուցման և ուսումնառության նորարարական միջավայրի ստեղծման և առաջընթաց հետազոտական աշխատանքների միջոցով պատրաստում է մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքով, հմտություններով և կարողություններով զինված ու ժողովրդավարական քաղաքացիության սկզբունքներով առաջնորդվող մասնագետներ, վերապատրաստում է հասարակության և տնտեսության փոփոխությունները իրականացնող առաջնորդներ՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայի համար:

ՀՊՏՀ նոր առաքելության հիմնադրույթներն են՝ ապահովել և զարգացնել շրջանավարտների ծառայողունակությունը, համալսարանի ուսումնական գործընթացի, վարչական, ֆինանսական և այլ ծառայությունների արդյունավետ կառավարումը, մրցունակությունը և միջազգայնացումը, կրթության որակը և մատչելիությունը, գիտահետազոտական աշխատանքների հիմնարարությունը, կիրառական բնույթը և առևտրայնացումը: Կրթության զարգացումների նոր փուլը պայմանավորված նաև կրթության պարադիգմի փոփոխությամբ՝ դասախոսակենտրոն համակարգից դեպի ուսանողակենտրոն համակարգ անցնելու գործընթացով:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ բուհ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Բուհն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առաքելությունը բխում է Հայաստանի Հանրապետությունում գործող Բոլոնիայի գործընթացի 10 սկզբունքներից, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներից:

Համաձայն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կանոնադրության (հաստատվել է Կառավարության կողմից 15 նոյեմբերի 2012թ., N 1436-Ն)՝ ՀՊՏՀ առաքելությունն է. «Համալսարանի գործունեությունը նպատակաուղղված է տնտեսագիտական կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական և լրացուցիչ կրթության մակարդակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և ուսուցման տարբեր ձևերով ու կրթական ծրագրերով» (հավելված 1.1): Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2016թթ. զարգացման ռազմավարական ծրագրում հստակեցվել է առաքելությունը և ներկայացվել հետևյալ կերպ. «ՀՊՏՀ-ն, հիմնվելով ակադեմիական ազատությունների և ինքնավարության, ուսանողակենտրոն ուսումնառության, կրթություն-աշխատաշուկա համագործակցության, կիրառական գիտելիքի փոխանցման և գիտահետազոտական աշխատանքների վրա՝ մասնագիտական ներուժի կենտրոնացման, ուսուցման և ուսումնառության նորարարական միջավայրի ստեղծման և առաջընթաց հետազոտական աշխատանքների իրականացման միջոցով պատրաստում է մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքով, հմտություններով և կարողություններով զինված, ժողովրդավարական քաղաքացիության սկզբունքներով առաջնորդվող մասնագետներ և վերապատրաստում է հասարակության և տնտեսության փոփոխությունները իրականացնող առաջնորդներ՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում» (հավելված 1.3): Առաքելության ձևակերպումից պարզ է դառնում, որ այն համահունչ է Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) և կրթական ծառայություններ է մատուցում բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի մակարդակներում՝ շնորհելով համապատասխան որակավորումներ:

Հաշվետու ժամանակահատվածի համար (2009-2013թթ.) առաքելությունից բխող նպատակներն ու ռազմավարական ուղղություններն ուսումնասիրելու նպատակով վերլուծվել են ՀՊՏՀ 2006-2011թթ., ինչպես նաև 2012-2016թթ. զարգացման ռազմավարական ծրագրերը, որտեղ հստակեցված են համալսարանի նպատակները, կատարման ժամանակացույցը և այլն (հավելված 1.2 և 1.3):

Ի տարբերություն «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները 2006-2011թթ.» փաստաթղթում նշված՝ զարգացման 7 ուղղությունների (ուսումնամեթոդական աշխատանքներ, գիտահետազոտական աշխատանքներ, ուսումնադաստիարակչական աշխատանքներ, մշակութային միջոցառումներ և սպորտ, միջազգային կապեր և միջազգային կրթական ծրագրերի իրագործում, կրթության էկոնոմիկա և ֆինանսներ, աշխատողների և ուսանողության աշխատանքային (ուսումնառության) կյանքի որակի բարելավման միջոցառումներ, աշխատանքային և ուսումնական կարգապահություն, կառավարման կազմակերպական բարեփոխումներ), ՀՊՏՀ 2012-2016թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը ներառում է բուհի գործունեության ոլորտների և նպատակների համախումբ՝ ըստ ինը ուղղության: Ստորև ներկայացնում ենք դրանք՝ ամփոփ տեսքով (աղյուսակ 1):

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն ունի 2 մասնաճյուղ՝ Գյումրիում և Եղեգնաձորում:

Շիրակի մարզում տնտեսագիտական կրթություն ստանալու մատչելիության և մարզի գործարար միջավայրը տեղի մասնագետներով ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ՀՀ Կառավարության N 131 որոշման համաձայն, 1997թ. մայիսի 30-ին Գյումրիում բացվեց Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) մասնաճյուղը: 2009-ից մասնաճյուղը ուսումնական գործընթացը կազմակերպում է նոր՝ ընդարձակ լսարաններով, դահլիճով, համակարգչային սրահով, գրադարանով, ընթերցասրահով հագեցած, գազաֆիկացված մասնաշենքում:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մասնաճյուղը ստեղծվել է ՀՀ Կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման հիման վրա և սկսել է գործել 2008թ. սեպտեմբերի 1-ից: ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի առաքելությունը և դրանից բխող զարգացման ուղղություններն ու նպատակները հիմնավորվում են գործունեության մի շարք փաստերով. մասնավորապես՝ Վայոց ձորի և հարակից մարզերի բնակիչները հնարավորություն ունեն ստանալու մատչելի բարձրագույն կրթություն, նպաստում է գիտահետազոտական և մանկավարժական գործունեության ապակենտրոնացմանը, տեղական մակարդակում ամրապնդվել է աշխատաշուկա-բուհ համարժակցությունը: Մասնաճյուղի գոյությունը նպաստում է նաև ՀՀ Կառավարության գործունեության ծրագրով ամրագրված՝ մարզերի համաչափ զարգացմանն ու համահարթեցմանը:

Աղյուսակ 1.

ՀՊՏՀ գործունեության ոլորտների և նպատակների համախումբն ըստ ՀՊՏՀ 2012-2016թթ. զարգացման ռազմավարական ծրագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ								
Կրթական գործունեություն	**Գիտական գործունեություն**	**Տեղեկատվայնացում**	**Միջազգային համագործակցություն**	**Ուսանողների դաստիարակչական աշխատանք**	**Կադրային քաղաքականություն**	**Համալսարանի կառավարում**	**Ֆինանսատնտեսական գործունեություն**	**Տնտեսական գործունեություն և նյութատեխնիկական հենք**
• Տարածաշրջանում տնտեսագիտական կրթության բնագավառում առաջատար դիրքերի գրավում • Տնտեսագիտության բնագավառում ազգային գիտակրթական կենտրոնի կարգավիճակի ձեռքբերում • Նորաստեղծական միջավայրի ձևավորում և զարգացում	• Համալսարանի գիտական ներուժի առավելագույն օգտագործում • Համալսարանի գիտական գործունեության մրցունակության և պահանջվածության ապահովում • Գիտնականների ինտեգրում համաշխարհային գիտական հանրությանը • Գիտական հետազոտությունների ինքնաճախսաճածկում	• Տեղեկատվական-հաղորդակցային միասնական կենտրոնի զարգացում • Կրթական և գիտական նոր որակի ձեռքբերում՝ ի հաշիվ տեղեկատվական և հեռահաղորդակցային նորաստեղծությունների	• Միջազգային տնտեսագիտական ասպարեզում ազգային և տարածաշրջանային առաջատարի համբավի ձևավորում • Օտարերկրյա կապիտալի ներգրավում	• Պայմանների ապահովում՝ ուսանողի ազգային և միջազգային սոցիալ-մշակութային միջավայրին հարմարման համար	• Արտասահմանյան մասնագետների և գիտնականների ներգրավում • Աշխատակիցների և ուսանողների համաշխարհային գիտակրթական նախագծերին մասնակցության ընդլայնում	• Առաքելության իրականացման համար համապատասխան պայմանների ապահովում • Տնտեսագիտական մտքի կենտրոնի զարգացման քաղաքականության իրականացում • Կառավարման համակարգի զարգացում	• Կայունացման բյուջեից անցում զարգացման բյուջեի • Աշխատակիցների եկամուտների բարձրացում	• Զարգացման հայեցակարգին համապատասխան՝ նյութատեխնիկական հենքի և տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացում

ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի առաքելությունները և մատուցվող կրթական ծառայությունները նույնպես համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ):

Ընդհանուր առմամբ, ՀՊՏՀ-ում առկա է նպատակների և զարգացման գերակա ուղղությունների մշակման հարուստ փորձ, որը, հաշվի առնելով համաշխարհային կրթական միջավայրի դինամիզմն ու ՀՀ կրթական համակարգի փոփոխությունները, նույնպես ենթարկվում է համապատասխան փոփոխությունների՝ բխելով բուհի առաքելությունից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Բուհի առաքելությունը, նպատակներն ու խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ներքին և արտաքին հիմնական շահակիցներն են՝

1. ՀՀ Կառավարությունը,
2. ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը,
3. գործատուները,
4. ՀՊՏՀ դիմորդները, ուսանողները, շրջանավարտները և նրանց ծնողները,
5. ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսումնաօժանդակ անձնակազմը:

Ներքին շահակիցները՝ ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը, ներգրավված են բուհի կառավարման մարմիններում և մշտապես կարծիք հայտնելու, առաջարկություններ կատարելու հնարավորություն ունեն: Ըստ ՀՊՏՀ կանոնադրության 13-րդ կետի՝ համալսարանի կոլեգիալ կառավարման մարմինը խորհուրդն է, որը ձևավորվում է ՀՀ Կառավարության սահմանած կարգով՝ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից՝ 25-ական տոկոս համամասնությամբ: Հիմք ընդունելով վերանշյալը՝ վերլուծվել են շահակիցների առանձին խմբերը և դրանց կարիքները ՀՊՏՀ առաքելությունում, գերակա ուղղություններում, խնդիրներում և նպատակներում: Այսպես՝

1. ՀՊՏՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի խնդիրներից են՝ բարձր որակավորմամբ մասնագետների, գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը, ինչին համապատասխան՝ համալսարանն իրավասու է կազմելու ուսումնական պլաններ և ծրագրեր, կազմակերպելու մագիստրանտների, ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների ընդունելություն, կարգավորելու սովորողների սննդի, հանրակացարանաբնակ ուսանողների կենցաղի և սպասարկում, սովորողների և աշխատողների հանգստի հարցերը: Համալսարանի անձնակազմի անդամները, լինելով ներքին շահակիցներ, կարող են ընտրել և ընտրվել համալսարանի խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետների խորհուրդներում, մասնակցել համալսարանի գործունեությանն առնչվող խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքներին:

2. Ուսանողը, ըստ ՀՊՏՀ կանոնադրության և ռազմավարական ծրագրերի, հաճախում է դասախոսություններին, ըստ նախասիրությունների՝ մասնակցում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, ուսուցման որակն ապահովող գործընթացներին և գնահատում պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը, օգտվում համալսարանի գրադարանից, մարզական և առողջարանային հենակետերից, ուսման վարձի մասամբ կամ լրիվ զեղչման իրավունքից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. 2009-2013թթ. հաշվետու ժամանակաշրջանում բուհում ներքին շահակիցների կարիքների վերհանման և բավարարման տարբեր կառուցակարգեր են գործել. մասնավորապես՝ 2006թ. մարտի 18-ին ընդունված՝ «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները 2006-2011թթ.» ռազմավարական ծրագրով նախատեսված՝ ինստիտուտի պրոֆեսորադասախոսական համակազմի և ուսումնաօժանդակ անձնակազմի վարձատրության մակարդակի բարձրացումը, ՀՊՏՀ դասախոսների վերապատրաստման հայեցակարգի մշակումը, մասնաշենքերում ընթացիկ վերանորոգման աշխատանքները, նոր կառուցվող մասնաշենքը ավարտին հասցնելը (ծրագրված էր նոր մասնաշենքում տեղակայել գրադարան, ընթերցասրահներ /ՊՖԴ կազմի և ուսանողների համար/, համակարգչային սրահներ և մարզադահլիճ) և այլն հաջողությամբ իրականացվել են:

4. Ներքին շահակիցների կարիքների բավարարման տեսանկյունից, համաձայն «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 22.12.2005թ. «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» N2307-ն որոշման, 2006-2007 ուսումնական տարվանից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մեկնարկեց ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրման գործընթացը: Հաշվի առնելով ուսանողների կարիքները և նրանց պակաս ակտիվությունը՝ մասնագիտական ամբիոններում ստեղծվել են բակալավրիատի ուսանողների ուսումնառության անհատական ծրագրեր՝ ելնելով եվրոպական կրեդիտային համակարգի նորմատիվային պահանջներից: Ներքին շահառուների խմբերի միջև կապ ստեղծելու նպատակով մշակվել է կանոնակարգ, որտեղ ներկայացված են ուսանողների գիտելիքների գնահատման և դրա հետ կապված վարչարարության և փաստաթղթաշրջանառության սկզբունքները և դեկանատ-ամբիոն-ուսանող հարաբերությունները (2006թ. գիտական խորհրդի հուլիսի 3-ի նիստի արձանագրություն): 2009-2012թթ. մշակվել և հրատարակվել են մեթոդական ցուցումներ կրեդիտային համակարգի մեթոդների և սկզբունքների, գնահատման համակարգի փոփոխությունների և այլնի մասին, կանոնակարգվել է ուսանողների կողմից գրավոր աշխատանքների բողոքարկման գործընթացը, բացակայությունը հարգելի համարելու պայմանները, գրավոր աշխատանքների ստուգման արդյունքների մասին տեղեկատվության ստացումը և այլ գործընթացներ:

5. Ուսանողների համակարգչային ուսուցման ընթացքն ուսումնասիրելու նպատակով անցկացվել է հարցում տարբեր մասնագիտությունների և կուրսերի 412 ուսանողների շրջանում: Բացահայտված թերությունները վերացնելու ուղղությամբ ղեկավարությունը քայլեր է ձեռնարկել:

6. Հաշվի առնելով արտաքին շահակիցների կարիքները և ներքին շահակիցների հետ կապերի անհրաժեշտությունը՝ կրթական չափորոշիչների խմբագրման համար, ըստ առանձին մասնագիտությունների, ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնցում ներգրավվել են համապատասխան ոլորտների մասնագետներ, գործարարներ և կառավարիչներ:

7. 2007թ-ից սկսել է գործել, իսկ 2011թ. համալրվել է էլեկտրոնային քարտադարանը/գրադարանը, որը թե՝ ներքին, թե՝ արտաքին շահակիցներին հնարավորություն է ընձեռում գտնելու անհրաժեշտ մասնագիտական և հանրամատչելի գրականություն:

8. 2013 թվականից ուսանողների ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ և մատչելի դարձնելու համար գործում է հանրակացարանը:

9. ՀՊՏՀ արտաքին շահակիցներից են գործատուները, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և Կառավարությունը: ՀՊՏՀ-ն այժմ իր բարեփոխումների շրջանակում փորձում է գործատուներին ներգրավել բոլոր մակարդակներում, անգամ՝ կրթական ծրագրերի կազմման գործընթացում, ինչը ավելի դյուրին կդարձնի հետադարձ գործունեությունը գործատուների հետ, իսկ ՀՀ ԿԳՆ և Կառավարության հետ կապը, որպես արտաքին շահակից, արտահայտվում է կրթության ոլորտում պետական քաղաքականությանը համահունչ գործունեություն վարելով և դրան համապատասխան բարեփոխումներ իրականացնելով:

ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերը արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման համար պարբերաբար կատարում են հարցումներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ԲՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր

ՀՊՏՀ առաքելությունը սահմանվում է հիմնադիր փաստաթղթի՝ կանոնադրության մեջ (հաստատվել է ՀՀ Կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի N1718-Ն, այնուհետև այդ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 1436-Ն որոշումներով): Մասնավորապես՝ կանոնադրության 2-րդ կետում նշվում է, որ համալսարանի գործունեությունը նպատակաուղղված է տնտեսագիտական կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական և լրացուցիչ կրթության մակարդակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և ուսուցման տարբեր ձևերով ու կրթական ծրագրերով: ԵՊՏԻ զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները

2006-2011թթ. ծրագրում (հաստատվել է ԵՊՏԻ խորհրդի 18.03.2006թ. նիստում), ըստ տարիների, հստակեցվում են համապատասխան ժամանակահատվածում գերակա բոլոր նպատակները, ինչը հնարավորություն էր տալիս վերահսկելու զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը:

ՀՊՏՀ նպատակների իրագործման գնահատման կառուցակարգերի մեջ, առաջին հերթին, առանձնանում են ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գործունեության մասին ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որոնք ներկայացվում են համալսարանի խորհրդի հաստատմանը, ինչպես նաև կառավարման բոլոր այլ մակարդակների հաշվետվությունները (ամբիոնների տարեկան հաշվետվություններ, ֆակուլտետների տարեկան հաշվետվություններ): Այս կառուցակարգը սահմանված է ՀՊՏՀ կանոնադրությամբ (հավելված 1.1 25-ի դ կետը): Այդ հաշվետվություններում ռեկտորը մանրամասն ներկայացնում է համալսարանի տարեկան գործունեության արդյունքները բոլոր ուղղություններով՝ ներառյալ ուսումնամեթոդական աշխատանքները, ուսման առաջադիմությունը, ֆինանսատնտեսական գործունեությունը և այլն:

Նպատակների և առաքելության իրականացման արդյունքների արդյունավետ գնահատման համար անհրաժեշտ է շահակիցների մասնակցությունը ոչ միայն ռազմավարական ծրագրի մշակմանը, այլ նաև կարճաժամկետ որոշումների ընդունման գործընթացին: ՀՊՏՀ-ում գործում են որոշակի կառուցակարգեր, որոնք ապահովում են ուսանողների և դասավանդողների ներգրավվածությունը այդ որոշումների ընդունմանը և հետևաբար՝ ենթադրում նրանց կողմից գնահատման և վերահսկողության գործառույթի իրականացում: Մասնավորապես՝ ՀՊՏՀ կանոնադրության 13-րդ կետով սահմանվում է, որ համալսարանի կառավարման բարձրագույն մարմնում՝ խորհրդում պարտադիր պետք է ներգրավված լինեն պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողությունը, ինչպես նաև պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչները: Կանոնադրության 18-րդ կետի երկրորդ մասում նշվում է նաև, որ գիտական խորհրդի անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են: Սա, իհարկե, նշանակալից մասնակցություն է և իրականում ուսանողները կարողանում են իրենց էական ձայնն ունենալ ընդունվող որոշումներում: Սակայն ուսանողների և մյուս շահակիցների ներգրավվածությունը սահմանափակվում է միայն խորհուրդների և ռեկտորատի կազմում որոշ մասնակիցներ ունենալով: Չկան կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան հաշվի առնելու կոնկրետ հարցերի քննարկման ժամանակ շահակիցների առավել լայն զանգվածների կարծիքը: Դիցուք՝ հարկ է լինում հասկանալ, թե այս կամ այն փոփոխության վերաբերյալ ինչ կարծիք ունի ուսանողությունն առհասարակ (ոչ միայն խորհրդի անդամ 10-15 ուսանողը), կամ պրոֆեսորադասախոսական ամբողջ անձնակազմը: Այս առումով անհրաժեշտ է մշակել ընթացակարգեր, որոնք կսահմանեն համապատասխան հարցերի քննարկման շրջանակներում հարցումների անցկացման կառուցակարգերը:

Հասկանալու համար, թե որքանով են ռազմավարական ծրագրի իրագործումը և որակի ապահովման կառուցակարգերը նպաստում շարունակական բարելավմանը, վերլուծության են ենթարկվել մի շարք ցուցանիշների դինամիկան, որի աղբյուր են 2006-2012թթ. ՀՊՏՀ ուսումնագիտական աշխատանքների ու ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքները և հաջորդ տարվա բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները (հավելված 1.4): Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ համապատասխան ցուցանիշների գծով կայուն, բայց սահմանափակ տեմպերով բարելավում է տեղի ունեցել, ինչը, մի կողմից, վկայում է համալսարանի ղեկավարության հստակ և հետևողական քաղաքականության իրականացման, իսկ մյուս կողմից՝ առկա ներուժի ոչ լիարժեք օգտագործման մասին:

Չափանիշ 1-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար:	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ-ն ունի հստակ ձևակերպված և նորացված տեսլական և առաքելություն, որոնք համահունչ են ՈԱՇ-ին: 2. ՀՊՏՀ գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի առկայությունը: 3. ՀՊՏՀ գործող ռազմավարական նպատակներում շեշտվում է մասնագիտական ուղղվածությունը: 4. Ռազմավարական գործընթացներում արտաքին շահակիցների լայն ընդգրկումը: 5. Ռազմավարության իրականացման և գնահատման համար առկա փորձառու և մասնագիտացված աշխատակազմ: 6. ՀՊՏՀ դրական իմիջը և հստակ դիրքավորումը մասնագիտացման ոլորտում:	1. Աշխատաշուկայի մասնագիտացված՝ կառավարում, տնտեսագիտություն, ֆինանսներ և այլն, հատվածի որակյալ մասնագետներով ապահովելու գործում ՀՊՏՀ գերակշռող դիրքը ՀՀ-ում: 2. Արտաքին շահակիցների հետ համագործակցության ընդլայնումը: 3. Միջազգային և այլ արտաքին ֆինանսավորմամբ մասնագիտական կատարելագործման հնարավորություն: 4. Արտաքին ֆինանսավորման նոր աղբյուրներ: 5.ասարակությանը տրամադրվող մասնագիտացված ծառայություններ: 6.Հետազոտական աշխատանքների առևտրայնացում:
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման մոդելի բացակայություն: 2. Դասախոսների և ուսանողների մասնակցության արդյունավետության գնահատման կառուցակարգերի անկատարությունը: 3. Միջավայրային վերլուծության գործիքների ոչ լայն կիրառումը վերլուծության ընթացքում:	1. Որոշ նույն մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնող մուտքերի բազմաթիվությունը: 2. Աշխատաշուկայի պահաջարկի փոփոխությունը: 3. Ժողովրդագրական բացասական միտումները: 4. Օրենսդրական բացասական կարգավորումները և գերկարգավորումը: 5. Տնտեսական ճգնաժամը:

Բարելավման ուղղություններ

Անհրաժեշտ է մշակել.

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռազմավարական պլանը՝ հիմնվելով ներքին և արտաքին շահակիցների պահանջների և միջավայրերի վերլուծության վրա:
2. Ռազմավարական ծրագրի գնահատման հստակ կառուցակարգ,
3. Ընթացակարգեր, որոնք կսահմանեն համապատասխան հարցերի քննարկման շրջանակներում հարցումների անցկացման կառուցակարգերը: Հարցումները պետք է ապահովեն ամբողջ ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի, իսկ որոշ դեպքերում նաև արտաքին շահակիցների մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: Բուհի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ

ՀՊՏՀ-ն ունի որոշակիորեն ձևավորված կառավարման համակարգ: ՀՊՏՀ կառավարումն իրականացվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և ՀՀ Կառավարության 15.11.2012թ. N 1436-Ն որոշմամբ հաստատված ՀՊՏՀ կանոնադրությանը համապատասխան, ինքակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ: Համալսարանի իրավասությունն է ինքնակառավարման և կոլեգիալության սկզբունքով ինքնավարության իրականացումը:

Համալսարանում 2012թ. հունվարի 11-ից կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես՝ փոփոխվել են ստորաբաժանումների և մի շարք պաշտոնների անվանումները, դրանք համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետության էկո-

նոմիկայի նախարարի 25.01.2011թ. «Հայաստանի Հանրապետության զբաղմունքների դասակարգիչ հաստատելու մասին» N26-Ն հրամանի պահանջներին:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կողմից կառավարման և աշխատանքային տարբեր հարաբերությունների կարգավորման վերաբերյալ մշակվել և կենսագործվում են հետևյալ իրավական ակտերը.

1. ՀՊՏՀ ռեկտորի ընտրության ընթացակարգ (2006թ.),
2. ՀՊՏՀ պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի աշխատակարգ (2006թ.),
3. ՀՊՏՀ գիտական խորհրդի կանոնակարգ (2010թ.),
4. ՀՊՏՀ ներքին կարգապահական կանոններ (2010թ.),
5. ՀՊՏՀ կոլեկտիվ պայմանագիր (2010թ.),
6. մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ժամանակավոր կարգ (2008թ.),
7. որակի ապահովման խորհրդի, աշխատանքային խումբ ստեղծելու և ֆակուլտետային պատասխանատուներ հաստատելու մասին ՀՊՏՀ ռեկտորի 05.10.2012թ. N 173-Ա հրաման,
8. ՀՊՏՀ դեկանների ընտրության ընթացակարգ (2010թ.),
9. ՀՊՏՀ ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգ (2007թ.),
10. ՀՊՏՀ գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ (2008թ.),
11. ՀՊՏՀ դասախոսների վերապատրաստման հայեցակարգ (2009թ.),
12. կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններ և գործունեության կանոնակարգեր:

ՀՊՏՀ ռեկտորի 2012թ. նոյեմբերի 5-ի N 195-Ն հրամանով հաստատվել է «Համալսարանի ուսումնաօժանդակ կազմի որակավորման քննության անցկացման» կարգը, համաձայն որի՝ 2012 թվականի դեկտեմբերի 10-11-ը անցկացվել են ամբիոնների և ֆակուլտետների դեկանատների ուսումնաօժանդակ կազմի որակավորման քննություններ:

Վերը ներկայացված իրավական ակտերում նկարագրվում են համալսարանի կառավարման համակարգի յուրահատկությունները, աշխատակիցների միջև աշխատանքի բաժանումը, յուրաքանչյուր կառավարման օղակի պարտականությունները, գործողությունները և կառավարումը, ինչպես նաև որակի ապահովման գործընթացի կազմակերպումը, նպատակներն ու խնդիրները:

ՀՊՏՀ խորհրդի 2011թ. նոյեմբերի 3-ի N 4 նիստի որոշմամբ և ռեկտորի 06.12.2011թ. թիվ 134/4-Ա հրամանով հաստատվել է համալսարանի կազմակերպական կառուցվածքը՝ հետևյալ տեսքով.

Գծապատկեր 1

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպական կառուցվածքը



ՀՊՏՀ Եղեգնաձորի և Գյումրու մասնաճյուղերի կառուցվածքները ներկայացված են ստորև՝ ըստ կառավարման, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի.

<u>Գծապատկեր 2.</u> ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը



Գծապատկեր 3. ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի կազմակերպական կառուցվածք



ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի կառավարումն իրականացվում է ըստ ՀՀ օրենսդրության և ՀՊՏՀ, ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի կանոնադրության, ինքնակառավարման հիման վրա՝ կոլեգիալության և միանձնյա ղեկավարման սկզբունքների զուգակցմամբ, համալսարանի խորհրդի և ռեկտորատի գործառույթներով:

Արդեն իսկ մշակվել է և մինչև 2013թ. վերջը կներդրվի ՀՊՏՀ կառավարման ցանցային համակարգը, որը հնարավորություն կտա իրականացնելու ցանցային կառավարում և հավաքագրված առկա տեղեկատվության հիման վրա կայացնելու հիմնավոր որոշումներ:

Ներկայումս ՀՊՏՀ-ում մեծ ուշադրություն է դարձվում անձնակազմի իրական ներուժի գնահատմանը, կարիերայի աճին: Անցկացվում է աշխատողի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության, ընդհանուր անձնակազմի արդյունավետության վերահսկողություն, անձնակազմի պահանջմունքների պլանավորում:

ՀՊՏՀ-ն սեփականության իրավունքով և օգտագործման իրավունքով տիրապետում է գույքի, շենք-շինությունների: Ֆինանսական գործունեության համար հիմք են ծառայում ՀՊՏՀ կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության օրենքը հաշվապահական հաշվառման մասին (ՀՕ-515-Ն, 26.12.2002), միջազգային հաշվապահական ստանդարտները (ՆԻ-141-Ն առ 23.06.2010), «Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների համառոտ ուղեցույցը» (2004թ.), ինչպես նաև «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան և դրա կիրառման հրահանգ» ուղեցույցը (Երևան, 2012թ.):

Ֆինանսական միջոցները մեծ մասամբ ձևավորվում են վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձերից, պետական բյուջեից: Այս ֆինանսական ներհոսքերը կայուն են և վերահսկվում են բուհի կողմից: Բացի այդ, բուհը կարող է ֆինանսական միջոցներ ունենալ այլ աղբյուրներից՝ դրամաշնորհներ և այլն: Այս ֆինանսական միջոցները հիմք են դառնում ռեսուրսային բազայի համար և ծախսերը պլանավորվում են՝ ելնելով բուհի ֆինանսական կարողություններից:

Հիմք ընդունելով սահմանված նպատակները և ուսումնասիրելով ՀՊՏՀ (ներառյալ առաջադրվոծ Գյումրու և Եղեգաձորի մասնաճյուղերը) 2006-2012թթ. բյուջեի նախագի հիմնական ցուցանիշները, դրանց կատարման արդյունքներն ու ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև համալսարանի կանոնադրությունը և ֆինանսական աուդիտի նշանակման կանոնակարգ ու արդյունքները, կարող ենք փաստել, որ ծախսային հոդվածները հիմնականում բխում են առաջադրված պահանջներից: 2006-2012թ-ն ընկած ժամանակահատվածում ծախսերի նկատմամբ եկամուտները գրազանցել են, ինչպես նաև նախահաշվային ցուցանիշները կատարվել են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Բուհի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը

ՀՊՏՀ կառավարման համակարգը, գործող կանոնադրությունն ու կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են տալիս ընդգկվելու տարբեր մակարդակների կառավարման օղակների կազմերում և անմիջականորեն մասնակցելու

թե՛ բուհի կառավարման գործընթացին, թե՛ հարցերի քննարկմանը և դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը: Այլ կերպ՝ համալսարանի ներքին շահակիցներն անմիջականորեն մասնակցություն են ունենում կառավարման տարբեր գործընթացներին, ինչը թափանցիկ և հասկանալի է դարձնում բուհի գործունեությունը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կոլեգալ կառավարման մարմինը խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Կառավարման խորհուրդը ձևավորվում է ՀՀ Կառավարության սահմանած կարգով՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից: Խորհրդի անդամների թիվը 32 է: Խորհրդում ընդգրկված են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատակիցների, ուսանողների և ասպիրանտների, հիմնադրի ներկայացուցիչներ՝ պետական պաշտոնյաներ, լիազոր մարմնի՝ կրթության, գտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված մասնագետներ:

Գտական խորհրդի անդամների թիվը և կազմը սահմանվում են համալսարանի կանոնադրությամբ (չի կարող գրազանցել 60-ը): Համալսարանի գտական խորհրդի կազմում ընդգկվում են ռեկտորը (նախագհ), պրոռեկտորները, գտական քարտուղարը, մասնաճյուղի տնօրենը, ռեկտորի խորհրդականը, ուսումնամեթոդական բաժնի պետը, արհմիութենական կազմակերպության նախագահը, ստորաբաժանումների ղեկավարները՝ ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները: Գիտխորհրդի կազմում ռեկտորի նշանակմամբ ընդգկվում են նաև կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարներ, առանձին դասախոսներ և գիտաշխատողներ: Գտական խորհրդի անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են՝ ներառյալ ուսանողական խորհրդի նախագահը, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ ուսանողական խորհուրդը:

Ֆակուլտետի խորհրդի կազմը, դրա ձևավորման և գրծունեության կարգը սահմանվում են ֆակուլտետի կանոնակարգով: Ֆակուլտետի խորհրդում ընդգրկվում են դեկանը (խորհրդի նախագահ), դեկանի տեղակալը(ները), ֆակուլտետի խորհրդի քարտուղարը, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, երկարամյա աշխատանքային փորձ ունեցող պրոֆեսորներ, արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչ: Ֆակուլտետի խորհրդի կազմի 25%-ը համալրվում է ուսանողներով:

Ֆակուլտետային խորհուրդներում անդամների թվի 55%-ից ավելին ամբիոնների վարիչներն ու երկարամյա աշխատանքային փորձ ունեցող պրոֆեսորներ ու դոցենտներ են: Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ղեկավարության, աշխատողների, ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների և հայցորդների համար:

Ֆակուլտետներում ուսանողները մասնակցում են նաև դասընթացների ընտրության գործընթացին, ինչպես նաև նրանց շրջանում անցկացվում է հարցում՝ դասախոսների գնահատման համար:

Բուհի կառավարման խորհրդի և գիտական խորհրդի ընդունած որոշումները հետագայում ներկայացվում են ֆակուլտետների խորհուրդներում, ամբիոններում: Բուհի կառավարման գործընթացի բարելավման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում կատարվում են առաջարկություններ՝ դրանով իսկ ապահովելով աշխատանքի արդյունավետություն և հետադարձ կապ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Բուհը իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ կառուցակարգեր

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, ելնելով գործունեության բնույթից, իրականացվում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում, որը բխում է ՀՊՏՀ առաքելությունից:

Երկարաժամկետը ռազմավարական պլանավորումն է՝ առաքելության, նպատակների, զարգացման ուղղությունների հաստատումը և այլն: ՀՊՏՀ առաքելության և առհասարակ գործունեության հիմք են ծառայում Բոլոնիայի գործընթացի 10 սկզբունքները, որոնք որդեգրել է Հայաստանի Հանրապետությունը, «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-246-Ն՝ ընդունված 23.06.2011): Ռազմավարական պլանավորումը 5 տարվա համար է, քանի որ ավելի երկար ժամանակահատված ընտրելը անիմաստ է և ոչ իրատեսական՝ հաշվի առնելով ոլորտի արագընթաց փոփոխությունները: Հաշվետու 2009-2013թթ. համար գործել(ում) են 2 ռազմավարական փաստաթղթեր. «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները 2006-2011թթ.» և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2016թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը» (չափանիշ I):

Երկարաժամկետ պլանավորման բաղադրատարր կարելի է համարել նաև ՀՊՏՀ առաքելությունից բխող գիտահետազոտական գործունեության պլանավորման ուղղությամբ մշակված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգը» (հավելված 6.1):

ՀՊՏՀ-ում իրականացվում է միջնաժամկետ պլանավորում գիտության եռամյա ծախսերի նախահաշվի ընդունված ձևաչափով, որը ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Կարճաժամկետ գործառնական պլանավորումն իրականացվում է ՀՊՏՀ գործունեության բոլոր ուղղություններով՝ ֆինանսական, մարդկային ռեսուրսների, գույքի, կրթական ծրագրերի և այլն, ինչը հստակ կերպով արտահայտվում է ռեկտորի տարեկան հաշվետվություններում:

Պլանավորման վերը նշված երեք մակարդակների համար ՀՊՏՀ-ում գործում են մշակման, իրականացման և գնահատման հստակ կառուցակարգեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Բուհը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա

Բուհի զարգացման ռազմավարական ծրագրում ներառված նպատակների իրականացման արդյունքների գնահատման կառուցակարգերից է ռազմավարական ծրագրի կազման տրամաբանությունը: Մասնավորապես՝ ծրագրում հստակեցվում են կատարման ժամկետները, պատասխանատու ստորաբաժանումները: Դա հնարավորություն է տալիս վերահսկելու նպատակների իրականացման ընթացքը և անհրաժեշտության դեպքում, շեղումները վերացնելու նպատակով, կատարելու համապատասխան ճշգրտող գործողություններ:

ՀՏՊՀ-ն մշտապես կատարում է իր գործունեության վրա ազդող առանցքային գործոնների ուսումնասիրություն և վերլուծություն: Ընդհանրապես, ամբողջ կառավարումը կենտրոնանում է պլանավորման գործառույթի շուրջ, որը իրականացվում է վերից վար սկզբունքով: Կանոնադրության և զարգացման ռազմավարական ծրագրից ածանցվում են ՀՊՏՀ խորհրդի, գիտխորհդի, այնուհետև նաև ռեկտորատի որոշումները, որոնք հետագայում փոխանցվում են ֆակուլտետային և ամբիոնային մակարդակներ: Այս ամբողջ շղթայի յուրաքանչյուր օղակում համապատասխան մասնագետները, մինչև որոշման ընդունումը, հավաքագրում են համապատասխան տեղեկատվություն և դրանք վերլուծում մինչև այս կամ այն որոշման ընդունումը: Այստեղ հիմնական բացթողումն այն է, որ գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացը գերակշռաբար կրում է իրավիճակային բնույթ և կանոնակարգված չէ նախապես մշակված ընթացակարգով:

ՀՊՏՀ զարգացման ռազմավարական ծրագրում հիմք է ընդունվել համալսարանի զարգացման փորձը, ստեղծված գիտակրթական ներուժը, նյութատեխնիկական բազան, ՀՀ տնտեսական ու սոցիալական զարգացմանը կրթական ծառայություններով ու գիտական մշակումներով նպաստելու հույժ կարևորությունը, ինչպես նաև բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ինտեգրվելու անհրաժեշտությունը (տե՛ս «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները 2006-2011թթ.»):

Վերոնշյալ ռազմավարական ծրագրով նախատեսվել են՝ կրթության որակի էական բարելավման համար կրթական չափորոշիչների և ուսուցման տեխնոլոգիաների ու բովանդակության արդիականացում, գործարար խաղերի, իրավիճակային վերլուծությունների լայն կիրառություն, ինչպես նաև ուսումնական գործընթացում հիմնախնդրային դասախոսությունների կիրառում:

Հատկանշական է, որ ռազմավարական ծրագիրն առավելապես կարճաժամկետ ծրագրերի ամբողջություն է, այլ ոչ երկարաժամկետ նպատակների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բաշխման ծրագիր: Բնականաբար, նախապես հինգ տարվա կտրվածքով կարճաժամկետ ծրագրեր սահմանելը բավականին դժվար է. հնարավոր չէ ապագայի համար կատարել գործունեության վրա ազդող գործոնների ամբողջական վերլուծություն և որոշումներ կայացնել դրանց հիման վրա: Այս

առումով, կարծում ենք, որ ռազմավարությունը առավելապես պետք է նախանշի զարգացման գերակա ուղղությունները, իսկ տարեկան ծրագրերը պետք է կազմվեն տվյալ տարվա համար առավել էական իրավիճակային գործոնները ուսումնասիրելու արդյունքում:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ բուհի գործունեության վրա ազդող գործոնները մշտապես դիտարկվում և քննարկվում են նիստերի ընթացքում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. Քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունը կատարվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում)

ՀՊՏՀ-ում քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության, կառավարման առանձնահատկությունների և իրականացման կառուցակարգերը ներկայացված են «ՀՊՏՀ որակի ներքին ապահովման հայեցակարգ» և «ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր», ինչպես նաև «ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմներ» հայեցակարգային փաստաթղթերում:

ՀՊՏՀ քաղաքականությունը կոչված է աջակցելու համալսարանին՝ իր առաքելությունն ու ռազմավարական նպատակներն արդյունավետ կերպով իրականացնելու և կրթության որակն ապահովելու համար: ՀՊՏՀ-ում պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման սկզբունքով մշակված են կրթական ծրագրերի կազման, հաստատման և իրականացման ընթացակարգերը, ուսումնառության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը, դասախոսական կազմի հավաքագրման, ընտրության, մասնագիտական զարգացման և առաջխաղացման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես նաև հասարակական պատասխանատվության, հրապարակայնության, հաշվետվողականության և որակի ապահովման հետ կապը: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը մշտապես խրախուսում և ողջունում է հետադարձ կապը իր ներքին և արտաքին բոլոր շահակիցների հետ՝ առաջարկությունների, գոհունակության արտահայտման, բողոքների և գանգատների տեսքով: Եվ դրական, և բացասական հետադարձ կապը վերլուծվում և օգտագործվում է որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և հետագա զարգացումն ապահովելու համար: ՀՊՏՀ-ն ապահովում է հետադարձ կապի բոլոր դրսևորումների նախնական մշակումը և, եթե հարկավոր է, պատշաճ արձագանքումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Բուհում գործում են մասնագիտական կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող կառուցակարգեր

Գործող մասնագիտական ծրագրերի արդյունավետության գնահատման ձևերն ու կառուցակարգերը արդեն իսկ ներկայացված են չափանիշ 3-ի «ե» կետում, իսկ այլ գործընթացներին առնչվող տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող կառուցակարգերը՝ չափանիշ 1-ի «գ» կետում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Բուհում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին թարմ, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական ու որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող կառուցակարգեր

ՀՊՏՀ-ում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների թափանցիկությունը ապահովելու ուղղությամբ բազմաթիվ աշխատանքներ են կատարում:

Գործող կրթական ծրագրերի և դրանց համապատասխան շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը տեղակայված է ՀՊՏՀ պաշտոնական կայքում (www.asue.am): Բացի այդ, որակավորման և մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությամբ տեղեկության տարածումը իրականացվում է նաև դիմորդներին տրվող տեղեկատվության ձևով:

Տեղեկացվածության և տեղեկատվության հրապարակումները գնահատելու ուղղությամբ ՀՊՏՀ-ում, ինչպես նաև շրջանավարտների շրջանում իրականացվում են պարբերական հարցումներ: Որպես տեղեկատվության գնահատման մեթոդ է կիրառվում նաև Ֆեյսբուք սոցիալական կայքում տեղակայված ՀՊՏՀ պաշտոնական էջի տեղեկատվության մեկնաբանությունների հատվածի հարց ու պատասխանը:

Չափանիշ 2-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 3 տարվա համար:	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ-ն ունի հստակ ձևավորված կառավարման համակարգ, որի գործունեությունը կանոնակարգվում է համապատասխան ստորաբաժանումների կանոնադրություններով: 2. ՀՊՏՀ-ում որոշումները կայացվում են վերլուծությունների հիման վրա: 3. ՀՊՏՀ կազմակերպական կառուցվածքը փոխվել է՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները և պահանջները (օրինակ՝ կազմակերպական կառուցվածքում ավելացել են Որակի ապահովման բաժինը և Կարիերայի և մարքեթինգի կենտրոնը): 4. Ներքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներին, մասնավորապես ուսանողների: 5. Փորձառու և բանիմաց աշխատակազմի առկայությունը և նրանց կայունությունը: 6. Հասարակության հետ կապերի ստորաբաժանման առկայությունը: 7. Ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար	1. Եվրոպական առաջատար համալսարանների հետ փորձի փոխանակում և համեմատական վերլուծություններ միջազգային ծրագրերի, մասնավորապես՝ Տեմպուսի շրջանակում: 2. Մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համագործակցությունը: 3. Արտաքին շահակիցների մասնակցությունը ՀՊՏՀ կառավարման գործընթացներին և հետադարձ կապի ընդլայնումը:

ՀՊՏՀ-ում առաջին անգամ իրականացվում է «Կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների հետազոտություն և զարգացում» ուղղությամբ հետազոտություն: 8. Որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը:	
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Երկարաժամկետ կառավարման և գնահատման կառուցակարգերի, գործիքակազմի և փաստաթղթավորման անկատարությունը: 2. Կառավարման մարմինների գործունեության գնահատման կառուցակարգերի անկատարությունը: 3. Գործընթացների մշտադիտարկման քաղաքականության և ընթացակարգերի և հստակ կառուցակարգերի իրականացման փորձի պակասը: 4. Հետադարձ կապի ապահովման կառուցակարգերի լիարժեք պարբերաշրջանային գնահատման փորձի պակասը: 5. Ուսանողների հարցումների արդյունքների մշակման և արձագանքման ոչ լիարժեք կառուցակարգը: 6. Հաշվետվողականության գնահատման գործիքների և կառուցակարգերի բացակայությունը: 7. Որոշումների կայացման արդյունավետության նպատակով համապարփակ տվյալների բազայի բացակայությունը:	1. Ֆինանսական մուտքերի հնարավոր նվազում՝ կապված արտաքին գործոնների հետ, մասնավորապես ժողովրդագրական բացասական միտումները: 2. Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխությունները:

Բարելավման ուղղություններ

1. Որոշումների կայացման արդյունավետության նպատակով համապարփակ տվյալների բազայի ստեղծում:
2. Ավելի համապարփակ վերլուծել արտաքին և ներքին գործոնները՝ հատկապես նոր ռազմավարական պլան մշակելիս:
3. ՀՊՏՀ կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու համար («GOVERN» ծրագիր) 2013-2016թթ. ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում իրականացվելու է «Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը»

բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակարգի մշակում:

4. ՀՊՏՀ կառավարման համակարգում ընդգրկված դասախոսների և ուսանողների մասնակցության արդյունավետության գնահատման համար մշակել ավելի հստակ կառուցակարգեր:

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունակությանը և միջազգայնացմանը

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին և ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների՝ մանրամասն նկարագրված են

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, որպես բարձրագույն մասնագիտական կրթության տնտեսագիտական մասնագիտությունների թողարկման բնագավառում մասնագիտացված համալսարան, ՀՀ Կրթության և գիտության նախարարության հաստատած բոլոր տնտեսագիտական մասնագիտությունների գծով առաջարկում է կրթական ծրագրեր կրթական բոլոր մակարդակներում (բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում), ինչը համահունչ է համալսարանի առաքելությամբ և ռազմավարական նպատակներով սահմանված գործունեության հիմնական ուղղություններին: Համալսարանի կրթական ծրագրերը միտված են տնտեսագիտության, կառավարման, բիզնեսի, ֆինանսների, մարքեթինգային տեխնոլոգիաների և մյուս բնագավառներում համաշխարհային լավագույն նվաճումներ պարունակող իրական գործող բիզնես-կառույցների և ուսումնաարտադրական մոդուլների պայմաններում ժամանակակից տնտեսության պահանջարկին համապատասխան տնտեսագետ մասնագետների պատրաստմանը: ՀՊՏՀ 6 ֆակուլտետներում, Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում իրականացվում է 79 կրթական ծրագիր, որոնցից 27-ը՝ բակալավրի (17 մասնագիտության և 10 մասնագիտացման գծով), 46-ը մագիստրոսի (11 մասնագիտության և 36 մասնագիտացման) և 6-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում: Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերը բնույթով գիտակրթական են և ուսանողներին հնարավորություն են ընձեռում ներգրավվելու ՀՊՏՀ-ում իրականացվող հետազոտություններում, ինչն իբրև գերակա նպատակ սահմանված է ինչպես 2011 թվականին հաստատված «ՀՊՏՀ զարգացման հայեցակարգային դրույթներում» (չորրոդ՝ «Գիտական գործունեության զարգացումը և գիտական ներուժի մեծացումը» բաժնի երրորդ կետը), այնպես էլ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կանոնակարգային դրույթներում: Պետք է նշել, որ այս մոտեցումը նույնպես համապատաս-

խանում է ՀՊՏՀ-ի՝ իբրև գիտահետազոտական հաստատության առաքելությանն ու ռազմավարական նպատակներին: Հիմնադրման օրվանից ՀՊՏՀ-ում խթանվել է տնտեսագիտության տարբեր ուղղությունների զարգացումը: Տնտեսագիտական մի շարք մասնագիտությունների և մասնագիտացումների ուղղությամբ մասնագետների պատրաստման գործում ՀՊՏՀ-ն միակն է ՀՀ-ում, իսկ պատրաստվող տնտեսագետ կադրերի (շրջանավարտների) թվով ՀՀ կրթական ծառայությունների շուկայի առաջատարն է:

Պետք է նշել, որ ՀՊՏՀ-ում կրթական ծրագրերի մատուցումն իրականացվել է երկու փուլով՝ հնգամյա կրթությամբ միաստիճան համակարգով և երկաստիճան կրթական համակարգով՝ բակալավրի ու մագիստրոսի որակավորումներով: Մասնավորապես՝ 2003-2004թթ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության հաստատած «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները» (2001թ.) և ՀՀ ԿԳՆ հաստատած չափորոշիչների ձևաչափը (2003թ.) ՀՊՏՀ բոլոր մասնագիտությունների համար մշակվել են համապատասխան կրթական չափորոշիչներ, որոնցով էլ համալսարանն առաջնորդվել է կրթական ծրագրերն իրականացնելիս: Այնուհետև, հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ կողմից ՀՀ-ում բարձրագույն տնտեսագիտական մասնագիտությունների ցանկի վերանայման արդյունքները (2007թ.), ՀՀ Կառավարության «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշումը (2005), ինչպես նաև 2006/2007 ուստարվանից սկսած՝ ՀՊՏՀ անցումը բակալավրի և մագիստրոսի որակավորումներով երկաստիճան համակարգի, ՀՊՏՀ մասնագետները 2007-2008թթ. ժամանակահատվածում մշակվել են ՀՀ-ում հաստատված բոլոր տնտեսագիտական մասնագիտությունների (ինչպես նաև համալսարանի մատուցած առանձին մասնագիտացումների) բակալավրական և մագիստրոսական կրթության համապատասխան չափորոշիչները, որոնք ՀՀ ԿԳՆ կողմից սահմանվել են իբրև համապատասխան տնտեսագիտական մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներ, և համալսարանի կրթական հետագա գործընթացը կառուցվել է՝ հիմքում ունենալով այդ չափորոշիչները: Հատկանշական է, որ երկաստիճան համակարգի չափորոշիչների մշակմամբ համալսարանը նպատակ է հետապնդել հստակեցնելու չորսամյա և վեցամյա կրթական ծրագրերից դեպի աշխատաշուկա ելքերի ապահովումը, որի համատեքստում մատնանշվել են բակալավրի և մագիստրոսի որակավորումներով շրջանավարտների կարողությունների, կրթական ծրագրի վերջնարդյունքների շրջանակը, շրջանավարտների գործունեության բնագավառներն ու հետագա ուսումնառության հնարավորությունները:

2006թ. ՀՊՏՀ գիտական խորհուրդը հաստատել է «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգին անցնելու նախապատրաստական աշխատանքների որոշումը»՝ սահմանելով կրթական գործընթացում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցը, նախատեսելով աստիճանական անցում կրեդիտային հենքով ուսումնառության կազմակերպմանը: Որոշվել է կրեդիտային համակարգը ներդնել նախ բակալավրի առկա կրթական ծրագրում (2007-2008 ուստարվանից), այնուհետև մագիստրոսի (առկա և հեռակա) և բակալավրի (հեռակա) կրթական ծրագրերում (2010-2011 ուստարվանից):

Բակալավրիատում և մագիստրատուրայում (բոլոր կրթաձևերում) ուսուցումը կրեդիտային համակարգով կազմակերպելու նպատակով մշակվել և ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից տարբեր ժամանակահատվածներում քննարկվել և հաստատվել են «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի պայմաններում գնահատման նոր սկզբունքների ներդրման կարգը» (2006թ.), «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի պայմաններում գիտելիքների գնահատման, ամփոփման և փաստաթղթային շրջանառության կանոնակարգը» (2006թ.) «ՀՊՏՀ գիտելիքի գնահատման նոր համակարգի պայմաններում ուսանողի անհատական աշխատանքի կազմակերպման և գնահատման ընթացակարգը» (2006թ.) «Բակալավրիատի կրեդիտային ուսումնական պլանների բարեփոխման նորմատիվները» (2007թ.), «Կրեդիտային հենքով ուսումնական պլանի մոդելը» (2007թ.) «Ուսանողների հաճախումների, անհատական և արտալսարանային աշխատանքի կազմակերպման և գնահատման կանոնակարգը» (2009թ.), «Պրակտիկայի բազմագործոնային գնահատման կարգը» (2009թ.), «Բացակայությունների լրացման կարգը», «ՀՊՏՀ-ում գիտելիքների համակարգչային ստուգման գործընթացի ընթացակարգը» (2009թ.), «ՀՊՏՀ-ում կրեդիտային համակարգով մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների գնահատման կարգը» (2010թ.), «ՀՊՏՀ-ում կրեդիտային համակարգով հեռակա ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների գնահատման կարգը» (2010թ.): Մյուս կողմից, համալսարանի գիտական խորհրդի ուշադրության կենտրոնում է եղել նաև կրեդիտային համակարգին առնչվող նորմատիվային փաստաթղթերի, կրթական ծրագրերի և մեթոդական փաստաթղթերի արդյունավետության խնդիրը, և նախապես սահմանված մոտեցումներում, բարելավման կամ արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով, կատարվել են բազմաթիվ փոփոխություններ: Բացի այդ, մշակվել և հաստատվել են կրեդիտային հենքով արտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման և գնահատման, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության ներկայացման կարգերը, ընտրովի դասընթացների կազմակերպման ընթացակարգերը, վերամշակվել և կրեդիտային համակարգի պահանջներին են համապատասխանեցվել առարկայական դասընթացների ծրագրերը և մեթոդական մոտեցումները: Երկաստիճան համակարգին անցման և ուսումնական գործընթացի կրեդիտային հենքով կազմակերպման արդյունքում վերակառուցվել են նաև ՀՊՏՀ կրթական ծրագրերը, որի նպատակը ծրագրերի մոդուլացումն էր և արտահայտումը ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքն արտահայտող ECTS կրեդիտներով: Արդեն 2010-2011 ուսումնական տարվանից սկսած՝ ՀՊՏՀ բոլոր մակարդակների ծրագրերը բոլոր կրթաձևերում կազմակերպվել են կրեդիտային հենքով:

Բոլոր կրթաձևերում և կրթական ծրագրերում, կրեդիտային համակարգի ներդրմանը և բացահայտված թերությունների շտկմանը զուգընթաց, համալսարանում չեն դադարել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նեղ մասնագիտացումներով կրթական ծրագրերի մշակման և ներդրման աշխատանքները, որոնք իբրև ռազմավարական նպատակներ սահմանված են եղել ինչպես «Երևանի պետական տնտեսագիտա-

կան ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները 2006-2011թթ.» փաստաթղթում (հավելված 1.2, բաժին 1, կետ 3), այնպես էլ 2011թ. հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի զարգացման հայեցակարգի դրույթներ» -ում (բաժին 1, ռազմավարական նպատակներ, կետ 1):

2012-2013 ուսումնական տարվանից ՀՀ խոշոր գործատուների հետ համատեղ պայմանագրերի հիման վրա, մագիստրոսական համակարգում ներդրվել են հետևյալ պիլոտային ծրագրերը՝

1. Հարկային վարչարարություն,
2. Մաքսային վարչարարություն,
3. Պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում,
4. Բանկային գործունեության կազմակերպում,
5. Կոլեկտիվ ներդրումային համակարգերի կառավարում,
6. Տնտեսական գործունեության բնապահպանական փորձաքննություն,
7. Անշարժ գույքի գնահատում,
8. Պետական գույքի կառավարում:

2011թ. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի զարգացման հայեցակարգի դրույթներով» սահմանված մասնագետների պատրաստման բովանդակության փոփոխության և որակական նորացման պահանջին համապատասխան, 2012-2013 ուսումնական տարվանից գործում են «Մարքեթինգային հետազոտություններ» և «Մարքեթինգային հաղորդակցություններ» մասնագիտացումների, իսկ 2013-2014 ուսումնական տարվանից՝ «Կրթության կառավարում» մասնագիտացման՝ ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված, լիովին նոր պահանջներով կազմված կրթական ծրագրերը: Մասնավորապես՝ «Կրթության կառավարում» մասնագիտացման կրթական ծրագրի մշակումն իրականացվել է «Բարձրագույն կրթության կառավարման մագիստրոսական ուսումնական ծրագիր կրթական վերափոխումներ իրականացնող առաջնորդների պատրաստման նպատակով ՏԵՄՊՈՒՍԻ «ՄԱՀԱԹՄԱ» ծրագրի շրջանակներում. կազման ընթացքում բենչմարքինգ է իրականացվել գործընկեր համալսարանների հետ՝ “Bath Spa University” (Մեծ Բրիտանիա), “Middlesex University” (Մեծ Բրիտանիա), “Masaryk University” (Չեխիա), “International Black Sea University” (Վրաստան) և այլն:

Կրթական ծրագրերի վերլուծության և արդյունավետ կիրառման հնարավորությունների ուղենշման, ինչպես նաև կրթական գործընթացի կազմակերպման միջազգային փորձի ուսումնասիրության, ՀՊՏՀ կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների զարգացման, մեթոդաբանական ուղեցույցի մշակման և հրապարակման նպատակով ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրում 2013 թվականին հաստատվել է «Կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների հետազոտություն և զարգացում» ուղղությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Բուհն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը

ՀՊՏՀ-ում, կրեդիտային հենքով կրթական գործընթացի կազմակերպման և կրթական ծրագրերի բարեփոխումներին, ուսումնական պլանների և դասընթացների առարկայական ծրագրերի վերանայմանը զուգահեռ, առաջադրվեցին դասավանդման և ուսումնառության ավանդական փորձը վերանայելու և նորարարական մոտեցումներ ներդնելու պահանջներ (դասավանդման մեթոդների ընտրությունն իրականացնում են մասնագիտական ամբիոնները): Մասնավորապես՝ 2006-2011թթ. համալսարանի զարգացման գերակայությունների 1-ին բաժնի 7-րդ և 8-րդ կետերով, կրթության որակի էական բարելավման նպատակով սահմանվել է գործնական և սեմինար պարապմունքների ընթացքում թեստերի, գործարար խաղերի, իրավիճակային վերլուծության լայն կիրառություն (նպատակ ունենալով ամրապնդելու տեսական գիտելիքները, զարգացնելու ուսանողների հմտությունները և գործնական կարողությունները): Առաջարկվել է կարևորել և կիրառել հիմնախնդրային դասախոսությունների մեթոդը:

Ներկայումս ՀՊՏՀ-ում առկա կրթական և դրանց առանձին բաղադրիչ առարկայական դասընթացների ծրագրերում ներկայացված է, որ մասնագիտական տեսական գիտելիքների ձեռքբերման համար համալսարանում կիրառվում են դասախոսությունները, սեմինար պարապմունքները և դասախոսի ուղղորդմամբ՝ հանձնարարված գրականության շրջանակներում ուսանողի ինքնուրույն աշխատանքը (թարգմանություններ, մշակումներ), իսկ գործնական, մասնագիտական գիտելիքների ձեռքբերման համար կիրառվում են գործարար խաղերը, խմբային հետազոտական աշխատանքները, որոշ մասնագիտական կամ մասնագիտացման առարկաներից ուսանողների պարտադիր անհատական աշխատանքները, պրակտիկաների կազմակերպումը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստումը և այլն: Ընդհանրական կարողությունների ձեռքբերման համար առաջարկվում են խմբային աշխատանքներ, մշակումներ և դրանց շնորհանդեսներ:

ՀՊՏՀ-ում դասախոսների աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է հիմնականում քննությունների ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների վերլուծությամբ: Գնահատման գործիք է նաև ամբիոնային պաշտոնների մրցութային ընտրության կամ վերընտրության ընթացքում տարբեր կուրսերի ուսանողների կողմից տվյալ դասախոսի դասավանդման որակի, մեթոդի և գնահատման մոտեցումների հարցաշարի լրացումը 1-5 բալանոց սանդղակով (արդյունքները կարող են ազդել համալսարանի և դասավանդողի միջև երկարաժամկետ պայմանագիր կնքելու որոշման վրա):

Դասավանդման ձևերից և որակից ուսանողների բավարարվածության գնահատման նպատակով ՀՊՏՀ որակի բաժնի և ինքնավերլուծություն իրականացնող փորձագիտական խմբերի կողմից 2011-2012 և 2012-2013 ուսումնական տարիների ընթացքում

ուսանողների շրջանում իրականացվել են հարցումներ (ներառելով համալսարանի բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների անվճար և վճարովի համակարգերում սովորողների 10%-ին): Հարցումների արդյունքում ուսանողների զգալի մասը դասավանդման մեթոդները գնահատել են «լավ», որի արդյունքում հարցումները թույլ են տվել բացահայտելու նաև առանձին ամբիոնների և դասախոսների ձեռքբերումները և թերացումները, որոնց մասին խոսվել է ՀՊՏՀ ռեկտորի 2012 թվականի ամփոփ հաշվետվության մեջ:

Դասավանդման որակի բարելավման խնդիրն անընդհատ գտնվում է ՀՊՏՀ գիտական խորհրդի և ռեկտորատի ուշադրության կենտրոնում, և այս ուղղությամբ տարեցտարի արձանագրվում է որոշակի առաջընթաց, սակայն համալսարանում դեռևս մշակված չեն դասավանդման գնահատման մեթոդներ:

Ուսումնառության արդյունքներ-դասավանդման մեթոդներ-ուսումնառության մեթոդներ կապը ցուցադրող աղյուսակը տե՛ս հավելված 3.2-ում:

Մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխանությունը ցույց տվող աղյուսակը տե՛ս հավելված 3.3-ում:

Ուսումնառության արդյունք-գնահատման մեթոդ համապատասխանությունը ցույց տվող աղյուսակը տե՛ս հավելված 3.4-ում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Բուհն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների և ապահովում է ակադեմիական ազնվությունը

Երկաստիճան կրթական համակարգին անցման արդյունքում ՀՊՏՀ-ում վերանայվել են նաև ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման ձևերը: Պետք է նշել, որ 2007-2013թթ. գնահատման սկզբունքները և ուսանողի վերջնական գնահատականի ձևավորման բաղադրիչների կշիռները, ինչպես նաև գիտելիքների ստուգման կառուցակարգերը որոշակի փոփոխությունների են ենթարկվել, որոնց նպատակը եղել է ուսումնառության արդյունքների գնահատման համակարգում նկատված բացթողումների վերացումը, գնահատման հիմքում ուսանողակենտրոն մոտեցման արմատավորումն ու գնահատման համակարգի արդյունավետության բարձրացումը: Ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում կիրառվում է գնահատման 100 միավորանոց սանդղակը, սակայն բակալավրիատում և մագիստրատուրայում գնահատման բազմագործոնային համակարգի տարրերն ունեն տարբեր կշիռներ:

Նախնական փուլում բակալավրիատում գնահատման սկզբունքները տարբերակվել են միայն ստուգարքով և քննությամբ ավարտվող մոդուլների համար: Քննությամբ ավարտվող բոլոր մոդուլների համար, իբրև պարտադիր պահանջ, սահմանվել են անհատական աշխատանքները, ընթացիկ ակտիվությունը և հաճախումները, միջանկյալ ստուգումը և ամփոփիչ ստուգումը: Ստուգարքով ավարտվող մոդուլների դեպքում միջանկյալ և ամփոփիչ ստուգումների կշիռները մնացել են անփոփոխ, իսկ անհատական աշխատանքի կշիռը միացվել է ընթացիկ ակտիվությանը: Ուսանողների գիտելիք-

ների ստուգման համակարգի արդյունավետության խնդիրը միշտ էլ եղել է ՀՊՏՀ ֆակուլտետային խորհուրդների, ռեկտորատի և գիտական խորհրդի ուշադրության կենտրոնում, ինչի արդյունքում 2011-2012 ուստարվանից սկսած, հաշվի առնելով անհատական աշխատանքով ավարտվող մոդուլների մեծ թիվը և, որպես հետևանք, ուսանողների կողմից անհատական աշխատանքների ոչ պատշաճ կատարման խնդիրները, մտցվել է մեկ ուսումնական տարվա ընթացքում անհատական աշխատանքներով մոդուլների սահմանափակում: Ներկայումս կրթական ծրագրում առկա են ստուգարքով կամ քննությամբ ավարտվող, սակայն անհատական աշխատանք պարունակող և չպարունակող մոդուլներ: Ուսանողների գնահատման բազմագործոնային համակարգում վերջին փոփոխությունները կատարվել են 2011/2012 ուսումնական տարվա ավարտին և սկսել են գործել 2012/2013 ուսումնական տարվանից: Բակալավրիատում ներկայումս գնահատման բազմագործոնային համակարգի տարրեր են առաջին և երկրորդ միջանկյալ ստուգումները, ուսանողների ընթացիկ ավտիվությունը և հաճախումները, անհատական աշխատանքները, եթե այդպիսիք նախատեսված են մոդուլով (հավելված 3.1): Մագիստրատուրայում ևս մոդուլները բաժանված են ստուգարքով կամ քննությամբ ավարտվող, սակայն անհատական գիտահետազոտական աշխատանք պարունակող և չպարունակող մոդուլների:

Հատկանշական է, որ կրթական գործընթացի բոլոր մասնակիցների համար, 2007-2008 ուսումնական տարվանից սկսած, մշակվել և հրատարակվել են ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգին, գնահատման սկզբունքներին, անհատական աշխատանքների պատրաստմանը և պաշտպանությանը, ինչպես նաև քննությունների բողոքարկման կարգին առնչվող մեթոդական ձեռնարկներ, որոնք ուսանողներին և դասախոսներին են բաժանվել յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում: Ուսանողների գիտելիքի ստուգման ձևերի ընտրության հարցում ամբիոններին տրված է ակադեմիական ազատություն, ինչը ենթադրում է, որ դրանք, ելնելով իրենց դասավանդած մոդուլների առանձնահատկություններից, ինքնուրույն են ընտրում գիտելիքի ստուգման եղանակը, ինչի մասին համապատասխան զեկուցագրով և հիմնավորմամբ տեղեկացնում են համապատասխան ստորաբաժանումներին:

Հավելված 3.5-ում ներկայավցած է այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնց հետ համալսարանն ունի ուսանողների և դասավանդողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունակությանը, միջազգայնացմանը

2007 թվականից սկսած՝ ՀՊՏՀ-ում կրթական նոր չափորոշիչների մշակումը և կրթական ծրագրերի բարելավումը կատարվում են երկաստիճան կրթության կառուցման և կազմակերպման առաջավոր փորձը, պահանջները և միջազգային չափանիշները հաշվի առնելով, ինչը, իբրև գերակա ուղղություն, նշվել է համալսարանի 2006-2011թթ.

զարգացման և բարեփոխման գերակա ուղղություններում (հավելված 1.2, 4-րդ և 6-րդ կետեր), ինչպես նաև 2011 թվականին հաստատված՝ ՀՊՏՀ զարգացման հայեցակարգային դրույթներում (2-րդ բաժնի 3-րդ կետը):

Ուսանողների ներհամալսարանական շարժունությունը խթանելու նպատակով ՀՊՏՀ կրեդիտային հենքով վերակառուցված կրթական ծրագրերում ներառված են նաև ընտրովի դասընթացներ, որոնց համար մշակվել են կրթական ծրագրում դրանց ներառման և ուսանողների կողմից տվյալ մոդուլում գրանցման համապատասխան ընթացակարգեր (Ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման բազմագործոնային համակարգը և առաջադիմության բազմագործոնային գնահատումը, ուսումնամեթոդական ուղեցույց, էջ 20-22): Պետք է նշել, որ չնայած ընտրովի մոդուլների առկայությանը, ինչպես բակալավրական, այնպես էլ մագիստրոսական կրթական ծրագրերում դրանց տեսակարար կշիռը շարունակում է փոքր մնալ (մասնագիտական և մասնագիտացման մոդուլների 10-15%-ը):

Ուսանողների ներհամալսարանական և միջբուհական շարժունակությունը կարգավորվում է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունակության կարգով» (հաստատված՝ 2011թ. ՀՀ Կառավարության կողմից): Համաձայն այս կարգի՝ ՀՊՏՀ-ում ուսանողին թույլատրվում է փոխել մասնագիտությունը /մասնագիտացումը/, եթե, առարկաների տարբերությամբ պայմանավորված կրեդիտների քանակը չի գերազանցում 20 կրեդիտը: Ուսանողների շարժունության (նաև միջազգային շարժունակության) խթանման նպատակով ՀՊՏՀ-ում ներդրվել և կիրառվում են ԵԿՓՀ (ECTS) կրեդիտային համակարգը և համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը: Կրթության որակի ճանաչման, որակավորումների համադրելիության և մրցունակության ապահովման նպատակով ՀՊՏՀ-ն ակտիվ գործունեություն է ծավալում կրթական միջազգային կառույցներին անդամակցելու և արտերկրի համալսարանների հետ համագործակցելու ասպարեզում: Մասնավորապես՝ մշակվել և Եվրոպական հանձնաժողով են ներկայացվել բարձրագույն կրթության բարեփոխումների ծրագրային առաջարկներ Տեմպուսի շրջանակում, որոնցից 7-ն արդեն գործում են: Այս ծրագրերի միջոցով ապահովվում են ՀՊՏՀ կրթական ծրագրերի միջազգայնացումը, կրթության որակը և շարժունությունը (քանակական ցուցանիշները տե՛ս չափանիշ 9):

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. Բուհում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն

ՀՊՏՀ-ում կրթական ծրագրերի որակի ապահովման գործառույթը մինչև 2012թ. ավարտը հիմնականում իրականացվել է ֆակուլտետների խորհուրդների կողմից, որոնք ոչ միայն պարբերաբար քննարկել են գործող կրթական ծրագրերի և առանձին դասընթացների առարկայական ծրագրերի բովանդակության հետ կապված հարցեր, այլև բոլոր կուրսերի ուսանողների կիսամյակային և տարեկան ուսումնառության ցուցանիշների ամփոփմամբ կատարել են թողարկող ամբիոնների մշակած առարկայական և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատում: Միջամբիոնային հիմքով (հարակից ամբիոնների միջոցով) իրականացվել են թողարկող ամբիոնների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի բովանդակային քննարկումներ, և այս երկու

ուղղություններով արձանագրված արդյունքները, սովորաբար, ամփոփվել են ռեկտորի տարեկան հաշվետությունում, (օրինակ՝ ՀՊՏՀ ռեկտորի 2009թ. հաշվետվության էջ 7-9, 2011թ. հաշվետվություն էջ 9-18, 2012թ. հաշվետվություն էջ 11-12): Կրթական ծրագրերից բավարարվածությունը պարզելու և համապատասխան ուղղություններով բարեփոխումներ կատարելու համար հաշվետու ժամանակահատվածում (2009-2013թթ.) պարբերաբար հարցումներ են անցկացվել ուսանողների և շրջանավարտների շրջանում: 2013թ. մշակվել և հաստատվել է «Շրջանավարտների հետազոտում. համալսարանի փորձի և հեռանկարների գնահատում» հարցաթերթիկը, որը լրացվելու է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին: Դրանում ներառված հարցերի մի մասը վերաբերում է դասավանդման և ուսումնառության մեթոդներին, թե որքանով են դրանք նպաստում գիտելիքի, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, ինչպիսին են եղել պատկերացումները նախքան բուհ ընդունվելը և իրականում ինչպիսի գիտելիք, հմտություններ և կարողություններ են ձեռք բերվել, կրթական ծրագիրն ավարտելիս վերջնարդյունքների մասին ինչ կարող են ասել, ինչ առաջարկներ ունեն կրթական ծրագրի բարելավման ուղղությամբ և այլն:

ՀՊՏՀ-ում 2013թ. ներդրվել է «Կրթական ծրագրերի կազմում և հաստատում» հայեցակարգային փաստաթուղթը, որտեղ հստակ սահմանված են ուսանողակենտրոնության, ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված, Բոլոնիայի ուղղություններին համահունչ կրթական ծրագրերի կազմումն ու մշակումը, ծրագրերի գնահատման և հետագա բարելավման քաղաքականությունները: Հետադարձ կապի և գնահատման արդյունավետության վերաբերյալ քաղաքականությունները արտացոլված են նաև «ՀՊՏՀ որակի ներքին ապահովման հայեցակարգ» (2012թ.) և «ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմներ» (2013թ.) հայեցակարգային փաստաթղթերում:

Չափանիշ 3-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար :	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանությունը կրթական չափորոշիչներին: 2. ՄԿԾ-ների համադրելիությունը որակավորումների ազգային շրջանակի հետ: 3. ՀՊՏՀ-ն ունի երկաստիճան կրթական ծրագրերի մշակման և իրականացման բավարար փորձ: 4. Ներդրվել է «Կրթական ծրագրերի կազմում և հաստատում» հայեցակարգային փաստաթուղթը, որտեղ հստակ սահմանված են ուսանողակենտրոնության, ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված, Բոլոնիայի ուղղություններին համահունչ կրթական ծրագրերի կազմումն ու մշակումը, ծրագրերի գնահատման և հետագա բարելավման քաղաքականությունները: 5. Հետադարձ կապի և գնահատման արդյունավետության վերաբերյալ քաղաքականությունները արտացոլված են նաև «ՀՊՏՀ որակի ներքին	1. Բենչմարքինգի լայն հնարավորություններ են առաջացել 2012թվականից Տեմպուսի շրջանակներում իրականացվող 7 ծրագրերում: 2. Արտաքին շահակիցների մասնակցությունը ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում, հիմնվելով գործատուների հետ կապերի ընդլայնման վրա: 3. Ուսանողների և դասախոսների շարժունության ընդլայնում՝ հաշվի առնելով նոր կրթական ծրագրերի ճկունությունը: 4. Միջազգային բուհերի լավագույն փորձի

ապահովման հայեցակարգ» (2012թ.) և «ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմներ» (2013թ.) հայեցակարգային փաստաթղթերում: 6. Գնահատման բազմագործոնային իրականացում, զարգացում, կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգի իրականացում: 7. ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայությունը: 8. ՀՀ պետական և մասնավոր հատվածների խոշոր գործատուների ներգրավվածությունը ՄԿԾ-ի մշակման և իրականացման գործընթացում: Հատկապես վերջին երկու տարիներին ՀՊՏՀ-ն հաջողել է համատեղ կրթական ծրագրերի մշակման և իրականացման բնագավառում ներգրավել ՀՀ պետական և մասնավոր հատվածների խոշոր գործատուների: 9. Միջազգային կառույցներին անդամակցության և միջազգային ծրագրերում մասնակցության աստիճանի ակտիվացումը լուրջ հենք է ձևավորել ՀՊՏՀ կրթական ծրագրերի միջազգայնացման համար: Մասնավորապես՝ 2012 թվականից ՀՊՏՀ-ում իրականացվում է Տեմպուսի 3, 2013թվականից՝ 4 նոր ծրագիր:	ուսումնասիրում և ներդրում: 5. Տեմպուսի ծրագրերի շրջանակներում դասախոսների վերապատրաստում Եվրոպական առաջատար բուհերում և կրթական կազմակերպություններում: 6. Ոլորտային որակավորումների շրջանակի մշակում հիմնվելով Եվրոպական գործընկերների փորձին:
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Ոչ բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների համար են մշակված ուսանողակենտրոնության, ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված, Բոլոնիայի ուղղություններին համահունչ կրթական ծրագրեր: 2. ՄԿԾ-ների համար բենչմարքինգի իրականացման հստակ ընթացակարգերի բացակայություն: 3. Դասավանդման և ուսումնառության ժամանակակից տեխնոլոգիաների ոչ համապարփակ կիրառում: 4. Գնահատման համակարգում ուսանողների հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդների անկատարություն: 5. Առաջատար ՄՈՒՀ-երի հետ ուսանողների և դասավանդողների փոխանակման սակավություն: 6. ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման կառուցակարգերի անկատարություն: 7. Ուսանողակենտրոն սկզբունքի կիրառման նպատակով դասախոսների վերապատրաստման հայեցակարգի և ընթացակարգերի բացակայություն:	1. ՀՀ Կառավարության և/կամ ՀՀ ԿԳՆ կողմից ՄԿԾ-երի մշակման գերկարգավորված մեթոդաբանություն հնարավոր հրահանգավորումը: 2. Աշխատաշուկայի հարափոխ պահանջներ: 3. Աշխատաշուկայում պահանջարկի փոփոխություններով պայմանավորված ՄԿԾ-ների վերանայման արտաքին շահակիցների թույլ արձագանքը:

Բարելավման ուղղություններ

1. Ներդնել և տարածել ուսանողակենտրոնության, ուսումնառության վերջնարդյունքի վրա հիմնված, Բոլոնիայի ուղղություններին համահունչ կրթական ծրագրեր բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների համար:
2. Ստեղծել և մշակել որակի ապահովման հայեցակարգային փաստաթղթերի իրականացման կարգերը:
3. Իրականացնել վերապատրաստումներ դասախոսների համար՝ ուսանողակենտրոնության, ուսումնառության վերջնարդյունքի վրա հիմնված, Բոլոնիայի ուղղություններին համահունչ կրթական ծրագրերի ընկալման նպատակով:
4. Ուսումնական պլաններում մշակել շարժունությանը նպաստող ճկուն բաղադրիչների կարգ:
5. Մշակել ուսումնառության հիման վրա ուսումնական բեռնվածության կրեդիտային չափման մեթոդաբանություն և ընթացակարգ:
6. ՀՊՏՀ բոլոր մասնագիտությունների գնահատման համակարգի նորացում ելնելով ուսանողակենտրոն սկզբունքից:
7. Մշակել գրագողության դեմ պայքարի արդյունավետ մեթոդներ:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Բուհը ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունը ապահովելու նպատակով

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ

ՀՊՏՀ դիմորդների հավաքագրման ուղղությամբ աշխատանքների համակարգման շրջանակներում 7 միջնակարգ և ավագ դպրոցների հետ կնքված են պայմանագրեր, որտեղ ՀՊՏՀ համապատասխան ֆակուլտետների դասախոսները մասնագիտական կողմնորոշման բաց դասախոսություններ են կազմակերպում տվյալ դպրոցներում:

Կնքված են համագործակցության պայմանագրեր 14 քոլեջների հետ, որոնց սովորողների ընդունելության կարգը սահմանված է կառավարության համապատասխան որոշմամբ:

Ավանդույթ են դարձել ողջ տարվա ընթացքում կազմակերպվող համալսարանի աշխատակիցների այցելությունները դպրոցներ և «Բաց դռների օրերի» շրջանակներում աշակերտների ճանաչողական այցերը համալսարան:

Բացի այդ, Մարքեթինգի և կարիերայի կենտրոնի կողմից պատրաստվում են ՀՊՏՀ-ի, առանձին ֆակուլտետների մասին պատմող ֆիլմեր և այլ տեղեկատվական նյութեր, և Հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից իրականացվում է դրանց լուսաբա-

նում: ՀՊՏՀ պաշտոնական կայքում (www.asue.am) գործում է «Ընդունելություն» բաժինը, որտեղ մանրամասն տեղեկատվություն կա ՀՊՏՀ բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների, ընդունելության կարգի և այլ անհրաժեշտ հարցերի վերաբերյալ:

Դիմորդների ընդունելությունը ՀՊՏՀ բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգ իրականացվում է ՀՀ Կառավարության 26.04.2012թ. որոշմամբ հաստատված «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի» համաձայն: Ըստ նշված կարգի՝ բուհերն առկա ուսուցմամբ ընդունելություն են կատարում տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ Կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի և տեղերի համաձայն: Ընդունելությունն իրականացվում է հանրապետական միասնական քննությունների արդյունքում:

ՀՊՏՀ ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է ՀՊՏՀ ընդունող հանձնաժողովը, որը դիմորդի դիմում-հայտի լրացման ժամանակ դիմորդին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն:

Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. հուլիսի 27-ի հրամանով հաստատված «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոններով», համաձայն որի՝ ընդունելության մասնագիտությունների ցանկը և հատկացվող տեղերի քանակը հաստատվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: Դիմորդները մասնակցում են միայն մեկ բուհի մեկ մասնագիտության ընդունելության մրցույթին: ՀՊՏՀ ռեկտորի կողմից կազմված ընդունող հանձնաժողովը կազմակերպում է ընդունելության քննությունները, որոնք վերահսկվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Ընդունելության քննությունները բովանդակային և կազմակերպչական առումով համապատասխանում են բակալավրիատի առկա համակարգի պետական միասնական քննությունների պահանջներին: Վերջին տարիներին ուսուցման հեռակա համակարգում ընդունելության զարգացման շնորհիվ բակալավրիատի ուսանողների ընդհանուր թիվը բավականին մեծացել է:

Մագիստրատուրայում ընդունելությունը կատարվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի» համաձայն: Յուրաքանչյուր տարի ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից հաստատվում է տվյալ ուսումնական տարվա ՀՊՏՀ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը, որտեղ նշվում են դիմորդների ընդունելության և մրցույթի անցկացման փուլերի հստակ ժամկետները, մրցույթի պահանջները: Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով կազմվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի նախագահությամբ, ինչպես նաև մանդատային հանձնաժողով՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի նախագահությամբ: Քննությունների անցկացման համար ռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ:

Անվճար և վճարովի տեղերի համար ընդունելությունն իրականացվում է 3 փուլով: Առաջին փուլում անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել ՀՊՏՀ բակալավրիատի տվյալ մասնագիտության ընթացիկ ուստարվա շրջանավարտները՝ ըստ ՄՈԳ-ի միավորի բարձրության: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ բակալավրիատի առաջադիմության ՄՈԳ-ի հիման վրա: Երկրորդ փուլում վճարովի համակարգ կարող են դիմել ՀՊՏՀ և այլ պետական բուհերի շրջանավարտները, որոնց ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով:

Երրորդ փուլում անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել բանակից զորացրված դիմորդները՝ իրենց համար նախատեսված տեղերի շրջանակներում: Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ի հիման վրա:

Թափանցիկությունն ապահովելու նպատակով ուսանողների առաջադիմության տվյալները յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հրապարակվում են:

Աղյուսակ 2

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի (ներկայացված է հավելված 4.1-ում) և ըստ ուսուցման ձևերի (2013 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ)

Ուսանողների թիվը	**1.Գյումրի 2.Երևան 3.Եղեգնաձոր**	**2009**	**2010**	**2011**	**2012**	**2013**
Բակալավրեր	Առկա	327 4901 79	420 4980 120	406 3972 124	388 3940 160	406 3587 206
	Հեռակա	35 1357	30 1736	23 1727	22 1938 19	22 1649 19
Մագիստրոսներ	Առկա	53 852	53 880	68 1066	76 1102 29	137 998 57
	Հեռակա	89 (2-ը)	330 (2-ը)	884 (2-ը)	1078 (2-ը)	21 1117*
Հետազոտողներ	Առկա	51	43	33	27	29
	Հեռակա այդ թվում՝ վճարովի	150	127	91	94	74
		100	76	36	24	-
	Հայցորդներ	50	46	27	118	122
		24	23	17	68	77
Ուսանողների և հետազոտողների ընդհանուր թիվը		7693/ 375	8549/ 315	8270/ 204	8734/ 351	8170/ 302

** որից 297-ը գործատուների պահանջներին համապատասխան, գործատուների հետ համաձայնեցված կրթական ծրագրով ուսումնառող մագիստրոսներ*

Ասպիրանտուրայում ընդունելությունն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006թ. սեպտեմբերի 15-ի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգի» համաձայն: Բոլոր դիմորդները, մինչև մասնագիտական քննությունը, պետք է հաղթահարեն անգլերենից TOEFL քննության (կամ գերմաներենի Test DaF և ֆրանսերենի TCF ստուգարքների) անհրաժեշտ շեմը և ստուգարք հանձնեն «համակարգչից օգտվելու հմտություններ առարկայից», որից հետո միայն, նախօրոք հայտարարված առարկայական ծրագրերի շրջանակներում, կազմակերպվում է մասնագիտական քննությունը: Ռեկտորի հրամանով ստեղծվում են ասպիրանտուրայի ընդունելության հանձնաժողով և մասնագիտական քննական հանձնաժողովներ: Ընդունելությունը կատարվում է մրցույթի միջոցով՝ ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի, իսկ հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում օտար լեզվի և համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգարքներից ստացած գնահատականները (գումարային ձևով): Հեռակա ասպիրանտների ընդունելությունն իրականացվում է առկա համակարգի համանմանությամբ:

Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության 2011թ. ապրիլի 28-ի որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի» համաձայն: Ըստ այդ կարգի՝ դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԿԳՆ-ի կողմից: Ուսուցման լեզվին և համապատասխան մասնագիտության ընդունելության համար նախատեսված քննական առարկաներին չտիրապետող օտարերկրացիներն ուսանումն են ՀՊՏՀ նախապատրաստական դասընթացներում:

Առկա ուսուսմամբ բակալավրերի թիվը բացարձակ արտահայտությամբ 2013 թվականին 2009-ի համեմատ նվազել է, սակայն այդ տարիներին տեղի են ունեցել ուսանողների թվի կտրուկ տատանումներ՝ պայմանավորված եռաստիճան կրթական համակարգի առաջադրված փոփոխություններով: Հեռակա բակալավրիատի ուսանողների թիվը 2013-ին 2009-ի համեմատ աճել է: Առկա մագիստրոսների թիվը 2013-ին 2009 թվականի համեմատ: 2010 թվականին 2009 թվականի համեմատ մագիստրոսների թվի աճը պայմանավորված է եղել այդ տարի ավարտած առաջին սեփական բակալավրերի դիմումների ավելացմամբ:

Առկա հետազոտողների թիվը 2013-ին 2009-ի համեմատ նվազել է 22-ով կամ 43%-ով, իսկ հեռակա հետազոտողների թիվը նվազել է: Հայցորդների թիվը 2013ին 2009-ի համեմատ աճել է:

Ուսանողների տեղափոխումն իրականացվում է ՀՀ Կառավարության 2011թ. օգոստոսի 25-ի որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգի» համաձայն:

Ներկայացված տվյալներից երևում է, որ ՀՊՏՀ-ից ուսանողների արտահոսք գրեթե չկա:

Աղյուսակ 3

Ուսանողների արտահոսք և ներհոսք (ըստ կրթական ծրագրերի ներկայացված է հավելված 4.1-ում)						
		2009	2010	2011	2012	2013
1.	Արտահոսք	22	12	14	12	18
2.	Ներհոսք	1	1	37	62	67
3.	Ներհոսք -արտահոսք	-11	-11	23	50	49

Ուսանողների հեռացումն ու վերականգնումն իրականացվում ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. նոյեմբերի 17-ի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի»:

Աղյուսակ 4

Հեռացումներ և վերականգնումներ											
		2009		2010		2011		2012		2013	
		բացարձակ թվով	*%	բացարձակ թվով	*%	բացարձակ թվով	*%	բացարձակ թվով	*%	բացարձակ թվով	*%
1.	Դուրս մնացած ուսանողներ	172	29	167	-3	139	-17	69	-51	270	291
2.	Վերականգնված ուսանողներ	82	-29	120	46	191	56	17	-44	125	17

** %-Նախորդ տարվա համեմատ՝ %-ներով*

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Բուհն ունի ուսանողական կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր

Ուսանողների կարիքների վերհանման հստակ քաղաքականությունն ու ընթացակարգը մշակված չեն: Դրանք հիմնականում իրականացվել են ոչ հստակ ժամանակացույցով և պարբերականությամբ՝ հանդիպումների տեսքով: Այդօրինակ հանդիպումների ժամանակ ռեկտորին, դեկաններին կամ վարչական մասի ներկայացուցչին տրվել են բանավոր հարցեր: Հարցերն ու բողոքները գրառվել են պատասխանող կողմի ներկայացուցիչների կողմից: Կախված խնդրի մաշտաբայնությունից և իրականացման հնարավորություններից՝ խնդիրները ժամանակային առումով ստացել են տարբեր լուծումներ:

Յուրաքանչյուր կուրսի համար նշանակված է կուրսղեկ, ով պատասխանատվություն է կրում տվյալ կուրսի համար, ծագող խնդիրների դեպքում դիմում է համալսարանի համապատասխան օղակներին, քանի որ ուսանողների կարիքների բացահայտման և դրանց բավարարման գործընթացում ներգրավված են ՀՊՏՀ բոլոր օղակները:

ՀՊՏՀ որակի բաժնի կողմից մշակվել և իրականացվում է ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումների և ուսումնասիրությունների պիլոտային ծրագիր, որի միջոցով ուսանողների կրթական կարիքները վերլուծվում են առավել համակարգված կերպով: Ուսանողների կարիքների վերհանման հետ առնչվող հարցումներ են կատարվում նաև Եվրամիության Տեմպուս ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց» ծրագրով մշակված նոր ձևաչափով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Բուհը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար

ՀՊՏՀ մարքեթինգի և կարիերայի կենտրոնը պարբերաբար կազմակերպում է տարբեր սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ, անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:

Բակալավրիատում ամփոփիչ ատեստավորումից առաջ ուսանողների համար կազմակերպվում են խորհրդատվություններ (ակնարկային դասախոսություններ):

Ուսանողների կրթական կարիքների վերհանմանը զուգահեռ, նախատեսվում է ընդլայնել և զարգացնել նրանց առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության տեսականին: Մասնավորապես՝ ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումների և ուսումնասիրությունների պիլոտային ծրագրի արդյունքների հիման վրա նախատեսվում է բարձրացնել ուսանողներին առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության արդյունավետությունը: Եվրամիության Տեմպուս ծրագրի շրջանակներում իրականացվող «Բարձրագույն կրթության կառավարման մագիստրոսական ուսումնական ծրագիր կրթական վերափոխումներ իրականացնող առաջնորդների պատրաստման նպատակով» ծրագրով «Կրթության կառավարում» մասնագիտացման համար ՀՊՏՀ այլ մասնագիտությունների համեմատությամբ իրականացվել է խորհրդատվական ժամերի ավելացում (լսարանային ժամերի 50%-ի չափով): Այս փորձը հետագայում պետք է կիրառվի այլ մասնագիտությունների համար ևս:

Ամբիոնների կողմից ևս մատուցվում են պարտադիր խորհրդատվական ծառայություններ ավարտական և հետազոտական աշխատանքների ընթացքում:

2013 թ. ՀՊՏՀ 3-ից բարձր կուրսերի շրջանում անցկացրած հարցումների արդյունքները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 5

Խորհրդատվական ծառայության վերաբերյալ հարցումների արդյունքներ

Պատասխանել հետևյալ հարցին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	89
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	89
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	80 բավ., 9 մասամբ

Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվու՞մ են խորհրդատուներ:	✓	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվու՞մ է:		

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Բուհում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց

Վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց մշակված չէ, սակայն ուսանողների՝ վարչական աշխատակազմին դիմելու գործընթացի հետ կապված ձևավորվել են որոշակի կառուցակարգեր, իսկ առանձին հարցերի պարագայում՝ սահմանվել են նաև համապատասխան ընթացակարգեր, այդ թվում՝ ժամանակացույցեր: Ուսանողներն իրենց հուզող հարցերով ու խնդիրներով, բանավոր և գրավոր կարգով դիմում են ֆակուլտետների դեկաններին: Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են ուսանողների հանդիպումներ վարչական աշխատակազմի (ռեկտոր, պրոռեկտորներ և այլն) ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների ընթացքում նրանք բարձրաձայնում են իրենց հուզող խնդիրները և ստանում պատասխաններ:

ՀՊՏՀ ուսանողները հնարավորություն ունեն նաև ՀՊՏՀ պաշտոնական կայքի և ֆեյսբուք սոցիալական առցանց գործիքի միջոցով տարբեր հարցերով դիմելու վարչական աշխատակազմին: Ուսանողական խորհրդի միջոցով ևս ուսանողներն իրենց հարցերով հանդես են գալիս համալսարանի կառավարման մարմինների կամ ռեկտորատի նիստերում:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 1-ի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի» համաձայն՝ ուսանողը կարող է գրավոր բողոքարկել ամփոփիչ ատեստավորման արդյունքները, ինչի համար սահման-

ված են հստակ ժամկետներ: Տեղափոխումների և վերականգնումների հետ կապված խնդիրները նույնպես կանոնակարգված են, և սահմանված է հստակ ժամանակացույց:

2013 թվականի հունիսին ՀՊՏՀ կողմից անցկացած հարցման մասնակիցների միայն 87%-ն է տեղյակ վարչական անձնակազմի մատուցված լրացուցիչ ծառայությունների մասին, իսկ դրանցից օգտվել է հարցվածների միայն 75%-ը: Այդ ծառայություններից օգտված հարցվածների 70%-ը պատասխանել է, որ հանդիպումներն անցել են ոչ ձևական: Հանդիպումների արդյունքում իրենց հուզող հարցերի պատասխաններից բավարարված են զգացել այդ ծառայություններից օգտված հարցվածների 67%-ը, մասամբ բավարարված՝ 8%-ը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Բուհում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ

«ՀՊՏՀ 2012-2016 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում» ամրագրված են աշխատաշուկայում մրցունակության, գործատուների հետ համագործակցության, ուսանողների մասնագիտական հնարավորությունների ընդլայնմանը վերաբերող մի շարք ռազմավարական նպատակներ:

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու և մասնագիտական աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով ՀՊՏՀ-ում 2008թ. ստեղծվել է կարիերայի կենտրոնը, որը պատկանել է ակադեմիական քաղաքականության, ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկողության վարչությանը և գործել ըստ այդ վարչության կանոնակարգի:

2011թ. այն առանձնացել է և կոչվել «Մարքեթինգի և կարիերայի կենտրոն»: Կենտրոնի գործունեությունից ՀՊՏՀ ուսանողների բավարարվածությունը պարբերաբար ուսումնասիրվում է հարցումների շրջանակում:

Կենտրոնը կազմակերպում է կլոր սեղան-քննարկումներ, ուսումնական ծրագրով չնախատեսված պրակտիկաներ, ինթերնշիփեր, հանդիպումներ գործատուների հետ, ինչպես նաև առաջարկում ուսումնական ծրագրով նախատեսված պրակտիկա գործընկեր կազմակերպություններում: Կենտրոնը ուսանողներին և շրջանավարտներին պարբերաբար տեղեկացնում է թափուր աշխատատեղերի մասին:

Կենտրոնի աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար իրականացվել է հարցում, համաձայն որի՝ հարցված ուսանողներից միայն 84% -ն է տեղյակ կարիերային նպաստող ծառայությունների մասին: Կարիերային նպաստող ծառայություններից օգտվել է հարցվածների 73%-ը, որից 69%-ն է բավարարված ծառայության աշխատանքից, իսկ մասամբ բավարարված է 4%-ը:

Աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխան մասնագետների պատրաստումը մեծապես պայմանավորված է բուհ-գործատու սերտ համագործակցությամբ: Այդ նպատակով էլ գործատուների հետ համատեղ մշակվել և իրականացվում են մագիստրոսական ծրագրեր. լավագույն շրջանավարտները աշխատանքի կանցնեն համապատասխան պետական կառուցներում:

Ներկայումս ՀՊՏՀ-ն ներգրավված է Եվրամիության Տեմպուսի շրջանակներում իրականացվող «Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն և «Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց» ծրագրերում, որոնց նպատակներից է խթանել համալսարան-գործատու համագործակցության ընդլայնումը և զարգացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Բուհը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու գիտահետազոտական աշխատանքներում

Ուսանողների գիտական զարգացմանը նպաստելու նպատակով ՀՊՏՀ-ում ստեղծվել է Ուսանողական գիտական ընկերություն (այսուհետ՝ ՈԻԳԸ): 2007թ. ՀՊՏՀ գիտական խորհրդի 25.04.2007թ. նիստում (արձ. թիվ 9) հաստատվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կանոնակարգ»:

Բոլոր ֆակուլտետներում գործում են ՈԻԳԸ-ներ, որոնք ձևավորվում են ամբիոնների կողմից ներկայացված ուսանողներից: ՈԻԳԸ-ն ունի կենտրոնական մարմին, որը համակարգում է ՈԻԳԸ աշխատանքները:

ՈԻԳԸ աշխատանքները կանոնակարգվում են ՈԻԳԸ կանոնադրությամբ:

2009թ.-ին ՈՒԳԸ 31-րդ նստաշրջանի առաջին փուլին մասնակցել է 140 ուսանող: Արդյունքում՝ ներկայացվել է 82 աշխատանք, որոնցից երկրորդ փուլի նստաշրջանում ելույթի տեսքով ներկայացվել է 56-ը: Մասնակիցների թվի զգալի աճը հիմնականում եղել է ի հաշիվ մագիստրանտների:

2010 թվականին ՈԻԳԸ տարեկան 32-րդ նստաշրջանի առաջին փուլին մասնակցել է 78 ուսանող: Մասնակիցների թվի նվազման (նախորդ տարի՝ շուրջ 140) հիմնական պատճառներն են պահանջների խստացումը և ամբիոնների մի մասի պասիվ մասնակցությունը: Նշված 78 ուսանողից հաջորդ փուլ են անցել 28-ը: Ընդհանուր ներկայացվել է 68 աշխատանք, որից երկրորդ փուլի նստաշրջանում ելույթի տեսքով՝ 45-ը: Այս փուլում մագիստրանտ մասնակիցների թիվը համարյա նույնն է եղել, ինչ նախորդ տարի՝ 35-40:

2011թ. ՈԻԳԸ տարեկան 33-րդ նստաշրջանի առաջին փուլին մասնակցել է 76 ուսանող, որից համալսարանական փուլ են անցել 21-ը (նախորդ տարվա 28-ի փոխարեն): Մասնակիցների թվի նվազման հիմնական պատճառներն են մասնակցության պահանջների խստացումը և ամբիոնների մի մասի պասիվությունը: Արդյունքում՝ ներկայացվել է 55 աշխատանք: Ելույթ է ունեցել 40 ուսանող: Այս փուլին մասնակցության հայտ էր ներկայացրել 25 մագիստրանտ, որոնցից ելույթ են ունեցել 19-ը:

2012թ. ՈԻԳԸ տարեկան 34-րդ նստաշրջանը անցկացվել է երկու փուլով՝ ֆակուլտետային և համալսարանական: Առաջին փուլի աշխատանքները կատարվել են 2012թ. մայիսին: Առաջին փուլին մասնակցել է նաև պատմության և քաղաքագիտության ամբիոնը՝ համապատասխան թեմաներով: Առաջին փուլին մասնակցել է 57 ուսանող, որից համալսարանական փուլ են անցել 38-ը: Մասնակիցների թվի նվազման հիմնա-

կան պատճառներն են ամբիոնների մի մասի պասիվ մասնակցությունը և ուսանողների հիասթափությունը նախկին տարիներին կազմակերպված ՈՒԳԸ նստաշրջաններից:

Երկրորդ փուլն անցկացվեց 2012թ. հոկտեմբերի 31-ին և նոյեմբերի 1-2-ին: Ներկայացվեց 46 աշխատանք, ելույթ ունեցավ 38 ուսանող: Այս փուլին մասնակցության հայտ էր ներկայացրել 9 մագիստրանտ, որոնցից ելույթ են ունեցել 8-ը:

2013թ. նստաշրջանի արդյունքները դեռևս ամփոփված չեն:

Աղյուսակ 6

ՀՊՏՀ-ի 2009-2012 թվականներին ՈՒԳԸ նստաշրջաններին մասնակցած ուսանողների թվի դինամիկան.

	Ընդամենը մասնակցել են	Երկրորդ փուլին մասնակցել են, այդ թվում՝ մագիստրանտներ	Երկրորդ փուլում ելույթ են ունեցել
2009	140	82	56
2010	78	68	45
2011	76	55	40
2012	57	46	38

2013 թվականի հունվարից ՀՊՏՀ խորհրդի հավանությամբ ստեղծվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (www.amberd.am), որի հետազոտական ծրագրերում, ինչպես նաև ՀՀ գիտության պետական կոմիտեի դրամաշնորհների ծրագրերում առկա է ուսանողների պարտադիր մասնակցության պահանջը: Այսպես՝ »Ամբերդ» գիտահետազոտական կենտրոնի հետազոտական ծրագրերում պոֆեսորադասախոսական անձնակազմի հետ ներգրավված են 12 ասպիրանտ և 11 մագիստրոս, որոնցից 6-ը իրականացնում է առանձին հետազոտություն, առանձին խմբով՝ կազմված միայն մագիստրոսներից:

Հետազոտական աշխատանքների ընդլայնմանն են ուղղված նաև ուսումնական գործընթացում գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպումը և բակալավրիատի ու մագիստրոսական ավարտական աշխատանքներում հետազոտական բաղադրիչի պարտադիր առկայությունը (տեսական բնույթի վերլուծությունը պետք է կազմի աշխատանքի 30%-ը, հետազոտականը՝ 70%-ը):

Գիտահոտազոտական աշխատաքներում ներգրավված ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի տե՛ս հավելված 4.2-ում:

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների տե՛ս հավելված 4.3-ում:

Ուսումառողների հեղինակությամբ և/ կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը տե՛ս հավելված 4.4-ում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Բուհում գործում է ուսանողների իրավունքները պաշտպանող պատասխանատու մարմին

ՀՊՏՀ ուսանողների իրավունքները սահմանվում են Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, ՀՊՏՀ կանոնադրությամբ:

ՀՊՏՀ ուսանողն իրավունք ունի.

- ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) և ամբիոնը,
- մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է համալսարանում կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով,
- մասնակցելու համալսարանի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ համալսարանի կանոնադրությամբ,
- անվճար օգտվելու համալսարանի գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և սեմինարներին,
- բողոքարկելու համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ (ներառյալ՝ անվանական), դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ,
- ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և այլ նորմատիվ փաստաթղթերի, համալսարանի հետ կնքելու ուսումնառության պայմանների մասին պայմանագիր,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի

ժամկետով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

- ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ առնվազն 7 շաբաթ ընդհանուր տևողությամբ,
- հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում՝ համալսարանի սահմանած կարգով հանրակացարանում ստանալու համապատասխան տեղ,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններ,
- ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի սահմանած կարգով:

Ուսանողների իրավունքների պաշտպանության և այլ խնդիրների լուծման համար ՀՊՏՀ-ում գործում է Ուսանողական խորհուրդ (ՀՊՏՀ ՈՒԽ), որը ինքնակառավարվող, ընտրովի ներկայացուցչական մարմին է: Այն գործում է ՀՊՏՀ և ուսանողական խորհրդի կանոնադրությամբ: 2001 թվականին ստեղծվել է «Էկոնոմ +» ուսանողական ամսաթերթը, որն իր գործունեության նպատակն է համարում ուսանողների հիմնախնդիրների բարձրաձայնումը:

Բողոքների և խնդիրների լուծման վիճակագրություն չի վարվել, քանի որ դրանց մեծ մասը լուծվել են բանավոր համաձայնության միջոցով, և գրանցման կարիք չի եղել: Ուսանողների գնահատականների բողոքարկման կարգը սահմանված է ՀՊՏՀ «Ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգը և առաջադիմության բազմագործոնային գնահատումը» ուսումնամեթոդական ուղեցույցում:

ՀՊՏՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի մասին տեղեկացվածության աստիճանը պարզելու նպատակով իրականացվել է հարցում, որի արդյունքներով ՀՊՏՀ ուսանողների 87%-ը տեղյակ է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի՝ ուսանողական խորհրդի մասին: Հարցվածների միայն 52%-ն է օգտվել այդ կառույցի ծառայություններից կամ կառույցի մասին տեղյակ ուսանողների կեսը՝ 50%-ը: Ուսանողական խորհրդի ծառայություններից բավարարված է հարցվածների 44 %-ը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. Բուհում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման ու որակի ապահովման համար իրականացվում է շրջանավարտների հարցում: Ուսանողական հարցումն իրականացվում «Հայաստանի բուհերի շրջանա-

վարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց» ծրագրի շրջանակներում և որակի ապահովման բաժնի կողմից:

Ուսանողական հարցաթերթիկի մեջ ներառված են մի շարք հարցեր, որոնք ներկայացված են հավելվածով:

Ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման և մատուցվող ծառայությունների արդյունավետությունը գնահատելու նպատակով ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի կողմից մշակվել է «ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմները» վերնագրով փաստաթուղթ, որը հաստատվել է ՀՊՏՀ որակի խորհրդի կողմից:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար տե՛ս հավելված 4.5-ում:

Չափանիշ 4-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար:	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ-ում ուսանողներին առնչվող գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի առկայությունը: 2.Ուսանողի ուղեցույցի/2013թ./ առկայությունը՝ http://media.asue.am/upload/US_-_2013_verjnakan.pdf : 3. «ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմները» փաստաթղթի ստեղծում: 4. Մագիստրոսների թվի ավելացում: 5. Միջազգային նոր ծրագրերի շնորհիվ ուսանողակենտրոն ծրագրերի մշակում: 6. Ուսանողների մասնակցություն Տեմպուսի նոր՝ «Հայաստանի բուհերի որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնում» ծրագրին: 7. Կարիերայի ծառայություններով զբաղվող կենտրոնի առկայություն: 8. Լավագույն շրջանավարտներին աշխատանքով ապահովելու սկզբունքով գործատուների հետ մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացում: 9. «Ամբերդ» հետազոտական կենտրոնում առանձին ուսանողական հետազոտական խմբի առկայություն: 10. ՀՊՏՀ անվտանգության կայուն համակարգի, վերանորոգված բակի և անլար (wi-fi) ցանցի առկայություն: 11. Պետական քոլեջների հետ պայմանագրերի առկայությունը: 12. Հեռակա ուսուցման համակարգի առկայությունը: 13. Որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցությունը: 14. ՈՒԳԸ և ՈՒԽ-ի ակտիվ գործունեությունը:	1. ՀՊՏՀ համագործակցությունը դպրոցների և պետական քոլեջների հետ: 2. ՀՊՏՀ միջազգային կապերի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի համագործակցությունը գործատուների հետ: 3. Ուսանողների շարժունության բարձրացման հնարավորություն միջազգային ծրագրերով և պայմանագրերով 4. Ուսանողների և շրջանավարտների տվյալների համապարփակ բանկի ստեղծում, օգտագործելով Տեմպուս-ի ծրագրերի բաղադրիչները:

15. Ուսանողների համար նախատեսված ուղեցույցերի և կրթական դասընթացների մատչելիությունը: 16. Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցումների ացկացումը: 17. ՀՊՏՀ ուսանողական խորհրդի բաժնի առկայությունը ՀՊՏՀ պաշտոնական էլ. կայքում http://www.asue.am և ֆեյսբուքում՝ https://www.facebook.com/Asue.Sc 18. 2013թ.-ից ՀՊՏՀ-ում մշակվել և գործողության մեջ է դրվել ՀՊՏՀ-ում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման նոր կանոնակարգ (տե՛ս հետևյալ հղումով՝ http://media.asue.am/upload/Soc_Kanonakarg.pdf) 19. Առարկայական անհատական խորհրդատվական ծառայությունների տրամադրում: 20. ՀՊՏՀ ղեկավարության, վարչական անձնակազմի պարբերական հանդիպումները ուսանողության հետ, տարբեր խնդիրների բացահայտում և լուծում:	
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Դիմորդների հավաքագրման և իրազեկման մեթոդների սակավությունը: 2. Ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի անկատարությունը: 3. Ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի անկատարությունը: 4. Պրակտիկայի անցկացման ցածր արդյունավետությունը: 5. Օտարերկրյա ուսանողների թվի սակավությունը: 6. Ուսանողների թվի ցածր շարժունությունը: 7. Ուսանողների կրթական կարիքների վերհանման մշակված հստակ քաղաքականության բացակայություն:	1. Տնտեսական ճգնաժամի հետևանքները առաջարկի և վճարունակության վրա 2. Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման հնարավոր խնդիրներ: 3. ՀՀ-ում դիմորդների թվի նվազումը: 4. Աշխատատեղերի սղությունը 5. Ավագ դպրոցների գործունեության քիչ փորձ:

Բարելավման ուղղություններ

1. Դիմորդների հավաքագրման նպատակով հստակ հայեցակարգի մշակում:
2. Ուսանողների բողոքարկման ընթացակարգի մշակում:
3. Ուսանողների կրթական, խորհրդատվական, այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերն ու կառուցակարգերն արտացոլող հայեցակարգի կամ որևէ փաստաթղթի ստեղծում:
4. Ուսանողների կարիքների վերհանման հստակ քաղաքականության մշակում:
5. Վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգի մշակում:
6. Ուսանողների և շրջանավարտների տվյալների համապարփակ բանկի ստեղծում և դրա վերլուծության մեթոդների մշակում:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Բուհի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Բուհում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր

Շահառուների մրցակցային առավելությունների ապահովման, տնտեսության կայուն զարգացման, տնտեսագիտության ոլորտում ազգային և տարածաշրջանային առաջատարի դիրք զբաղեցնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար բուհը պետք է ապահովվի անհրաժեշտ որակավորում ունեցող համապատասխան վարչական, պրոֆեսորադասախոսական (այսուհետ՝ ՊՖԴ) և ուսումնաօժանդակ կազմով, գիտական աշխատողներով:

ՀՊՏՀ-ի (այդ թվում՝ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի) ՊՖԴ և ուսումնաօժանդակ կազմի ձևավորման քաղաքականությունը և ընթացակարգերը հիմնվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության «ՀՀ պետական ԲՈՒՀ-երի ՊՖԴ կազմի ձևավորման մասին» հրամանի, «Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգի մասին», ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին», «Բուհական և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների դրույթների վրա և ամրագրված են ՀՊՏՀ-ի կանոնադրությունում, ներքին կարգապահական կանոններում և ՀՊՏՀ գիտամանկավարժական, ՊՖԴ կազմի ձևավորման կանոնակարգում:

ՀՊՏՀ-ում գործում են մի շարք կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք կոչված են նպաստելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊՖԴ և ուսումնաօժանդակ կազմի ընտրությանը և պահպանմանը/կայունությանը: Այս գործընթացի բաղկացուցիչ մասն է կազմում ՊՖԴ կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգը, որտեղ սահմանվում են գիտամանկավարժական, ՊՖԴ կազմի ձևավորման կարգը, պաշտոնների առաջքաշման չափանիշները, մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները (հավելված 5.1):

ՀՊՏՀ-ում ՊՖԴ կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի բաց մրցութային կարգով ընտրությունը, որի գերակա նպատակը համալսարանի հիմնական դասախոսական կազմի ձևավորումն է: Համալսարանի ռեկտորը ամբիոնում ազատ հաստիքի առկայության, մանկավարժական հատուկ տարակարգեր զբաղեցնելու կամ նոր բացվող

ամբիոնի կազմի ձևավորման դեպքերում իրավասու է հրամանագրել անձանց՝ համապատասխան պաշտոններում, մինչև մեկ տարի ժամկետով:

ՀՊՏՀ աշխատակազմի բաղկացուցիչ մասն է կազմում ուսումնաօժանդակ անձնակազմը, այդ թվում՝ ավագ լաբորանտներ և լաբորանտներ, գործավարներ, որոնք ևս իրականացնում են բուհի ընթացիկ գործունեությունը: Օժանդակ կազմն աշխատանքի է ընդունվում դիմումի համաձայն՝ հաշվի առնելով բարձրագույն կրթությունը՝ առանց աշխատանքային ստաժի պահանջի և/կամ նախնական մասնագիտական կրթությունը՝ պարտադիր երկու տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում:

Բուհում այլ աշխատանքի փոխադրվելը, աշխատանքի պայմանների փոփոխությունը և աշխատանքային պայմանագրի լուծումը կատարվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված, ինչպես նաև համալսարանի ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում (հավելված 5.2, էջ 5):

Համալսարանի գիտամանկավարժական, ՊՖԴ կազմն ընդգրկում է հետևյալ պաշտոնները՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ և պրոֆեսոր, որ համապատասխանում է «ՀՀ պետական բուհերի ՊՖԴ կազմի ձևավորման» հրամանի «ՊՖԴ տարակարգերի տարիֆառրակավորման բնութագրեր» դրույթին (տե՛ս ՀՀ կրթության և գիտության նախարարության հրամանը ՀՀ պետական բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման մասին, 25.11.1996թ.):

2013-2014 ուսումնական տարում համալսարանի աշխատակազմը ընդգրկում է 777 աշխատող, որից դասավանդող անձնակազմը կազմում է 515 մարդ (66%), ուսումնաօժանդակ անձնակազմը՝ 80 մարդ (10%), այլ՝ 182 մարդ (24%) (գծապատկեր 4) (հավելված 5.3): Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի աշխատակազմն ընդգրկում է համապատասխանաբար 78 և 31 աշխատող, որից դասավանդող անձնակազմը համապատասխանաբար՝ 42 (53.8%) և 25 (80%) մարդ, այլ՝36 (46.2%) և 6 (20%) մարդ:

ՀՊՏՀ հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմը կազմում է դասավանդող անձնակազմի 76.89%-ը (396 մարդ), որը համապատասխանում է Կառավարության սահմանած հիմնական ՊՖԴ կազմին ներկայացվող պահանջին՝ գերազանցելով այդ ցուցանիշը գրեթե 53.78%-ով (տե՛ս ՀՀ Կառավարության 09.07.2009թ. N808-Ն որոշման հավելված N15, էջ 71): Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմը կազմում է դասավանդող անձնակազմի համապատասխանաբար՝ 73.8%-ը (31 մարդ) և 60%-ը (15 մարդ): ՀՊՏՀ-ում համատեղությամբ և ժամավճարով դասավանդողները կազմում են դասավանդող անձնակազմի համապատասխանաբար՝ 18.06% (93 մարդ) և 5.05% (26 մարդ) (գծապատկեր 5): Հարկ է նշել, որ համատեղությամբ և ժամավճարով աշխատողները պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում ՀՀ պետական կառավարման մարմիններում և մասնավոր հատվածի առաջատար կազմակերպություններում:



Գծապատկեր 4. ՀՊՏՀ աշխատակազմը 2013-2014 ուստարում (առանց Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի)



Գծապատկեր 5. ՀՊՏՀ դասավանդող անձնակազմի կառուցվածքը 2013-2014 ուստարում (առանց Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի)

ՀՊՏՀ հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի 8.08%-ը (32 մարդ) ունեն դոկտորի, 59.09%-ը (234 մարդ)՝ թեկնածուի գիտական աստիճան, իսկ 32.83%-ը (130 մարդ) չունի:



Գծապատկեր 6. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական աստիճանաշնորհման մակարդակը 2013-2014 ուստարում (առանց Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի)



Գծապատկեր 7. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական կոչումները 2013-2014 ուստարում (առանց Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի)

ՀՊՏՀ հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի 43.18%-ը (171 մարդ) ունի դոցենտի, 9.09%-ը՝ պրոֆեսորի (36 մարդ), 0.25%-ը (1 մարդ)՝ ակադեմիկոսի գիտական կոչումներ (հավելված 5.3):

Գյումրու մասնաճյուղի դասավանդող անձնակազմի 52.38%-ը (22 մարդ) ունի գիտական աստիճան, իսկ 28.57%-ը (12 մարդ)՝ գիտական կոչում: Եղեգնաձորի մասնաճյուղում դասավանդող անձնակազմի 60%-ը (15 մարդ) ունի գիտական աստիճան, իսկ 32%-ը (8 մարդ)՝ գիտական կոչում:

Այսպիսով՝ ՀՊՏՀ (առանց Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի) հիմնական դասավանդող անձնակազմի 67.17%-ը ունի պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան, իսկ 52.53%-ը՝ գիտական կոչում, որ համապատասխանում է ՀՀ Կառավարության կողմից սահմանված բուհի ՊՖԴ կազմի գիտական

աստիճանի և/կամ կոչմանը ներկայացվող պահանջներին (տե՛ս ՀՀ Կառավարության 09.07.2009թ. N808-Ն որոշման հավելված N15, էջ 71): Բուհի ՊՖԴ կազմով ապահովվածությունը հնարավորություն է տալիս իրականացնելու բուհի առաքելությունը և իրագործելու մասնագիտական կրթական ծրագրեր:

ՀՊՏՀ ՊՖԴ և ուսումնաօժանդակ կազմի խրախուսման քաղաքականությունը ամրագրված է ՀՊՏՀ-ի ներքին կարգապահական կանոններում և գիտամանկավարժական, ՊՖԴ կազմի ձևավորման կանոնակարգում: Աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում բարձր ցուցանիշներ ապահովելու և հանձնարարությունները պատշաճ կատարելու համար աշխատողների համար կարող են կիրառվել խրախուսման հետևյալ միջոցները՝ շնորհակալության հայտարարում, միանվագ դրամական պարգևատրում, ՀՊՏՀ-ի հուշամեդալով պարգևատրում, արժեքավոր նվերով պարգևատրում, պատվոգրով պարգևատրում և կարգապահական տույժի հանում:

Գիտական որակավորման բարձրացման խթանման նպատակով համալսարանում սահմանվում է ՊՖԴ անձնակազմի աշխատավարձերի շերտավորում՝ կախված գիտական աստիճանից և կոչումից (հավելված 5.1, էջ 4): Վերջին տարիներին բուհում կիրառվում է հավելավճարի կարգը, որը հաստատվում է գիտական խորհրդի նիստի որոշումներով և հիմնվում է համալսարանի տնտեսումների վրա: Հավելավճարի չափը տատանվում է հիմնական աշխատավարձի 50-100%-ի սահմաններում:

Համալսարանում մշակված գիտամանկավարժական, ՊՖԴ կազմի պաշտոնների տեղակալման և առաջքաշման չափանիշները հնարավորություն են տալիս ապահովելու աշխատակազմի ձևավորման և պահպանման քաղաքականության արդյունավետություն: Այդ չափանիշներն են՝ որակավորման մակարդակը, գիտական աստիճանը, գիտական կոչումը, ուսումնական, հետազոտական, մեթոդական-կազմակերպչական գործունեության ձևերը և տպագրված գիտական աշխատանքները, ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատումը, դասալսումները:

Գոյություն ունեցող քաղաքականությունը և ընթացակարգերը հնարավորություն են տալիս իրագործելու բուհի առաքելությունը և իրականացնելու ՄԿԾ-ների նպատակները, սակայն քաղաքականությունը և ընթացակարգերն ունեն արդիականացման և կատարելագործման անհրաժեշտություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Բուհի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են ՊՖԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ

Ուսումնական հաստատությունում բակալավրի և մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով՝ ըստ գործող կարգի (տե՛ս ՀՀ Կառավարության 09.07.2009թ. N808-Ն որոշման հավելված N15, էջ 71, 72):

Յուրաքանչյուր մասնագիտության համար դասախոսներ ընտրելիս ՀՊՏՀ-ն հիմնվում է վերջինիս բազային կրթության, աշխատանքային փորձի (դասավանդման), արտադրական փորձի (տվյալ ոլորտի), մրցույթի և որակավորման արդյունքների վրա:

Մասնագիտության կրթական ծրագրի ՊՖԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները սահմանված են ՀՊՏՀ գիտամանկավարժական, ՊՖԴ կազմի ձևավորման կանոնակարգում: Վերջինիս մեջ, ըստ ՊՖԴ պաշտոնների, սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպական գործունեության բնագավառները, որտեղ տարանջատված է պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի իրավասությունների շրջանակը: Այս սկզբունքները կիրառվում են նաև Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում:

ՀՊՏՀ հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի թվաքանակի բաշխվածությունն ըստ գիտության բնագավառների ներկայացված է գծ. 8-ում:



Գծապատկեր 8. ՊՖԴ անձնակազմի թվաքանակի բաշխվածությունը ըստ գիտության բնագավառի 2012-2013 ուստարում (առանց Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի)

Գծապատկերից երևում է, որ հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի 68%-ը ունի տնտեսագիտական կրթություն, որը կազմում է հանրապետությունում տնտեսագիտության բնագավառի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի 37%-ը: Հարկ է նշել նաև, որ 253 դասավանդողից 18-ը ունի դոկտորի, իսկ 167-ը՝ թեկնածուի գիտական աստիճան, որը կազմում է հանրապետության տնտեսագիտության բնագավառի գիտական աստիճան ունեցող դոկտորների և թեկնածուների համապատասխանաբար՝ 42.8 և 42.7%-ը: ՀՊՏՀ-ում դասավանդում են հանրապետության տնտեսագիտության բնագավառի պրոֆեսորների և դոցենտների համապատասխանաբար՝ 44.2 և 41.08%-ը[1]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Բուհը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար

ՀՊՏՀ-ում գործում են դասախոսական կազմի պարբերաբար գնահատման մի շարք ընթացակարգեր, որոնց շարքում կարևորվում են դասավանդման որակի և արդյունավե-

[1] Հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ.: ՀՀ, ԱՎԾ, 2013թ. տվյալների հիման վրա, էջ 190:

տության վերաբերյալ ուսանողական հարցումները և դասալսումները, համալսարանի մշակած, բայց մասնակի կիրառվող մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ժամանակավոր կարգը, որտեղ ամրագրված են ՊՖԴ կազմի մասնագիտական որակի, ինչպես նաև նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունը արտահայտող կառուցակարգերն ու գործիքները և համապատասխան ընթացակարգերը (հավելված 10.1):

Ուսանողական հարցումների արդյունքների վերլուծությունը և բարելավող միջոցառումների իրականացումը, ընդհանուր առմամբ, նպաստում են դասախոսների աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը: Սակայն հարցման միջոցով ստացված անհատական տվյալները արդյունավետ չեն արտացոլում դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունները, քանի որ դրանք հաճախ կրում են սուբյեկտիվ բնույթ:

Դասալսումների համար հատկացվում է համապատասխան ժամանաքանակ և սահմանվում է ժամանակացույց: Դասալսումները իրականացնում են ամբիոնի վարիչները, սակայն դասալսումների արդյունավետությունը գնահատելու համար մշակված չեն հստակ պահանջներ և ընթացակարգեր:

Մշակվում է աշխատանքի վարձատրության տարբերակման նոր մեխանիզմ և «Ակադեմիական հավելավճարների» կարգ (նախագիծը առկա է), ինչը կնպաստի դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Չափորոշիչ 5ա-ում վերլուծված ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնելու, որ այս փոփոխությունները բուհի համար արդիական են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ բուհն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ

ՀՀ կրթական շուկայի մրցակցային պայմանները, բարձրագույն կրթության համակարգում կուտակված ու ներկայումս ընդլայնվող միջազգային փորձը, գիտական, այդ թվում՝ տնտեսագիտական ուղղության տեղեկատվության ծավալների մշտական աճը, բուհում ուսուցանվող դասընթացների անվանացանկի նորացումը պայմանավորում են դասախոսական կազմի վերապատրաստման անհրաժեշտությունը: Վերապատրաստման նպատակներն են՝ դասախոսների որակավորման պարբերական բարձրացումը, դասախոսների նոր սերնդի ձևավորում, դասախոսական կազմի մասնագիտական ներուժի այնպիսի մակարդակի ապահովում, որ կհամապատասխանի կրթության միջազգային միտումներին և կբավարարի ՀՀ և միջազգային կրթական շուկայի մեծացող պահանջները:

Կադրերի որակավորման բարձրացման և վերապատրաստման նպատակով ՀՊՏՀ-ում վերակազմավորվել է Շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնը, որը

պարբերաբար իրականացնում է դասախոսների վերապատրաստում: Յուրաքանչյուր ուսումնական տարում վերապատրաստվում է համալսարանի դասախոսների մոտ 20%-ը, այսինքն՝ 5 տարվա ընթացքում բուհի գրեթե ամբողջ դասախոսական կազմը անցնում է վերապատրաստում (հավելված 5.4): Այս նպատակի իրագործմանը նպաստում է նաև Արտաքին կապերի բաժինը, Որակի ապահովման բաժինը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության կառավարման ամբիոնը: ՀՊՏՀ-ն միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի միջազգային կազմակերպությունների, համալսարանների և հաստատությունների հետ, որոնց շրջանակում նախատեսվում է դասախոսների վերապատրաստում: Համագործակցության պայմանագրեր են կնքվել նաև ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը, մասնավորապես՝ ՌԴ Մ. Լոմոնոսովի անվան պետական և ԱՄՆ Ֆլորիդայի համալսարանների հետ:

2012-ից գործողության մեջ է դրվել «ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը», որը աջակցություն է ցուցաբերում ՊՖԴ կազմի գիտական որակավորման բարձրացմանը (հավելված 6.2): Այս նպատակի իրագործմանը նպաստում է նաև 2013թ. ստեղծված «Ամբերդ» գիտահետազոտական կենտրոնի գործունեությունը: Ներհամալսարանական գիտական և հետազոտական աշխատանքների կատարման մրցույթի գլխավոր ուղղություններ սահմանվել են ՀՀ Կառավարության 2012-2017թթ. ծրագրի գերակայությունները: ՀՊՏՀ-ում իրականացվում են նաև բյուջետային ֆինանսավորմամբ հետազոտություններ, ինչը ևս հնարավորություն է տալիս ՊՖԴ կազմին ընդգրկվելու գիտահետազոտական աշխատանքներում: ՀՊՏՀ ՊՖԴ կազմի որակավորման բարձրացմանը նպաստում են նաև ԵՄ TEMPUS ծրագրի շրջանակներում իրականացվող վերապատրաստման դասընթացները, որոնց ընթացքում արդեն վերապատրաստվել է 15 դասախոս:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Բուհը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը

ՀՊՏՀ-ի գիտամանկավարժական, ՊՖԴ կազմի ձևավորման կարգը կոչված է նպաստելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊՖԴ կազմի ընտրությանը և պահպանմանը: Այս գործընթացում առաջնահերթ նշանակություն ունի ՊՖԴ կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղեկալման կարգը:

2011-2012, 2012-2013, 2013-2014 ուսումնական տարիների ընթացքում բուհը պահպանել է իր կադրային ներուժը, այդ թվում նաև՝ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում: Ուսանող/դասախոս հարաբերակցության գործակիցը կազմում է 14.3, իսկ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում համապատասխանաբար՝14 և 11.3, կանանց տեսակարար կշիռը ՊՖԴ-ում 55% է:

ՊՖԴ կազմով ապահովվածության կայունության տեսանկյունից կարևորվում է նաև երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականությունը, որի իրականացման արդյունքում ՊՖԴ կազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ կադրերով:

ՊՖԴ կազմով ապահովվածության կայունությանը նպաստում է նաև աշխատանքի վարձատրության չափը, դրա դինամիկ աճը: Ստորև գծապատկերում ներկայացվում է աշխատանքի վարձատրության դինամիկան՝ ըստ տարիների:



<u>Գծապատկեր 9.</u> ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի վարձատրության դինամիկան 2007-2013թթ.

Աշխատանքի վարձատրության աճի դինամիկայի վերլուծությունը, ինչպես նաև այդ ցուցանիշի համեմատումը այլ բուհերի համանման ցուցանիշների հետ, թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՊՏՀ աշխատավարձի մակարդակը ապահովում է աշխատակազմի կայունությունը, ինչը համահունչ է եղել 2006-2011թթ. ռազմավարական գերակայություններին (հավելված 1.2): ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում աշխատանքի վարձատրության չափը ևս տարիների ընթացքում աճել է, սակայն այն տարբերվում է (համամասնորեն ցածր է՝ պայմանավորված ուսման վարձավճարների ցածր մակարդակով) մայր բուհի համանման ցուցանիշից: Այնուամենայնիվ, այդ ցուցանիշը՝ համեմատած մյուս բուհերի և դրանց մասնաճյուղերի հետ, մնում է կայուն բարձր:

Նշենք նաև, որ ՀՊՏՀ-ն իր ֆինանսական հնարավորությունների սահմաններում հատուցում է 259 աշխատողների ապահովագրավճարների գերակշիռ մասը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Բուհում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր

ՀՊՏՀ-ում ՊՖԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման միասնական քաղաքականության բաղադրիչներն են ՀՊՏՀ-ի գիտամանկավարժական, ՊՖԴ կազմի ձևավորման կարգը, որտեղ սահմանված են պաշտոնների տեղակալման և առաջքաշման չափանիշները, հաջորդականությունը, ՀՊՏՀ դասախոսների վերապատրաստման կարգը և խրախուսման ընթացակարգերը:

ՀՊՏՀ ՊՖԴ կազմի ձևավորման կարգը կարգավորում է նաև դասախոսների մասնագիտական առաջընթացը, քանի որ հստակ սահմանված են ՊՖԴ կազմի տարակարգերը, ինչպես նաև տվյալ տարակարգերին հավակնելու որակավորման պահանջ-

ները: Համալսարանում դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումները շնորհվում են համաձայն ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի Հ-615 որոշման:

Գործում է գիտական խորհրդին կից համահամալսարանական մրցութային հանձնաժողով, որը համակարգում է ՊՖԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման ընթացակարգերը: Ստորև գծապատկերում ամփոփած են 2007-2012թթ. ընթացքում ՀՊՏՀ ՊՖԴ կազմի առաջընթացի արդյունքները.



Գծապատկեր 10. ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի առաջընթացի ցուցանիշները



Գծապատկեր 11. ՀՀ ԲՈՀ-ի կողմից պրոֆեսորի և դոցենտի կոչման վկայագիր ստացածների թիվը 2007-2012 թթ.

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Բուհն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար

Ռազմավարական նպատակների իրականացման համար համալսարանն ունի համապատասխան վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ: Համաձայն ՀՊՏՀ կանոնադրության՝ համալսարանը ինքնուրույն է իր կառուցվածքի ձևավորման հարցում (հավելված 1.1): Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի հաստիքացուցակի ձևավորումը և աշխատանքային պարտականությունների սահմանումը կարգավորվում են ՀՊՏՀ կանոնադրությամբ և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններով:

ՀՊՏՀ ընթացող բարեփոխումներին զուգահեռ, ստեղծվել և վերակազմավորվել են մի շարք ստորաբաժանումներ, որոնք կոչված են համակարգելու ուսումնական գործընթացը և իրագործելու բուհի առաքելությունը: Ի կատարումն 2006-2011թթ. ռազմավարական ծրագրի նպատակների, կարելի է փաստել, որ վարչական անձնակազմը լուծել է իր առջև դրված խնդիրները և ապահովել կառավարման բարձր արդյունավետություն:

Ուսումնաօժանդակ անձնակազմը կազմում է ՀՊՏՀ աշխատակազմի 10%-ը: Ուսումնաօժանդակ անձնակազմի գործառույթները սահմանվում են համապատասխան պաշտոնի հրահանգներում, ինչը հնարավորություն է տալիս վերահսկելու սահմանված պարտականությունների կատարումը: ՀՊՏՀ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովման նպատակով անձնակազմի որոշ խմբերի համար իրականացվում են վերապատրաստում և ատեստավորում: Չափորոշիչ ե-ում ՊՖԴ կայունությունը ապահովող բոլոր գործոններն առկա են նաև վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի մասով:

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակն ապահովող հստակ կառուցակարգեր և գործիքներ մշակված չեն, բացակայում են նաև հաստիքների ձևավորման կառուցակարգերն ու նորմատիվները:

Առկա վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը հնարավորություն է տալիս իրագործելու բուհի առաքելությունը, հասնելու ՄԿԾ-ների նպատակներին և պատրաստ է արձագանքելու հետագա զարգացումներին:

Չափանիշ 5-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար:	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ-ում ՊՖԴ 396 հաստիքային, ինչպես նաև 119 փորձառու և բարձր որակավորմամբ հրավիրյալ մասնագետների կազմի առկայությունը/կայունությունը հնարավորություն է տալիս իրագործելու բուհի առաքելությունը և իրականացնելու կրթական ծրագրերի նպատակները: 2. Դասավանդման ժամանակակից մեթոդներին անհրաժեշտ տեխնիկական միջոցների և պայմանների առկայությունը: 3. ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմում տնտեսագիտության բնագավառի գիտության թեկնածուների և դոկտորների, դոցենտների և պրոֆեսորների բարձր տեսակարար կշիռը ՀՀ-ում: 4. Ուսանող/դասախոս հարաբերակցությունը՝ 14.3: 5. Աշխատակիցների խրախուսման մեխանիզմների առկայությունը: 6. ՀՊՏՀ աշխատանքի վարձատրության բարձր մակարդակը, դրա դինամիկ աճը՝ համեմատած	1. Միջազգային ծրագրերով դասախոսների վերապատրաստման հնարավորություն: 2. ՀՊՏՀ աշխատակիցների խրախուսման հնարավորություններ միջազգային համագործակցության շրջանակում: 3. Համագործակցություն արտասահմանյան ԲՈՒՀ-երի հետ

այլ բուհերի: 7. Շահադրդման կառուցակարգերի առկայությունը, մասնավորապես գործող հավելավճարների համակարգը, բժշկական ապահովագրությունը: 8. Երիտասարդ կադրերով համալրումը: 9. ՀՊՏՀ-ում գործող ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրումը, ինչպես նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումը ապահովում են աջակցություն ՊՖԴ կազմի գիտական որակավորման և նյութական ապահով-վածության բարձրացմանը: 10. «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսի և «Տնտեսագետ» ամսագրի գործունեությունը:	
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնաօժանդակ աշխատակազմի մասնագիտական մակարդակի և որակավորման աստիճանի, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ու գործարար գործընթացների կազմակերպման մեթոդների յուրացման կարողության նկատմամբ պահանջների անկատար ընթացակարգեր: 2. Մասնագիտական որակների և կատարած աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունը արտահայտող կառուցակարգերի և գործիքների անկատարություն: 3. Դասախոսների միջազգային շարունակական վերապատրաստման բացակայություն: 4. Աշխատակազմի խրախուսման ճկուն կառուցակարգերի բացակայություն: 5. Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի հաստիքների ձևավորման կառուցակարգերի ու նորմատիվների, ինչպես նաև գործունեության որակն ապահովող հստակ կառուցակարգերի և գործիքների անկատարություն:	1. Կրթական զարգացումների և նորամուծությունների հարափոփոխ ընթացքին պրոֆեսորադասախոսական կազմի դանդաղ հարմարվողականությունը: 2. Փոփոխությունների նկատմամբ բացասական վերաբերմունքը պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնաօժանդակ աշխատակազմի կողմից: 3. Սոցիալական վիճակի վատթարացումը: 4. Արտագաղթը:

Բարելավման ուղղություններ

1. Արդիականացնել ՊՖԴ կազմի ձևավորման քաղաքականությունը և գործող ընթացակարգերը:
2. Մշակել ՊՖԴ և ուսումնաօժանդակ աշխատակազմի մասնագիտական մակարդակի և որակավորման աստիճանի, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ու գործարար գործընթացների կազմակերպման մեթոդների յուրացման կարողության նկատմամբ պահանջներ
3. Մշակել մասնագիտական որակների և կատարած աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունը արտահայտող կառոցակարգեր և գործիքներ:
4. Իրականացնել դասախոսների շարունակական վերապատրաստում՝ այդ գործընթացում ներգրավելով նաև միջազգային առաջատար գիտակրթական կենտրոններ:
5. Մշակել սկսնակ դասախոսների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, ընդլայնել երիտասարդ դասախոսների աջակցության դրամաշնորհային ծրագրերը:
6. Վերանայել համատեղությամբ դասավանդողների կազմը՝ նրանց տեսակարար կշիռը համալրելով համապատասխան ոլորտի առաջատար մասնագետներով:
7. Մշակել և ներդնել աշխատակազմի խրախուսման ճկուն կառուցակարգեր՝ սահմանելով աշխատավարձերի և լրավարձերի տարբերակման սանդղակ:
8. Մշակել և ներդնել վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի հաստիքների ձևավորման կառուցակարգեր ու նորմատիվներ, ինչպես նաև գործունեության որակն ապահովող հստակ կառուցակարգեր և գործիքներ:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Բուհն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ

Չափորոշիչ ա. Բուհում առկա է հետազոտական ոլորտում հետաքրքրություններ և հավակնություններ արտահայտող ռազմավարություն

Հետազոտական ոլորտում ՀՊՏՀ հետաքրքրությունների և հավակնությունների համար հիմք են ծառայում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-119, 05.12.2000թ.), ՀՀ Կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի N20 արձանագրային որոշմամբ հաստատված «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» և ՀՀ Կառավարության 2011թ. մարտի 18-ի նիստի N10 արձանագրային որոշմամբ հաստատված «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագիրը»:

Հետազոտական աշխատանքները և դրանց կապն ուսումնառության հետ ՀՊՏՀ զարգացման առաջնահերթություններից է: ՀՊՏՀ–ում գիտահետազոտական աշխա-

տանքների ռազմավարական ուղղությունները ներկայացված են «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները 2006-2011թթ.» փաստաթղթում, ՀՊՏՀ խորհրդի 2011թ. ապրիլի 26-ի N 3 նիստի որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի զարգացման հայեցակարգային դրույթներում», ինչպես նաև ՀՊՏՀ 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգում (տես՝հավելված 6.1), որտեղ որպես գերակայություն նշված է կրթական և գիտական գործունեության բարձր որակի ապահովումը՝ դրանց ինտեգրման և փոխհարստացման ճանապարհով: Համաձայն հայեցակարգի նախագծի դրույթների՝ ՀՊՏՀ զարգացման գերակայություններից է կրթական և գիտական գործունեության բարձր որակը, որն ապահովվում է այդ երկու ոլորտների ինտեգրմամբ: Սույն փաստաթղթերով հիմնավորված ռազմավարության նպատակն է ընդլայնել հետազոտական աշխատանքները ՀՊՏՀ-ում, որի իրականացման կառուցակարգերը ձևակերպված են 17 ռազմավարական ուղղություններում:

Համաձայն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի զարգացման հայեցակարգային դրույթների»՝ ՀՊՏՀ-ում կրթական, գիտատեխնիկական, նորաստեղծական հնարավորությունների հիման վրա գիտահետազոտական գործունեության զարգացումը հիմնված է ըստ գիտության, բարձրագույն կրթության և երկրի տնտեսության գերակա ուղղությունների: Այս ուղղությամբ կատարված առաջընթաց է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումը: ՀՊՏՀ խորհրդի հավանությամբ 2013թ. հիմնադրված «Ամբերդ» հետազոտական կենտրոնի առաքելությունը ՀՊՏՀ-ում գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացումն է:

Կենտրոնի առանցքային նպատակը համալսարանի գիտական մտքի համախմբմամբ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման և տնտեսական անվտանգության ապահովման ոլորտներում հետազոտությունների իրականացումն է:

ՀՊՏՀ-ում գիտահետազոտական գործունեությունն իրականացվում է ամբիոններում: Գիտահետազոտական գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու տարածումն իրականացնում են գիտության և ասպիրանտուրայի բաժինները:

ՀՊՏՀ-ում գիտահետազոտական աշխատանքները կրում են հիմնարար և կիրառական բնույթ, իսկ դրանց արդյունքները մասնագիտական հանրությանն են ներկայացվում գիտական ժողովածուների, հանդեսների, մենագրությունների, պաշտոնական կայքի և տեղեկատվության տարածման այլ միջոցներով:

ՀՊՏՀ-ում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումների համատեքստում առանցքային է թողարկող և սպասարկող ամբիոններում կատարվող գիտահետազոտական աշխատանքների դերը, որոնք նպաստում են մի կողմից՝ ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և փոփոխություններին ժամանակին ու պատշաճ արձագանքելու ամբիոնների կարողությունների մեծացմանը, իսկ մյուս կողմից՝ հայրենական տնտեսագիտական մտքի զարգացմանը, երկրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակմանը: Այս առումով համալսարանում կատարվել են որոշակի աշխատանքներ:

2009-2013թթ. հետազոտությունների և զարգացման տեսանկյունից ՀՊՏՀ գիտական ներուժը բավական բարձր է գնահատվում, համալսարանն ունի գիտահետազոտական գործունեության բազմամյա փորձ և հարուստ ավանդույթներ: Միայն 2012 թվականին համալսարանում գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել 48 թեմայով, որոնցից 46-ը՝ ամբիոնային (http://media.asue.am/upload/AMBION_GIT_TEMANER.pdf), 2-ը՝ բյուջետային ֆինանսավորմամբ: Հետազոտությունները վերաբերում են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, բանասիրության առավել արդիական, գիտագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին: Ստացվել են գիտական որոշակի արդյունքներ տարածքային կառավարման և համաչափ զարգացման, կառավարչական հաշվառման մեթոդաբանության և կենսաթոշակային համակարգի կատարելագործման, տնտեսական բարեփոխումների սիներգետիկայի, մրցունակության գնահատման չափանիշների կատարելագործման, աշխատանքի շուկայի ու զբաղվածության, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում աշխատանքի առաջարկի գնահատման, ծառայությունների ոլորտի պայմանագրային հարաբերությունների բարելավման, ռազմավարական կառավարման, երկրորդային ռեսուրսների օգտագործման էկոլոգիատնտեսական ապահովման բնագավառներում:

2012թ. Գիտության պետական կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի շրջանակներում ՀՊՏՀ-ում բյուջետային ֆինանսավորմամբ կատարվել է երկու թեմա՝ «Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական և սոցիալական զարգացման վրա» և «Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում»:

Համալսարանի գիտական խորհրդի 2012թ. մայիսի 31-ի N 11 նիստի որոշմամբ 2012թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ է դրվել ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական դրամաշնորհների կարգը (հավելված 6.2), համաձայն որի՝ առաջին անգամ հանրապետությունում հայտարարվել է ներհամալսարանական գիտական և գիտահետազոտական աշխատանքների կատարման մրցույթ: Մրցույթի արդյունքներով ընտրված գիտահետազոտական նախագծերը ֆինանսավորվել են 2013թ. հունվարի 1-ից:

«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում: ՀՊՏՀ-ում, ինչպես նաև Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում, կազմակերպվում են տարեկան գիտական նստաշրջաններ, հանրապետական և միջազգային գիտաժողովներ, գիտական սեմինարներ, դասախոսների հեղինակությամբ հրատարակվում է զգալի թվով մասնագիտական գրականություն (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասախոսությունների տեքստեր, մենագրություններ և այլն):

ՀՊՏՀ-ում մշակվել է և պրոֆեսորադասախոսական կազմի քննարկմանն է ներկայացվել «Ակադեմիական հավելավճարների կարգի» նախագիծը, որով գիտահետազո-

տական գործունեության խրախուսման նպատակով նախատեսվում է հավելավճարներ սահմանել ակադեմիական հաջողությունների և ՀՊՏՀ գիտական վարկանիշում ներդրման համար:

ՀՊՏՀ-ի և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության միջև ձեռք բերված համաձայնության շրջանակներում 2013-2014թթ. նախատեսվում է իրականացնել համատեղ հետազոտական աշխատանք, կազմակերպել քննարկումներ և կլոր սեղաններ «Հայաստանում ներառական տնտեսությանն ընդառաջ» թեմայով:

Չափորոշիչ բ. Բուհն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում բուհի հետաքրքրությունները և հավակնությունները

ՀՊՏՀ հետազոտական գործունեության երկարաժամկետ ռազմավարությունը համալսարանի գործունեության ընթացքում կատարված տնտեսագիտական հետազոտությունների շարունակականությունը, հետագա զարգացումը, միջազգայնացումն ու առևտրայնացումն է:

ՀՊՏՀ-ում միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի իրականացման հիմք է «ՀՊՏՀ 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգը»:

Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ գիտության պետական կոմիտեի և ՀՀ ԿԲ հետ համագործակցության շրջանակներում ՀՊՏՀ-ն իրականացրել է միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտական ծրագրեր, որոնց ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է ՀՀ և համաշխարհային տնտեսության ոլորտները: Հետազոտություններում ընդգրկվել է ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական և ասպիրանտական կազմը: 2009-2013թթ. Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում ընդլայնվել է գիտահետազոտական ծրագրերին մասնակցության շրջանակը:

ՀՊՏՀ-ում իրականացվող հետազոտությունների ուղղությունները ներկայացված են ամբիոնների համար նախանշված երկարաժամկետ գիտահետազոտական թեմաների ցանկում: ՀՊՏՀ մասնագիտական և ոչ մասնագիտական ամբիոններն իրականացնում են շուրջ 48 գիտահետազոտական թեմա:

Կարճաժամկետ բնույթ ունեն 2013թ. հաստատված անհատական, ամբիոնային, միջամբիոնային և ստեղծագործական խմբի հիմունքներով ՀՊՏՀ նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ իրականացվող ներհամալսարանական գիտական դրամաշնորհային 19 ծրագրերը:

2013թ. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում կարճաժամկետ հետազոտական նախագծեր են իրականացվում 15 ուղղություններով (www.asue.am/am/ էջեր-220/ամբերդ-հետազոտական-կենտրոն-1057):

ՀՊՏՀ գիտության բաժինն իրականացնում է կարճաժամկետ և երկարաժամկետ գործողություններ (հավելված 6.3):

ՀՊՏՀ դասախոսները մասնակցել են նաև հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, ինչպես նաև գիտնականների փոխանակման միջազգային հեղինակավոր գիտահետազոտական ծրագրերի (ԱՄՆ պետական դեպարտամենտի

Ֆուլբրայթ գիտական ծրագիր, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության գիտահետազոտական ծրագիր) մրցույթներին և միջնաժամկետ ու երկարաժամկետ գիտական աշխատանքներ իրականացրել ԱՄՆ-ի, Գերմանիայի և այլ երկրների համալսարաններում:

Չափորոշիչ գ. Բուհն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով

ՀՊՏՀ-ում հետազոտության զարգացումն ապահովվում է սույն չափանիշի ա և բ չափորոշիչներում նշված փաստաթղթերի միջոցով:

Գիտահետազոտական աշխատանքների քննարկման, հաշվետվողականության և արդյունքների ներկայացման համար սահմանվում է ժամանակացույց («ՀՊՏՀ ներքին գիտական դրամաշնորհների III միջանկյալ հաշվետվությունների շնորհանդեսի անցկացման ժամանակակից» http://media.asue.am/upload/dramashnorh.pdf և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական ուղղությունների ղեկավարների կողմից նախընտրելի թեմաներով սեմինարների անցկացման ժամանակացույց» http://media.asue.am/upload/jamanakacuyc_verjnakan.pdf):

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2012թ. մայիսի 31-ի թիվ 11 որոշման համաձայն՝ 2012թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ է դրվել ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը (հավելված 6.2), որով սահմանվում է գիտական գործունեության համար ՀՊՏՀ արտաբյուջետային միջոցներից ֆինանսավորվող դրամաշնորհների ստացման (աշխատակիցների, ասպիրանտների, հայցորդների և ուսանողների կողմից ներկայացվող հայտերով) մրցույթի անցկացման, ներհամալսարանական գիտական դրամաշնորհների մրցույթի կազմակերպման ընթացակարգը: Կարգում, մասնավորապես, ներկայացված են դրամաշնորհների մրցույթի կազմակերպման ընթացակարգը, մրցույթի մասնակիցներին, նախագծերին և հայտերին ներկայացվող պահանջները, հայտերի գնահատման չափանիշները, մրցութային հանձնաժողովի ձևավորման և դրամաշնորհների հայցման մրցույթի ամփոփման կարգերը: Մրցույթի գլխավոր ուղղություններ են սահմանվել ՀՀ Կառավարության 2012-2017թթ. ծրագրի գերակայությունները՝ տնտեսության մրցունակության բարձրացում, մարդկային կապիտալի զարգացում, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

Ամբիոնները գիտական աշխատանքների վերաբերյալ տալիս են տարեկան հաշվետվություններ, որոնք ներառվում են ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ: ՀՊՏՀ ռեկտորի տարեկան և ՀՊՏՀ գիտական աշխատանքների տարեկան հաշվետվություններում (http://www.asue.am/am/էջեր-220//_հաշվետվություններ-549) մանրամասն և համակողմանի ձևով ներկայացվում են համալսարանի գիտական աշխատանքների ներկա վիճակը, ձեռքբերումները, առկա հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները, որոնք ուղենիշ են ծառայում ամբիոնների հետազոտական աշխատանքների կազմակերպման համար:

Ամբիոններում կազմակերպվում են նաև գիտական սեմինարներ, կլոր սեղաններ և

գիտական բանավեճեր: Ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունքները ներկայացվում են ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների տարեկան գիտական նստաշրջանում և գրախոսված հոդվածների տեսքով հրատարակվում են համապատասխան նյութերի ժողովածուում:

«Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսում հրատարակվող հոդվածների նկատմամբ կիրառվում են գիտական մակարդակի և հետազոտական բաղադրիչի բարձր պահանջներ: Հանդեսի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են շուրջ երկու տասնյակ գիտական ճանաչում և վաստակ ունեցող գիտնականներ:

Մենագրությունները, դասագրքերը և ուսումնական ձեռնարկները քննարկվում են ֆակուլտետների խորհուրդներում և գիտական խորհրդում, որից հետո երաշխավորվում են հրատարակության՝ հիմք ընդունելով ՀՀ ԲՈՀ-ի համապատասխան կանոնակարգերը: Անհրաժեշտության դեպքում դրանք գրախոսվում են նաև ՀՀ-ում գործող այլ բուհերում և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասնագիտական կառույցների և այլ հետազոտական հաստատությունների հեղինակավոր մասնագետների կողմից:

Համալսարանում տնտեսագիտական գիտություններով դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունները կազմակերպվում են ՀՊՏՀ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում՝ համաձայն ՀՀ-ում «Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգի»:

Գիտահետազոտական աշխատանքներն ակտիվացնելու և դրանք պահանջարկված դարձնելու համար ՀՊՏՀ-ն կարևորում է մասնավոր հատվածի հետ համագործակցությունը՝ գիտական արդյունքների առևտրայնացման նպատակով: ՀՊՏՀ 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական աշխատանքների զարգացման հայեցակարգի համաձայն՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությանն ուղղված առաջին քայլը պետք է լինի բիզնես-ինկուբատորների ստեղծումը:

Չափորոշիչ դ. Բուհը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը

Այս ոլորտում ՀՊՏՀ ռազմավարական նպատակն է խթանել համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացման գործընթացները և ապահովել համալսարանի ինտեգրում Եվրոպայի, ԱՊՀ և այլ հետազոտական տարածքներին:

ՀՊՏՀ-ն երկկողմ պայմանագրերի և համաձայնագրերի շրջանակներում գիտական համագործակցություն է իրականացնում աշխարհի տարբեր երկրների՝ Չեխիայի, Սլովակիայի, Կիպրոսի, Լատվիայի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Վրաստանի և այլ երկրների բուհերի ու գիտական կազմակերպությունների հետ, իսկ Եվրամիության հովանու ներքո գործող «Էրազմուս Մունդուս» ծրագրի շրջանակներում հետազոտող դասախոսների և ասպիրանտների փոխանակում է իրականացրել Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Բելգիայի, Հունաստանի և Բուլղարիայի համալսարանների հետ:

2009-2013թթ. ընդլայնվել է միջազգային գիտաժողովներին ՀՊՏՀ աշխատակիցների մասնակցության աշխարհագրությունը: 2009-2013թթ. ՀՊՏՀ ուսումնառողները և դասավանդողները մասնակցել են Հայաստանում և արտերկրում (Գերմանիա, Իտալիա, Հուն-

գարիա, Կանադա, Բուլղարիա, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Վրաստան և այլն) կայացած մի շարք միջազգային գիտաժողովների՝ նվիրված տնտեսագիտական, բնապահպանական, կրթական և այլ թեմաների: ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի բաժիններն այս առումով մշտապես աջակցում են ուսումնառողներին և դասավանդողներին՝ սպասվելիք միջազգային դրամաշնորհային ծրագրերի և գիտական նախագծերի վերաբերյալ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և օժանդակելով դրանց մասնակցության հայտադիմումների ձևակերպմանը:

Համալսարանի դասախոսների գիտական աշխատանքները (հոդվածներ, մենագրություններ) հրատարակվում են արտերկրի համալսարանների և գիտական հանդեսներում՝ հաճախ համագործակցելով նաև օտարերկրյա գիտնականների հետ: Հոդվածներ են հրատարակվում նաև միջազգային գրախոսվող վարկանիշային ամսագրերում: Այսպես, 2010թ. ՀՊՏՀ-ում հրատարակվել է 303 գիտական հոդված, որից 41-ը՝ արտերկրի գիտական հանդեսներում (2009թ.՝ 25ը): 2011թ. այդ թիվը կազմել է 338, արտերկրի գիտական հանդեսներում լույս տեսած գիտական հոդվածների թիվը կազմել է 31, իսկ 2012թ. 390 գիտական հոդվածից 59-ը հրատարակվել է արտերկրյա գիտական հանդեսներում: Ներկայացված վիճակագրությունը փաստում է, որ 2009-2011թթ. համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը զգալի առաջընթաց է ապահովել գիտահետազոտական աշխատանքների կատարման ուղղությամբ: Մասնավորապես՝ մեծացել է միջազգային հրապարակումների քանակը՝ կազմելով հրատարակված գիտական աշխատանքի 13,9%-ը, 2009թ. 7,6%-ի փոխարեն: 2012թ. այդ ցուցանիշը հասել է 15,2%-ի: 2013թ. 550 գիտական հոդվածներից 62-ը հրատարակվել է միջազգային ամսագրերում և գիտաժողովի նյութերում:

2011թ. «Էրազմուս Մունդուս. Համագործակցություն Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի համար, Լոտ 6, Գործողություն 2» ծրագրի շրջանակներում ՀՊՏՀ գիտությունների թեկնածու մեկ դասախոս 6 ամիս տևողությամբ հետատենախոսական գիտահետազոտական աշխատանք է կատարել Բուլղարիայի Ռուսեի համալսարանում:

Թեև միջազգային հետազոտական նախաձեռնություններում ՀՊՏՀ ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խթանելու ուղղությամբ կատարվել է զգալի աշխատանք, համալսարանի միջազգային գիտահետազոտական համագործակցությունը դեռևս ակտիվացման կարիք ունի:

ՀՊՏՀ գիտնականները շարունակաբար համագործակցում են գործընկեր համալսարանների գիտնականների հետ: Գիտահետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստում է գիտաժողովների համատեղ կազմակերպումը ՀՊՏՀ-ում և գործընկեր համալսարաններում:

Համալսարանը հաճախ է հյուրընկալում ՀՊՏՀ դասախոսների և ուսանողների համար բաց սեմինարներով կամ դասախոսություններով հանդես եկող այլ երկրների գիտնականների:

Նպատակ ունենալով խթանել ՀՊՏՀ ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը միջազգային հետազոտական նախաձեռնություններում՝ 12.06.13թ. ՀՊՏՀ գիտական խորհրդի նիստում որոշվել է. «ֆինանսական ռեսուրսների պլանավոր-

ման և բաշխման ժամանակ միջազգային գործունեությունը համարել ՀՊՏՀ զարգացման գերակա ուղղություն, միջոցներ համախմբել համալսարանի աշխատողներին համապատասխան հավելավճարներ սահմանելու նպատակով»:

Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD)՝ գիտնականների և բուհերի դասախոսների համար գիտական ծրագրի շրջանակում ՀՊՏՀ 2 դասախոս 2013թ. երկամսյա գիտահետազոտական աշխատանք են իրականացրել Գերմանիայի Տրիրի համալսարանում:

Եվրոպական հանձնաժողովի ֆինանսավորմամբ Տեմպուս ծրագրի շրջանակներում 2012-ից ՀՊՏՀ-ում իրականացվող նախագծերը պարունակում են որոշակի հետազոտական բաղադրիչ, որն արտահայտվում է համալսարան-գործատու կապի ամրապնդման համար աշխատաշուկայի պահանջների վերլուծության և ստացված արդյունքները կրթական համակարգում ինտեգրման մեխանիզմների մշակման, ինչպես նաև ՀՊՏՀ գործունեության վերաբերյալ շրջանավարտների կարծիքների ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

2013-2014թթ. ՀՊՏՀ-ում կմեկնարկի Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ «Հայաստանում ներառական տնտեսությանն ընդառաջ» թեմայով հետազոտական ծրագիր, որի շրջանակներում Հայաստանի, Վրաստանի և Շվեյցարիայի գիտնական հետազոտողների մասնակցությամբ կկազմակերպվեն ակադեմիական քննարկումներ և կլոր սեղաններ:

Աղյուսակ 7

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ						
	Ամսագիրը (երկիրը)	2009	2010	2011	2012	2013
1.	"Экономика" (Россия)	-	-	-	9	2
2.	"Экономика и менеджмент" (Россия)	1	-	-	6	3
3.	"Экономические и юридические науки" (Россия)	-	1	-	-	-
4.	"Известия аграрной науки" (Россия)	5	-	-	-	3
5.	"Человек и труд" (Россия)	2	2	2	5	-
6.	"Эко" (Россия)	1	-	-	-	-
7.	"Вестник Ростовского государственного экономического университета" (Россия)	3	8	10	6	6
8.	"Известия аграрной науки" (Грузия)	1	2	3	10	6
9.	"Хозяство и право" (Россия)	2	5	5	-	-
10.	"Предпринимательское право" (Россия)	1	-	-	-	-
11.	"Пространство экономики" (Россия)	2	-	-	2	-
12.	Вестник Донецкого университета (Украина)	-	2	-	5	1
13.	Наука (Россия)	-	-	-	4	-
14.	Философские науки (Россия)	-	-	1	-	1
15.	Сборник научных трудов, Телави (Грузия)	-	-	-	-	2
16.	"Мир перемен"(РАН) (Россия)	-	-	-	-	1
17.	"ЦЭМИ" (РАН) (Россия)	-	-	-	-	1
18.	Научные новости Грузии: меьдународный научный журнал. # 3 (Грузия)	-	-	1	-	-
19.	"Вестник Тамбовского университета. Сер.	-	-	1	-	-

	Гуманитарные науки" (Россия)					
20.	"Современная экономика: проблемы и решения" (Россия)	-	1	-	-	-
21.	"Вестник экономической теории" (Россия)	1	-	-	-	-

Աղյուսակ 8

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ						
	Ամսագիրը (երկիրը)	2009	2010	2011	2012	2013
1.	"Springer" (Bulgaria)	4	1	1	4	2
2.	Open journal of Modeling and Simulation (USA)	1	1	1	1	1
3.	“Current Politics and economics in the caucasus region” (USA)	-	-	-	-	2
4.	“Journal of Molecular Structure” (Taiwan)	-	-	-	1	-
5.	“Journal of Contemporary Physics” (Armenia)	1	-	1	2	-
6.	“Journal of communication and computer” (The Netherlands)	-	-	-	-	1
7.	Information Technologies and Management N2 (USA)	-	-	1	-	-

Աղյուսակ 9

ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ						
	Ամսագիրը	2009	2010	2011	2012	2013
1.	«Բանբեր», ՀՊՏՀ	47	59	61	73	70
2.	«Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա»	59	21	38	48	43
3.	«Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում»	44	30	13	23	4
4.	«Օրենք և իրականություն»	3	10	19	9	-
5.	«Էկոնոմիկա և իրավունք»	1	-	1	-	3
6.	«Ագրոգիտություն»	1	5	2	4	2
7.	«Կրթությունը և գիտությունը Արցախում»	-	-	1	2	1
8.	«21-րդ դար»	7	3	5	1	8
9.	«Վեմ»	4	2	3	5	1
10.	ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների»	11	5	3	3	4
11.	«Կառավարում»	-	-	-	-	1
12.	«Մանկավարժական միտք»	-	-	-	1	1

Ներկայացված աղյուսակների վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռևս սահմանափակ է ԱՊՀ և օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների թիվը, սակայն ներկայացված ցանկն ամբողջությամբ չի արտացոլում իրական պատկերը, քանի որ հոդվածների զգալի մասը լույս է տեսնում գիտաժողովի նյութերի տեսքով: Այդուհանդերձ, անհրաժեշտ է ընդլայնել ՀՊՏՀ աշխատակիցների գիտական հրապարակումների թիվը հատկապես ԱՊՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում:

Չափորոշիչ ե. Բուհում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ

ՀՊՏՀ 2012-2017թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգում (հավելված 6.1) որպես գերակայություն մատնանշված է կրթական և գիտական գործունեության բարձր որակի ապահովումը՝ դրանց ինտեգրման և փոխհարստացման ճանապարհով: Նշված գործընթացների կարևոր բաղադրիչ են հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացները փոխկապակցելու կառուցակարգերի ներկայիս վիճակի և գործընթացների վերանայումն ու բարելավման համակարգված ռազմավարության մշակումը:

ՀՊՏՀ դասախոսներն իրենց գիտական աշխատանքների արդյունքները և փորձը կիրառում են ՀՊՏՀ կրթական ծրագրերում, հատկապես հետազոտական կողմնորոշմամբ ունեցող մագիստրատուրայում դասավանդվող առարկաների ծրագրերում: Իսկ մագիստրատուրայի ուսանողները գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների ընթացքում ուսումնասիրում են դասախոսների գիտական աշխատանքները: ՀՊՏՀ ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաները հիմնականում առնչվում են ամբիոնների գիտական աշխատանքների թեմաներին:

Համալսարանի՝ հատկապես մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերում մեծ է հետազոտական բաղադրիչի կշիռը, որը նպաստում է ուսանողների և ասպիրանտների գիտահետազոտական աշխատանքների կատարման ունակությունների զարգացմանը: Բոլոր մասնագիտությունների գծով մագիստրատուրայում դասավանդվում է «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» առարկան: Ասպիրանտուրայում հետազոտողի կրթական ծրագրում, բացի հետազոտական բաղադրիչի առկայությունից (գիտական սեմինարներ, գիտական հոդվածներ և այլն), դասավանդվում է նաև «Գիտական գրագրություն» դասընթացը:

Հետազոտական բաղադրիչը կարևորվում է նաև գործատուների հետ համատեղ իրականացվող մագիստրոսական պիլոտային ծրագրերում:

«Կրթության կառավարում» մասնագիտացման համար մշակված կրթական ծրագրի օրինակելի ձևում ամբողջական մոդուլ է հատկացված քանակական և որակական հետազոտությունների հմտությունների ձեռքբերմանը: Ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագիրը ներկայումս գտնվում է փորձարկման փուլում, որից հետո նշված փորձը կտարածվի նաև ՀՊՏՀ մյուս մասնագիտությունների և մասնագիտացումների վրա:

Ասպիրանտուրայի և մագիստրատուրայի գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների ծրագրերում նույնպես մեծ է հետազոտական բաղադրիչի կշիռը և, հետևաբար, ուսումնական գործընթացների բարելավման համատեքստում հետազոտական ունակությունների զարգացումը համարվում է առաջնահերթություն: ՀՊՏՀ-ում 2011թ. հրատարակվել է «Մագիստրոսական ատենախոսության կատարման և պաշտպանության կազմակերպման մեթոդական ցուցումներ» ուսումնամեթոդական ուղեցույցը, որը մագիստրոսական հետազոտությունների համար հիմք է ծառայում:

Ուսանողների գիտելիքների յուրացման և հետազոտական հմտությունների կիրառման հնարավոր ուղիներից է ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող գիտական նաստաշրջաններին մասնակ-

ցությունը, որի արդյունքները քննարկվում և գնահատվում են ֆակուլտետի խորհրդի և ՀՊՏՀ գիտական խորհրդի նիստերում, լավագույն զեկույցների համար սահմանվում են խրախուսական մրցանակներ, ուսանողների հետազոտական աշխատանքները հրատարակվում են գիտաժողովի նյութերի տեսքով:

Նորաստեղծ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեության շրջանակներում իրականացվում են ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթություններից բխող հետազոտական ծրագրեր: Երիտասարդների շրջանում գիտական գործունեությունը խրախուսելու նպատակով հետազոտական կենտրոնի գրեթե բոլոր ծրագրերում ներգրավված են ասպիրանտներ: ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը համալսարանի գիտական մտքի համախմբման, կրթական գործընթացների հետ գիտական հետազոտությունների կապի ապահովման և գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման նպատակների իրականացումն ապահովում է հետազոտական ծրագրերում մագիստրոսների ներգրավմամբ:

Աղյուսակ 10

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապացման վերաբերյալ հարցման հարդյունքներ (հարցաթերթիկի նմուշը տե՛ս հավելված 7.2-ում)

Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից	58,3
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից	72,2
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից	-

Չափանիշ 6-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար:	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ ռազմավարական ծրագրում հետազոտություններին և զարգացմանը վերաբերող նպատակի առկայությունը: 2. 2013թ. ՀՊՏՀ-ում հիմնադրված «Ամբերդ» հետազոտական կենտրոնը կազմակերպական և նյութատեխնիկական նախադրյալներ է ստեղծում հետազոտական խմբերի ձևավորման, նախագծերի մշակման և նյութականացման համար: Հետազոտական կենտրոնը արդեն իսկ կյանքի կոչված ծրագրերի միջոցով ապահովում է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցում: 3. Կրթական վերջնարդյունքների վրա հիմնված նոր մագիստրոսական ծրագրերում կարևորվում են քանակական և որակական հետազոտություն-	1. Միջազգային և տարածաշրջանային հետազոտական ծրագրերում համալսարանի մասնակցության ընդլայնում: 2. Տեմպուսի և այլ միջազգային պայմանագրերով ամրագրված արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում: 3. Արտաքին շահառուների, մասնավորապես պայմանագրերով ամրագրված խոշոր գործատուների և

ների հմտությունները: 4. Միջազգային գիտաժողովներին և հետազոտական ծրագրերին ՀՊՏՀ աշխատակիցների մասնակցության ընդլայնման դրական դինամիկան: 5. Միջազգային համագործակցության շրջանակներում ՀՊՏՀ և աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդմանը նպաստող հետազոտությունների իրականացման հնարավորություն է ձեռք բերվել:	հասարակության հետ կապերի կատարելագործում:
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Նորամուծությունների և հետազոտությունների առևտրայնացման ցածր մակարդակը: 2. Օտար լեզվի, մասնավորապես միջազգային գիտական լեզվի՝ անգլերենի տիրապետման անբավարար մակարդակը: 3. Փոխկապակցված գիտահետազոտական նախաձեռնություններ իրականացնելու նպատակով օտարերկրյա համալսարանների հետ նոր գործընկերային հարաբերությունների ցածր մակարդակը: 4. Հետազոտական ծրագրերի կատարման, մշտադիտարկման և արդյունքների գնահատման ներքին ընթացակարգերի և չափանիշների բացակայություն:	1. Պետական ֆինանսավորմամբ գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման կտրուկ նվազում: 2. Հետազոտական աշխատանքների համար հատկացված ՀՊՏՀ ծախսային հոդվածների հնարավոր նվազում կապված արտաքին գործոնների ազդեցություններից՝ ուսման վարձերի և արտաքին այլ եկամուտների նվազմամբ:

Բարելավման ուղղություններ

1. ՀՊՏՀ աշխատակազմի և ուսումնառողների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության ընդլայնում:
2. Ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրի հետազոտական մոդուլի տարածում ՀՊՏՀ բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների վրա:
3. Հետազոտական ծրագրերի առևտրայնացման կամ նյութականացման նպատակով հետազոտական աշխատանքների առավել հստակ և կոնկրետ ուղղությունների սահմանում, հետազոտական աշխատանքների շահառու ընկերությունների ներգրավման հատուկ համակարգի մշակում (ստացված արդյունքների կիրառման բացարձակ իրավունքի տրամադրում, լավագույն ուսանողների հետ նախնական աշխատանքային պայմանագրերի կնքում և այլն):
4. Փոխկապակցված գիտահետազոտական նախաձեռնություններ իրականացնելու նպատակով օտարերկրյա համալսարանների հետ նոր գործընկերային հարաբերությունների հաստատում:

5. Հետազոտական ծրագրերի կատարման, մշտադիտարկման և արդյունքների գնահատման ներքին ընթացակարգերի և չափանիշների մշակում:
6. Հետազոտությունների ֆինանսավորման արտաքին աղբյուրների ներգրավում:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Բուհն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Բուհում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր

ՀՊՏՀ ռազմավարական ծրագրերի նպատակների իրագործման նախադրյալներից մեկը համապատասխան ուսումնական և աշխատանքային միջավայրի ապահովումն է: Ուսումնական միջավայրի բաղադրիչներն են մասնաշենքերը, լսարանային ֆոնդը, գրադարանները, ընթերցասրահները և այլն: Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է ՀՊՏՀ վեց մասնաշենքերում, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի՝ երկու և ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի մեկ մասնաշենքերում (հավելված 7.1): Աղյուսակ 11-ում ներկայացված է լսարանային ֆոնդի, գրադարանների և ընթերցասրահների ընդհանուր մակերեսները 2013թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ:

Աղյուսակ 11

Ուսումնական միջավայրի բաղկացուցիչների տվյալները[2]

Հ/Հ	Ուսումնական միջավայրի բաղկացուցիչներ	ՀՊՏՀ	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ
1	Լսարանների ընդհանուր թիվը (հատ)	120	36	10
2	Լսարանների ընդհանուր մակերեսը (մ^2)	5677	1680	364
3	Համակարգչային լսարանների ընդհանուր մակերեսը (մ^2)	526	71	57
4	Ընթերցասրահների ընդհանուր մակերեսը (մ^2)	335	73	28
5	Մարզադահլիճ (մ^2)	1004	327	288
6	Գրադարանի ընդհանուր մակերեսը (մ^2)	212	56	28

Լսարանների միջին բեռնվածությունը ՀՊՏՀ-ում կազմում է 30 ուսանող/ լսարան[3], ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում՝ 16, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում՝ 28: Լսարանային

[2] Տվյալները վերցված են անշարժ գույքի սեփականության վկայականներից:

ֆոնդերի արդյունավետ օգտագործումն իրականացվում է հստակ սահմանված հերթափոխերի կիրառման միջոցով:

ՀՊՏՀ ռազմավարական նպատակներին հասնելու խնդիրներից է ուսումնական և գիտական նպատակներով գույքային համալիրի արդյունավետ վերակազմավորման և օգտագործման ապահովումը: Վերջինիս հետ կապված յուրաքանչյուր տարի հատկացվում են միջոցներ լսարանային ֆոնդի և նյութատեխնիկական հագեցվածության բարելավման ուղղությամբ (գծանկար 15): Բուհում առկա են 7 լաբորատորիաներ, ութ համակարգչային լսարաններ: Համակարգչային լսարանների օգտագործման հիմնական նպատակը ինֆորմատիկայի մասնագիտական դասընթացների, ինչպես նաև համակարգչային թեստային քննությունների կազմակերպումն է՝ ըստ հաստատված դասացուցակի և ժամանակացույցի: Համակարգչային լսարանները հագեցված են 204 համակարգիչներով: Մեկական համակարգչային լսարան գործում է ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում, համապատասխանաբար՝ 24 և 13 համակարգիչներով:

ՀՊՏՀ բոլոր մասնաշենքերում (բացի 6-րդ մասնաշենքից) և ՀՊՏՀ Գյումրու ու Եղեգնաձորի մասնաճյուղերում գործում են տարբեր դրամաշնորհային միջոցներով վերանորոգված և նոր տեխնիկական միջոցներով հագեցած 10 լսարան և 3 կոնֆերանս-դահլիճ, որոնք առավել բարենպաստ պայմաններ են ստեղծում ուսումնական գործընթացի կազմակերպման համար (աղյուսակ 12):

Աղյուսակ 12

Դրամաշնորհային միջոցներով բարելավված ուսումնական միջավայրի տվյալներ

Հ/Հ	Մասնաշենք	Բարելավված ռեսուրսներ	Ֆինանսավորման աղբյուր
1	ՀՊՏՀ 1-ին մասնաշենք	1 լսարան	ERASMUS MUNDUS Եվրոպական հանձնաժողովի կողմից
2	ՀՊՏՀ 2-րդ մասնաշենք	1 կոնֆերանս-դահլիճ	ՊԵԿ-ի հովանավորությամբ
3	ՀՊՏՀ 2-րդ մասնաշենք	1 լսարան	ՊԵԿ-ի հովանավորությամբ
4	ՀՊՏՀ 2-րդ մասնաշենք	1 լսարան	«Հայբիզնեսբանկի» հովանավորությամբ
5	ՀՊՏՀ 2-րդ մասնաշենք	2 կոնֆերանս-դահլիճ	TEMPUS ծրագրի շրջանակներում
6	ՀՊՏՀ 3-րդ մասնաշենք	1 լսարան	ՀՀ ԿԲ հովանավորությամբ
7	ՀՊՏՀ 4-րդ մասնաշենք	1 լսարան	ՀՀ ԿԲ հովանավորությամբ
8	ՀՊՏՀ 4-րդ մասնաշենք	1 լսարան	«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ
9	ՀՊՏՀ 5-րդ մասնաշենք	1 համակարգչային լսարան	Կ.Կարապետյանի հովանավորությամբ
10	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	1 լսարան	«Ծառուկյան հիմնադրամի» ֆինանսավորմամբ
11	ՀՊՏՀ Եղեգնաձորի	1 համակարգչային	Վիվա Սել ՄՏՍ ընկերության

[3]Բեռնվածությունը հաշվարկելիս հաշվի է առնվել, որ ՀՊՏՀ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկհերթ սկզբունքով, իսկ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում և ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում՝ մեկ հերթով:

	մասնաճյուղ	լսարան	աջակցությամբ
12	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ	1 գրադարան	Մուրադ Սարգսյանի հովանավորությամբ
13	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ	1 լսարան	GTZ ընկերության աջակցությամբ

Համալսարանում գործում է գրադարան և 4 ընթերցասրահ, որոնցից 3-ը ուսանողական (այդ թվում՝ մեկը համակարգչային տեխնիկայով և համացանցով ապահովված, իսկ երկրորդը գտնվում է Զեյթունի մասնաշենքում) և մեկը՝ գիտական: Ընթերցասրահները միաժամանակ կարող են սպասարկել մոտ 120 ընթերցողի: Մեկական գրադարան և ընթերցասրահ առկա են նաև Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում: Գործում են էլեկտրոնային գրադարան և քարտադարան, որով տարեցտարի համալրվում են: Գրադարանը գործում է իր կանոնադրության հիման վրա, որում սահմանվում են հիմնական խնդիրները, ընթերցողների և գրադարանի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, գրադարանի ղեկավարումը և այլն: 2009թ. գրադարանային ֆոնդը ՀՊՏՀ-ում կազմել է 230.477 կտոր գրականություն, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում՝ 2746, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում՝ 1950: Գրադարանը մշտապես համալրվել է, իրականացվել է նաև զտում: Ստորև բերված աղյուսակում ներկայացնում ենք ՀՊՏՀ գրադարանի համալրման և ընթերցողների թվի վերաբերյալ տվյալներ (աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Գրադարանի համալրումը և ընթերցողների թիվը

Հ/Հ	Գրադարանի գործունեության ցուցանիշներ	2009	2010	2011	2012	2013թ. հոկտ.1
1	ՀՊՏՀ գրադարանային ֆոնդի համալրում	3290	2899	2567	1030	1565
2	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի գրադարանային ֆոնդի համալրում	780	127	91	859	124
3	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի գրադարանային ֆոնդի համալրում	240	480	250	393	172
4	ՀՊՏՀ ընթերցողների ընդհանուր թիվ	6000	6170	5500	6200	7000
5	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընթերցողների ընդհանուր թիվ	244	252	256	242	290
6	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի ընթերցողների ընդհանուր թիվ	52	87	89	146	161

Ինչպես երևում է աղյուսակ 13-ից, գրադարանի համալրմանը զուգընթաց, աճել է ընթերցողների թիվը: Սա մի կողմից՝ պայմանավորված է ուսանողների թվի աճով, մյուս կողմից՝ անհրաժեշտ գրականության համալրմամբ: Գրադարանային սպասարկման և ռեսուրսներով ապահովվածության գնահատման նպատակով ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել է հարցում, որն անցկացվել է ըստ առանձին կլաստերների (ֆակուլտետ)՝ պատահական ընտրության մեթոդով (հավելված 7.2): Հարցում-

ների համաձայն՝ ուսանողների բավարավածությունը գրադարանում անհրաժեշտ գրքերից և ամսագրերից օգտվելու հնարավորությունից կազմել է միջին հաշվով 59,1%, իսկ դասախոսների բավարարվածությունը նշված ռեսուրսից՝ 62.8% (գծանկար 12, 13):

Գրադարանային ֆոնդի հետագա համալրումները հնարավորություն կտան ընդլայնել շահակիցների բավարարվածության աստիճանը, որի նպատակով ներկայումս մշակվում է գրադարանի զարգացման ծրագիր: Ծրագիրը նախատեսում է բարեփոխումներ գրադարանային սպասարկման, գրադարանային ֆոնդի թվայնացման, մշակման և համալրման, միջգրադարանային համագործակցության և այլ ուղղություններով: Համալսարանն ունի նաև էլեկտրոնային գրադարան, որն անընդհատ համալրվում է՝ ուսանողների և դասախոսների համար ավելի հասանելի դարձնելով գրադարանային ծառայությունները: Հարցումները ցույց են տալիս, որ ուսանողների կողմից էլեկտրոնային գրադարանի հագեցվածությունը գրեթե հավասար է գրադարանի հագեցվածության գնահատականին՝ 58,2%, իսկ դասախոսների գնահատականների միջին ցուցանիշը կազմում է 45,1% (գծանկար 12,13):



<u>Գծապատկեր 12.</u> Ռեսուրսներով ապահովվածությունից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքներ



Գծապատկեր 13. Ռեսուրսներով ապահովվածությունից դասախոսների բավարարվածության հարցման արդյունքներ

Հարկ է նշել, որ էլեկտրոնային գրադարանը գործում է դեռ երկու տարի, գտնվում է զարգացման փուլում և, բնական է, որ շահակիցներն այնքան էլ բավարարված չեն դրա հագեցվածության աստիճանից:

Համալսարանն ունի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.asue.am, որտեղ տեղադրվում են ընթացիկ գործունեության հետ կապված նորություններ, անհրաժեշտ տեղեկություններ համալսարանի գործունեության վերաբերյալ: ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղն ունի իր առանձին կայքը՝ www.asuegb.am, որը նույնպես հնարավորություն է տալիս շահակիցներին ծանոթանալու մասնաճյուղի գործունեությանը: Էլետրոնային կայքում զետեղվող տեղեկատվության օգտակարությունը բարձր են գնահատել և՛ ուսանողները, և՛ դասախոսները, համապատասխանաբար՝ 71,9% և 71,2%:

Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ, չնայած կատարված բարեփոխումներին, և՛ ուսանողները, և՛ դասախոսները բավարարված չեն լսարանների կահավորման և նյութատեխնիկական ապահովման աստիճանից: Հարկ է նշել, որ, հիմք ընդունելով 2012-2016թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «տնտեսական գործունեության և նյութատեխնիկական հենք» ուղղության դրույթները, իրականացվում է գույքային և նյութատեխնիկական ռեսուրսների արդիականացում: Առաջիկայում նախատեսվում է յուրաքանչյուր ֆակուլտետում ստեղծել մեկ ժամանակակից լսարան, իսկ հետագայում՝ ընդլայնել լսարանների բարելավման գործընթացը: Միևնույն ժամանակ, և՛ ուսանողները, և՛ դասախոսները առավել բարձր են գնահատել ընթերցասրահների հարմարավետությունը, համապատասխանաբար՝ 70.8% և 69.7%: Դասախոսների հարցման արդյունքները գրեթե համընկնում են ուսանողների հարցման արդյունքներին կամ մոտ են դրանց, բացառությամբ՝ էլեկտրոնային գրադարանի հագեցվածության

աստիճանից բավարարվածության և համալսարանում անվտանգության ապահովման (գծանկար 13)։

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Բուհն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար

ՀՊՏՀ ֆինանսական ռեսուրսների կառավարումը իրականացվում է տարեկան կտրվածքով բյուջեի նախահաշվի կազմման (ՀՊՏՀ կանոնադրություն, կետ 79) և հաշվետու տարվա վերջին բյուջեի փաստացի կատարողականի վերլուծության միջոցով: Ըստ ՀՊՏՀ կանոնադրության 77 կետի՝ համալսարանի միջոցները գոյանում են հետևյալ աղբյուրներից՝

- պետական գույք,
- որպես սեփականություն համալսարանին հատկացված գույք,
- ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներ,
- ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած ներդրումներ.
- ուսման վարձավճարներից, հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից գոյացող միջոցներ։

Աղյուսակ 14-ում ներկայացված են ՀՊՏՀ 2009-2013թթ. մուտքերը։

Աղյուսակ 14

ՀՊՏՀ եկամուտների 2009-2013թթ. Տվյալներ (հազար դրամ) [4]

Հ/Հ	Մուտքերի բաշխում	2009	2010	2011	2012	2013 հոկտ.1
1	Պետական բյուջեից մուտքեր	283266	300069	314180	324202	214302
2	Ուսման վարձից մուտքեր	1887469	2435745	2827716	2709201	1871683
3	Այլ մուտքեր,	36294	48823	49121	323839	63129
	Ընթացիկ տարվա մուտքեր	**2207029**	**2784637**	**3191017**	**3357242**	**2149114**

Ինչպես երևում է աղյուսակ 14-ից, ՀՊՏՀ մուտքերն ունեն աճի միտում, ընդ որում՝ աճ է գրանցվում եկամուտների բոլոր աղբյուրների մասով:

[4]Չափորոշիչ բ-ում բերված թվային ցուցանիշները ներառում են ՀՊՏՀ, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի և ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի համախմբված տվյալները: Հիմքը՝ ՀՊՏՀ ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների 2009- 2012 թվականների հաշվետվություններ:



Գծապատկեր 14. **ՀՊՏՀ 2013թ. մուտքերի բաշխվածությունը՝ տոկոսներով արտահայտված**

Բուհի ֆինանսական միջոցների մեծ մասը ձևավորվում է վճարովի հիմունքներով սովորող ուսանողների ուսման վճարներից, ապա պետական բյուջեի միջոցներից:

Ֆինանսական միջոցները համալսարանի ռեսուրսային բազայի հիմքն են և ծախսերը պլանավորվում են՝ հիմք ընդունելով ֆինանսական կարողությունները: Ստորև ներկայացնում ենք ՀՊՏՀ ծախսերի կառուցվածքը:

Աղյուսակ 15

ՀՊՏՀ ծախսերի կառուցվածքը 2009-2013թթ. (հազար դրամ)

Հ/Հ	Ծախսեր	2009	2010	2011	2012	2013 հոկտ. 1
1	Ուսումնական ծախսեր	1651847	2090612	2267480	2241255	1278532
2	Ուսումնաօժանդակ ծախսեր	250630	198754	506344	425194	611743
3	Սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	57851	82742	51170	48843	144722
4	Հետազոտական ծախսեր	12996	25000	24065	12069	83557
5	Այլ ծախսեր	64176	86289	199716	176529	150046
6	Ընթացիկ տարվա ծախսեր՝ ընդամենը	2037500	2483397	3048775	2903890	2268600

Ծախսերի դինամիկան տարիների կտրվածքով նույնպես ունի աճման միտում՝ եկամուտներին համապատասխան: Ընդ որում, 2009թ. համեմատությամբ առավել մեծ չափով, գրեթե վեցապատիկ աճել են հետազոտությունների վրա կատարվող ծախսերը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013թ. բյուջեի նախահաշվով, ինչպես նաև ներքին դրամաշնորհային միջոցներով կատարվել է հետազոտությունների ֆինանսավորում՝ նպատակ ունենալով խթանել համալսարանի գիտահետազոտական գործունեությունը, որը ՀՊՏՀ ռազմավարական ուղղություններից մեկն է (ՀՊՏՀ 2012-2016թթ.

զարգացման ռազմավարական ծրագիր): Գրեթե 2,5 անգամ աճել են նաև սարքավորումների ձեռքբերման վրա կատարված և ուսումնաօժանդակ ծախսերը, որոնց հիմքում համալսարանում ուսումնական և աշխատանքային միջավայրի բարելավման նպատակներն են: Աճի միտում ունեն նաև ուսումնական և այլ ծախսեր:

Աղյուսակ 16

Ծախսերի կառուցվածքը՝ մեկ ուսանողի հաշվով 2009-2013թթ. (հազար դրամ)

Հ/Հ	Ծախսեր՝ մեկ ուսանողի հաշվով	2009	2010	2011	2012	2013 հոկտ.1
1	Ուսանողների ընդհանուր թիվ	7693	8549	8270	8752	8219
2	Ուսումնական ծախսեր	214,72	244,54	274,18	256,08	155,56
3	Ուսումնաօժանդակ ծախսեր	32,58	23,25	61,23	48,58	74,43
4	Սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	7,52	9,68	6,19	5,58	17,61
5	Հետազոտական ծախսեր	1,69	2,92	2,91	1,38	10,17
6	Այլ ծախսեր	8,34	10,09	24,15	20,17	18,26
7	Ընթացիկ տարվա ծախսեր՝ մեկ ուսանողի հաշվով	264,85	290,49	368,65	331,80	276,02

Աղյուսակ 16-ից պարզ է դառնում, որ ծախսերի կառուցվածքում մեկ ուսանողի հաշվով կատարված ծախսերը նույնպես ունեն աճի միտում, սակայն փոքր-ինչ պակաս, քան համախառն ծախսերը՝ պայմանավորված ուսանողների թվի սահուն աճով: Մեկ ուսանողի հաշվով ընթացիկ տարվա ծախսերը նույնպես տարեցտարի աճել են, բացառությամբ 2012թ.՝ կապված ուսանողների թվի աճի հետ (2013թ. տվյալները հոկտեմբերի 1-ի դրությամբ են և համադրելի չեն նախորդ տարիների տվյալների հետ):



Գծապատկեր 15. ՀՊՏՀ 2013թ. ծախսերի բաշխվածությունը՝ տոկոսներով արտահայտված

Ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում ուսումնական ոլորտին՝ դասախոսների վարձատրությանն ուղղվող միջոցներ, սոցիալական ապահովության վճարներ և

կրթաթոշակներ: Մեծ տեսակարար կշիռ ունեն ուսումնաօժանդակ ծախսերը՝ 27%, որում ներառված են վերանորոգման, ջեռուցման, և սպասարկման այլ ծախսերը: Որպես ֆինանսական ռեսուրսների բաշխման բարելավման ուղղություն, անհրաժեշտ է նշել հետազոտության վրա կատարվող ծախսերի ավելացումը, որի հետ կապված արդեն իսկ ձեռնարկվում են միջոցներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Բուհում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն

ՀՊՏՀ-ում ֆինանսական գործունեության համար հիմք են ծառայում ՀՊՏՀ կանոնադրությունը, ՀՀ օրենքը հաշվապահական հաշվառման մասին (ՀՕ-515-Ն, 26.12.2002), Միջազգային հաշվապահական ստանդարտները (ՆԻ-141-Նառ 23.06.2010), ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների համառոտ ուղեցույցը (2004թ.), ինչպես նաև «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան և դրա կիրառման հրահանգ» ուղեցույցը (Երևան, 2012թ.):

ՀՊՏՀ կանոնադրության 11-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ իրականացվում է ֆինանսական կառավարում՝ ներառյալ աշխատավարձի, կրթաթոշակի վճարումը, ուսման վարձի փոխհատուցումը, ուսանողական նպաստների տրամադրումը, համալսարանի պահպանմանն ու զարգացմանը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը: ՀՊՏՀ կառավարման կոլեգիալ և միանձնյա մարմինները՝ խորհուրդը և ռեկտորը, իրականացնում են ֆինանսական կառավարում՝ իրենց տրված լիազորությունների շրջանակում: Խորհուրդը քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն, լսում և գնահատում է տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը, իրականացնում է ռազմավարական ֆինանսական ծրագրերի հաստատում և ընթացիկ ֆինանսական գործունեության վերահսկողություն: ՀՊՏՀ ֆինանսական կառավարումը իրականացնում է ռեկտորը՝ համաձայն ՀՊՏՀ կանոնադրության 27-րդ կետի 1-ին և 14-րդ ենթակետերի: Նրա անմիջական վերահսկողության տակ են գտնվում ֆինանսական ռեսուրսների կուտակման և բաշխման գործընթացները: Ռեկտորը, ՀՀ օրենսդրությամբ և ՀՊՏՀ կանոնադրությամբ սահմանված կարգով, տնօրինում է համալսարանի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

Ֆինանսական միջոցների կառավարման և դրանց նպատակային բաշխման հիմքում են տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը՝ հաշվետվությունների ներկայացման և աուդիտի միջոցով: Նախահաշվում ներկայացվում են ֆակուլտետների և ամբիոնների կողմից կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսերի պահանջը, ինչպես նաև կառուցվածքային մյուս ստորաբաժանումների, սպասարկող և ուսումնաօժանդակ մարմինների կողմից ուսումնական միջավայրի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսները: Նախահաշվի կազմման ժամանակ հաշվի են առնվում նաև ռազմավարական նպատակների իրա-

կանացմանն ուղղվող միջոցների բաշխումը, արտացոլվում են գալիք տարում պլանավորվող մուտքերը և ֆինանսական միջոցների բաշխման ուղղությունները, որ տարեվերջին ներկայացվում է խորհրդի հաստատմանը:

Բյուջեի նախահաշվի կազմումը և բյուջեի կատարողականը ներկայացվում են ՀՊՏՀ, ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի համար առանձին-առանձին, ինչպես նաև համախմբված ձևով:

Բյուջեի կատարման կառավարման և մշտադիտարկման նպատակով հաշվապահական հաշվառման բաժինը եռամսյակային կտրվածքով ներկայացնում է հաշվետվություն ստացված մուտքերի և ելքերի վերաբերյալ՝ նշելով փաստացի շեղումները:

Ֆինանսական միջոցների բաշխման նպատակայնության ապահովումը, բացի եռամսյակային հաշվետվություններից, իրականացվում է նաև աուդիտի միջոցով[5]՝ ըստ ՀՊՏՀ կանոնադրության 80-րդ կետի:

Պետական, մասնավոր և դրամաշնորհների տեսքով ստացվող ֆինանսական միջոցների կառավարումն իրականացվում է համապատասխան պայմանագրերի և դրանցով սահմանված ընթացակարգերի հիման վրա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Բուհի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը

Ռեսուրսների ժամանակային բաշխումը նախատեսվում և իրականացվում է տարեկան կտրվածքով: Ուսումնական կարիքների բավարարման և արդյունավետ պլանավորման նպատակով, ռեկտորի հանձնարարականով, բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները, ֆակուլտետները, ամբիոնները և մասնաճյուղերը տարեվերջին ներկայացնում են գալիք տարվա ընթացքում անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկը: Վերջինիս հիման վրա կազմվում է գալիք տարվա գնումների պլանը, որում ընդգրկված ապրանքներն ու ծառայությունները գումարային տեսքով արտահայտվում են բյուջեի նախահաշվի համապատասխան հոդվածներում: Նախատեսված ապրանքների և ծառայությունների գնումն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի համաձայն: Տարվա ընթացքում կառուցվածքային ստորաբաժանումները, ամբիոնները և ֆակուլտետները, ելնելով կրթական ծրագրերի իրականացման և ընթացիկ գործունեության կազմակերպման պահաջներից, պահանջագրի հիման վրա ձեռք են բերում գնումների պլանում իրենց ներկայացրած ապրանքներն ու ծառայությունները:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության բաշխումն իրականացվում է ուսումնական տարվա վերջին: Յուրաքանչյուր ամբիոն ուսումնամեթոդական բաժին է ներկայացնում ամբիոնի դասախոսների համար նախատեսվող բեռնվածությունը, որը նրանց աշխատավարձերի հաշվարկման և բյուջեում աշխատա-

---

[5] http://media.asue.am/upload/Report_ASUE_2011_arm.pdf
http://media.asue.am/upload/Report_ASUE_Group_2012_arm.pdf

վարձին ուղղվող ռեսուրսների պլանավորման հիմք է ծառայում: Բեռնվածության հաշվարկման համար հիմք են ծառայում «ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության նորմատիվներում փոփոխություններ կատարելու մասին» 2012թ. մայիսի 11-ի, «Ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմատիվներ սահմանելու մասին» 2012թ. հունիսի 20-ի և «Ուսումնական պլանի նորմատիվներում փոփոխություններ կատարելու մասին» 2012թ. փետրվարի 29-ի որոշումները:

Լսարանային ֆոնդի բաշխումն ու պլանավորումը իրականացվում են ֆակուլտետների կողմից ուսումնական տարվա սկզբին՝ ելնելով յուրաքանչյուր մասնագիտությամբ սովորող ուսանողների թվից:

Համալսարանի ռեսուրսային բազան ապահովում է ուսումնական գործունեության իրականացումը, դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման և ուսումնական միջավայրի արդյունավետության բարձրացման նպատակով մշտապես իրականացվում են ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվում նոր սարքավորումներ, նորացվում է լսարանների կահավորումը, համալրվում է գրադարանային ֆոնդը: Ուսումնական միջավայրի բարելավումը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի եկամուտների մակարդակի բարձրացումը ներառված են ՀՊՏՀ 2012-2016թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, որի իրականացմամբ ապահովվում է ՀՊՏՀ գործունեության կայունությունը՝ նպաստելով որակի բարձրացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Բուհում առկա են տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ

ՀՊՏՀ-ում փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է ռեկտորի 10.04.2012թ. թիվ 73-Լ «ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի գործավարության կարգը հաստատելու մասին» հրամանի համաձայն, որով սահմանվում է ՀՊՏՀ փաստաթղթաշրջանառության կազմակերպման և վերահսկողության կարգը: Վերը նշված հրամանով կանոնակարգվում են ստացված թղթակցության ընդունումը, գրանցումն ու շարժը, ելից թղթակցության ձևակերպումը և փաստաթղթերի պահպանումը (հավելված 7.3): 2012-ից ամբողջ փաստաթղթաշրջանառության գրանցումն իրականացվում է համակարգիչների միջոցով, որը հնարավորություն է տալիս բարձրացնելու փաստաթղթաշրջանառության կառավարման արդյունավետությունը: Համալսարանի գործավարության կազմակերպումն իրականացնում է քարտուղարությունը: ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում նույնպես գործավարության կազմակերպումն իրականացվում է վերը նշված կարգի համաձայն:

Համալսարանում տեղեկատվության տարածմանն ու շահակիցների իրազեկվածության բարձրացմանն էապես նպաստում է կայք էջի միջոցով տեղեկատվության տարածումը: Ինչպես նշեցինք չափորոշիչ ա-ում, հարցվողների մեծամասնությունը բարձր է գնահատնում համալսարանի կայքում զետեղվող տեղեկատվության օգտակարությունը: Կայքում տեղադրվում է ՀՊՏՀ կառավարման մարմինների, կառուցվածքի,

հաշվետվությունների, ընդունելության, ֆակուլտետների, ընթացիկ նորությունների, ուսանողական և գիտական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՊՏՀ-ում բարելավվել և ընդլայնվել է համակարգչային ցանցը, որին միացված են համալսարանի բոլոր համակարգիչները: Ցանցի գործառույթների ընդլայնումը այժմ գտնվում է զարգացման փուլում: Այն ՀՊՏՀ զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներից մեկն է և կարևոր քայլ՝ տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացման և տեղեկատվության կառավարման տեսանկյունից:

ՀՊՏՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարումը բավականին արդյունավետ է, քանի որ հստակ կանոնակարգված և սահմանված են ընթացակարգերը: Համակարգի արդյունավետության մասին են վկայում նաև անցկացված հարցումները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Բուհը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին

Բուհում առկա են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ենթակառուցվածքներ՝ պահպանության ծառայությունը, բուժկետը, արհկոմիտեն, որի կազմում գործում է սոցիալական ապահովության և անվտանգության ենթակոմիտեն:

Պահպանության ծառայությունը ենթակա է վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորին և շուրջօրյա ապահովում է համալսարանի անվտանգությունը: ՀՊՏՀ պահպանությունն իրականացվում է ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կարևորագույն օբյեկտների պահպանության գնդի ստորաբաժանման կողմից:

Համաձայն 2013թ. փետրվարի 2-ի ՀՊՏՀ արհմիության նախագահի զեկուցագրի՝ ստեղծվել է ՀՊՏՀ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության հարցերով գործող մշտական հանձնաժողով: Այն գործում է ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողների մասնակցությունը աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման միջոցառումների իրականացման 253 հոդվածի և այդ կապակցությամբ ՀՀ Կառավարության՝ 29.06.2006թ. թիվ 1007-Ն որոշման պահանջների:

ՀՊՏՀ-ում գործող բուժկետը ենթակա է ՀՀ առողջապահության նախարարությանը և իր գործառույթներն իրականացնում է պայմանագրային հիմունքներով: Կա երկու բուժկետ՝ չորրորդ և վեցերորդ մասնաշենքերում, համապատասխանաբար՝ 21մ^2 և 17մ^2 մակերեսով: Ստորև ներկայացված է առողջության և անվտանգության պահպանմանն ուղղվող միջոցների 2009-2013թթ. տվյալները (աղյուսակ 17): Աղյուսակից երևում է, որ 2009-2013թթ. առողջության և անվտանգության պահպանմանն ուղղվող ծախսերը ընդհանուր ծախսերի կառուցվածքում տատանվում են 1.12%-1.69% սահմաններում և հիմնականում ունեն կայուն բնույթ:

Բուհի առողջության և անվտանգության պահպանումն ապահովող անձնակազմը հետևյալն է.

- պահպանության ծառայություն՝ 9 հոգի, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ՝ 3 հոգի, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ՝ 1 հոգի,
- բուժկետ՝ 2 հոգի:

Աղյուսակ 17

Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղվող միջոցները 2009-2013թթ.

Հ/Հ	Ծախսեր	2009	2010	2011	2012	2013
1	Ընթացիկ տարվա ծախսեր՝ ընդամենը	2037500	2483397	3048775	2903890	2268600
2	Ուսանողների և դասավանդողնե-րի առողջության և անվտանգու-թյան ապահովման ծախսեր	34528	36937	46663	32505	26922
3	Տեսակարար կշիռը ընթացիկ տարվա ընդհանուր ծախսերի կազմում	1,69	1,49	1,53	1,12	1,19

Բացի վերը նշված մարմիններից, ՀՊՏՀ-ում գործում է նաև քաղաքացիական պաշտպանության շտաբ, որն իրականացնում է ուսանողների և աշխատակիցների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում: Շտաբը գործում է ըստ կանոնադրության, մշակում է օրացուցային պլան, որի հիման վրա իրականացնում է ընթացիկ աշխատանքները: Քաղաքացիական պաշտպանության շտաբը պարբերաբար անց է կացնում դասախոսների և ուսանողների վերապատրաստման դասընթացներ, մասնակցում է քաղաքացիական պաշտպանության տարբեր միջացառումների:

Ուսանողների և դասավանդողների առողջության ապահովման խնդրով զբաղվում է նաև ֆիզիկական դաստիարակության ամբիոնը՝ 19 աշխատակցով: Ամբիոնը զբաղվում է առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների ֆիզիկական դաստիարակությամբ՝ ներառելով շաբաթական երկու ժամ բեռնվածություն: Բացի պարտադիր պարապմունքներից, կազմակերպվում են նաև սեղանի թենիսի, բասկետբոլի, վոլեյբոլի, շախմատի և այլ մարզաձևերի սեկցիաներ, մարզական միջոցառումներ և՛ դասախոսների, և՛ ուսանողների համար:

Շահակիցների շրջանում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ ուսանողները 50,0%-ով են բավարարված բուժկետի ծառայություններից և 70,4%՝ անվտանգության ծառայությունից (գծապատկեր 12): Դասախոսների բավարարվածության աստիճանը վերը նշված ծառայություններից կազմում է համապատասխանաբար՝ 49,1% և 53.0% (գծապատկեր 13): Վերլուծությունների արդյունքում կարելի է փաստել, որ համալսարանի միջավայրի ապահովության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները գործում են արդյունավետ, բուժկետի կողմից մատուցվող ծառայությունն ունի բարելավման խնդիր: Հիմնական թերացումը վերաբերում է հատուկ կարիքներ ունեցող անձանց հիմնականում պայմանավորված շենքային պայմաններով:

Չափորոշիչ է. Բուհում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության գնահատման միջոցներ են հարցումների կազմակերպմամբ կարիքների բացահայտումը: Կարիքների բացահայտման կառուցակարգերը դեռևս նոր են ներդրվում համալսարանում, այդ նպատակով մշակվել է հարցաթերթիկ և կատարվում են հարցումներ ուսանողների շրջանում: Հարցաթերթիկում ներառված է ութ հարց լսարանների, համակարգչային լսարանների հասանելիության և հագեցվածության, գործնական աշխատանքների անցկացմանն անհրաժեշտ սարքավորումների, գրադարանային ծառայության, ճաշարանում սննդի որակի, հանրակացարանի պայմանների վերաբերյալ: Ստացված տվյալների հիման վրա նախատեսվում է ստեղծել բազա, որը հնարավորություն կտա վերլուծելու բավարարվածությունը տրամադրվող ռեսուրսներից:

Ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման նպատակով, որպես բարելավման ուղղություն, կարելի է առանձնացնել արդյունավետության գնահատման գործիքների և կառուցակարգերի, ինչպես նաև ընթացակարգի մշակումն ու իրականացումը:

Չափանիշ 7-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար:	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների առկայություն: 2. Ուսանողների և հրավիրված դասախոսների համար նորաստեղծ ՀՊՏՀ «Տնտեսագետ» ուսանողի տունը (հանրակացարանը): 3. ՀՊՏՀ «Տնտեսագետ» մարզաառողջարանի /Դիլիջան/ առկայությունը: 4. Նորաստեղծ ճաշարանի, անվճար WiFi, բուժկետի, մարզադահլիճի, բարեկարգ բակի և անվտանգության ծառայության առկայություն: 5. Հաշվետու ժամանակաշրջանում ստեղծվել է էլեկտրոնային գրադարան: 6. ՀՊՏՀ-ում բարելավվել է ուսումնական և աշխատանքային միջավայրը, վերանորոգվել և արդիականացվել են մի շարք լսարաններ և կոնֆերանս-դահլիճներ: 7. Ստեղծվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնը: 8. ՀՊՏՀ մուտքերը վերջին հինգ տարիների	1. Եկամուտների դիվերսիֆիկացում, այդ թվում միջազգային ծրագրերով: 2. Տեղական, մասնավոր և միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսական միջոցների տրամադրումը: 3. Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցումը: 4. Եկամուտների բազմաղբյուրայնության ապահովումը: 5. Հետազոտությունների առևտրայնացումը:

ընթացքում աճել են, որը հիմք է ծառայում ռազմավարական նպատակների իրականացման համար, ինչպես նաև ապահովում է գործունեության կայունություն: 9. 2009-2013թթ. աճել են ուսումնական ծախսերը, մասնավորապես՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները, որ հնարավորություն է տալիս պահպանելու և մեծացնելու բարձր որակավորում ունեցող մասնագետների ներհոսքը՝ ապահովելով կրթական ծրագրերի շարունակականություն: 10. Ընդլայնվել է համակարգչային ցանցը, որին միացված են համալսարանի բոլոր համակարգիչները՝ ապահովված մշտապես գործող ինտերնետային կապով:	
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Եկամուտների դիվերսիֆիկացման պակաս: 2. Հաշմանդամություն ունեցող և հատուկ կարիքներով անձանց համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը: 3. Ոչ բոլոր լսարաններն են համապատասխանում դասավանդման ժամանակակից պահանջներին: 4. Տեղեկատվության արդյունավետ կառավարման համակարգի թերի գործունեությունը: 5. Ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման ոչ համարժեք կառուցակարգեր և ընթացակարգեր:	1. Բնակչության վճարունակության անկումը, եկամուտների նվազումը: 2. Պետական բյուջեի հատկացումների նվազում: 3. Գործատուների կողմից հետազոտական աշխատանքների նկատմամբ ցածր պահանջարկը:

Բարելավման ուղղություններ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՊՏՀ եկամուտների մեծ մասը ձևավորվում է վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վճարներից, անհրաժեշտ է իրականացնել եկամուտների բազմազանեցում, որը կարելի է իրագործել նաև հետազոտությունների արդյունքների առևտրայնացման միջոցով:
2. ՀՊՏՀ ռազմավարական նպատակների իրագործման, ինչպես նաև հետազոտությունների առևտրայնացմամբ եկամուտների դիվերսիֆիկացման նպատակով անհրաժեշտ է ծախսերի կառուցվածքում ավելացնել հետազոտություններին ուղղվող միջոցների տեսակարար կշիռը:

3. Ելնելով անցկացված հարցումների արդյունքներից՝ առաջնային կարևորություն ունեն լսարանների բարեկարգման և նյութատեխնիկական ապահովմանն ուղղված ծրագրերը, ինչպես նաև անհրաժեշտ գրականությամբ գրադարանի համալրման և այլ գրադարանների հետ համագործակցության ընդլայնումը: Գրադարանային ռեսուրսների կիրառելիության և հասանելիության բարձրացման համար նպատակահարմար է շարունակել էլեկտրոնային գրադարանի թվայնացումը:
4. Տեղեկատվության արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է մշակել տեղեկատվության մշակման և կիրառման քաղաքականություն, իրականացնել տեղեկատվական բազայի վերլուծություն:
5. Ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման նպատակով անհրաժեշտ է մշակել կառուցակարգեր և ընթացակարգ:
6. Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ պայմաններ չկան, որը կապված է շենքային պայմանների էական փոփոխությունների հետ և բավական բարդ է իրագործման տեսանկյունից:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: Բուհն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Բուհն ունի հաշվետվողականության սահմանված կարգ

ՀՊՏՀ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Կրթության մասին», «ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենքներով, ՀՀ Կառավարության որոշումներով, ինչպես նաև ՀՊՏՀ կանոնադրությամբ:

ՀՊՏՀ կառավարման բարձրագույն մարմինը խորհուրդն է, որը համաձայն ՀՊՏՀ կանոնադրության (կետ 15.3), լսում և գնահատում է ՀՊՏՀ տարեկան գործունեության մասին ռեկտորի հաշվետվությունը, որն ապահովում է հաշվետվողականութուն:

ՀՊՏՀ կառավարման խորհրդի տարեկան նիստին ռեկտորը ներկայացնում է հաշվետվություն անցած տարվա գործունեության մասին, ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի կատարողականը և այլ փաստաթղթեր:

ՀՊՏՀ գործունեության հիմնական հաշվետու փաստաթուղթն է տարեկան հաշվետվությունը, որն արտացոլում է ՀՊՏՀ գործունեության գրեթե բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները:

Երկրորդ կարևորագույն փաստաթուղթը համախմբված ֆինանսական հաշվետվություններն են՝ ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի կատարողականը,

ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունը, որում ներկայացվում են նաև ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի բյուջեի կատարման արդյունքները:

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ ՀՊՏՀ -ն անցնում է արտաքին աուդիտ, և աուդիտորական կազմակերպության եզրակացություն հաշվետվությունը ներկայացվում է ՀՊՏՀ խորհրդին, գիտական խորհրդին:

ՀՊՏՀ կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված է նաև ֆակուլտետների մակարդակով հաշվետվողականության համակարգ: ՀՊՏՀ խորհրդի հերթական նիստից առաջ ֆակուլտետներում հրավիրվում են ֆակուլտետների խորհրդի նիստեր, որտեղ ֆակուլտետի դեկանը ներկայացնում է իր գործունեության մասին հաշվետվություն: Ֆակուլտետների ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները քննարկվում են ֆակուլտետների խորհուրդներում:

ՀՊՏՀ հաշվետվողականության համակարգը գործում է ՀՊՏՀ կանոնադրությամբ (հավելված 1.1) և այլ իրավական ակտերով ամրագրված համապատասխան կառուցակարգերով:

ՀՊՏՀ-ում առկա համակարգը ապահովում է ոչ միայն ներքին հաշվետվողականություն, այլև ՀՊՏՀ հաշվետվողականությունը պետության և հասարակության առջև (արտաքին հաշվետվողականություն):

ՀՊՏՀ խորհրդի կառուցվածքն ապահովում է ՀՊՏՀ արտաքին հաշվետվողականությունն ըստ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգի՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանը, հիմնադրին և պետական կառավարման լիազոր մարմնին:

ՀՊՏՀ-ն տարվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով, հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, Գիտության պետական կոմիտեին, Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական ծառայությանը և այլ պետական գերատեսչությունների:

ՀՊՏՀ հաշվետվողականության ներկայիս համակարգը նպաստում է կառավարման բարելավմանը, քանի որ արձանագրվում են բոլոր ձեռքբերումները, հիմնախնդիրները:

Հաշվետվողականություն են նաև Եվրամիության Տեմպուս ծրագրի շրջանակում Եվրամիության ներկայացվող հաշվետվությունները, որոնց միջոցով ներկայացվում են ինչպես ՀՊՏՀ գործունեությունը, այնպես էլ այստեղ իրականացվող գործընթացների թափանցիկությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Բուհը ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկություն և հասանելիություն

ՀՊՏՀ ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության կառուցակարգերը ամրագրված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում, «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները 2006-2011 թթ.» փաստաթղթում:

ՀՊՏՀ գործընթացների թափանցիկության ապահովման գործիքներ են նաև ՀՊՏՀ

կողմից հրատարակվող տեղեկատվական սեղմագրերը: Դրանք հրապարակվում են պարբերաբար, առնվազն յուրաքանչյուր ուսումնական տարին մեկ անգամ և պարունակում են համապարփակ տեղեկատվություն ՀՊՏՀ գործունեության մասին: Կրթական գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումն ամրագրված է ՀՊՏՀ կանոնադրության 9.5 կետով:

ՀՊՏՀ բարձր վարկանիշի ձևավորումը հիմք է ստեղծում ուսանողների, բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման, պետական և հանրային կառույցների, բիզնես միջավայրի կողմից համարժեք ընկալման, ԶԼՄ-ների կողմից համալսարանի գործունեության արդյունավետ լուսաբանման համար: Այդ ամենը պայմանավորված է ոչ միայն համալսարանի գործունեության հաջողություններով, ձեռքբերումներով, այլև հանրությանը ճիշտ ներկայանալու, հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովման արդյունավետ գործիքների ընտրությամբ, հասարակության հետ հետադարձ կապի գործուն կառուցակարգերի ներդրմամբ և դրա արդյունքում կատարվող համապատասխան փոփոխությունների իրականացման:

Բուհի արդյունավետ կառավարման նպատակներից է հաշվետվողականության երաշխավորումը՝ հանրությանը տեղեկացնելով շնորհվող որակավորումների, հետազոտությունների արդյունքների և տրամադրվող այլ ծառայությունների որակի մասին:

Համալսարանը իր գործունեության արդյունքների, տարբեր ստորաբաժանումների գործունեության ցուցանիշների հրապարակումն իրականացնում է նաև բուհի կայք-էջի, «Տնտեսագետ» ամսաթերթի և «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսի միջոցով՝ ներկայացնելով կոնկրետ ժամանակահատվածում համալսարանի գործունեության արդյունքները:

Համալսարանն իր գործունեության լուսաբանումն իրականացնում է բուհի www.asue.am պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում, բուհի վերաբերյալ տեղեկատվություն է տեղակայված նաև Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքի «Քաղաքային տնտեսություն» ենթախորագրի ներքո:

Լուսաբանման և հաշվետվողականության այս կառուցակարգերը նպաստում են շահակիցների կարիքների ներկայացմանը, բուհի խնդիրների վերհանմանը, դրանց լուծման ուղիների առաջարկմանը, ինչը նպաստում է կառավարման բարելավմանը, կրթության որակի ապահովմանը, նոր կառուցակարգերի մշակմանը:

Բուհը մշտական կապ է պահպանում գործատուների հետ: 2009 թվականից սկսած համալսարանի կարիերայի կենտրոնը (այժմ կոչվում է՝ «Մարքեթինգի և կարիերայի կենտրոն») ամեն տարի կազմակերպում է աշխատանքի տոնավաճառ «Կոնգրես» հյուրանոցի մեծ սրահում, ՀՊՏՀ բակում, որին իրենց մասնակցությունն են ունենում ՀՀ խոշոր կազմակերպությունները, այդ թվում՝ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ, «Արարատ Բանկ» ՓԲԸ, «Իմեքս Գրուպ» ՍՊԸ, «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «ՎՏԲ-Հայաստան», «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, «Անտարես Հոլդինգ», «Սթար-Դիվայդ» ՓԲԸ, «Ինգո-Արմենիա» ՓԲԸ, «Մարիաննա» ՍՊԸ, «Կոկա Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ, «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ, «Հայփոստ» ՓԲԸ, «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն, «Նորվիկ» ունիվերսալ վարկային կազմակերպություն, «Կասկադ

Քնսալթընս» ՓԲԸ, «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ, Օրանժ Արմենիա» ՓԲԸ, «Արմենիան Դեյթաքոմ Քոմփանի», «Կարկոմավտո» ՍՊԸ, «Տորր» ՍՊԸ, Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ և բազմաթիվ այլ կազմակերպություններ: Միջոցառումները եզրափակվում են «ՀՀ աշխատաշուկայի զարգացման միտումները, բուհ-գործատու կապի արդյունավետության բարձրացումը» խորագրով քննարկումներով, որոնց մասնակցում են բուհի և մասնակից կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գյումրու մասնաճյուղն իր գերակայություններից են նաև հանրության իրազեկման միջոցով բուհի վարկանիշի բարձրացումը և դիմորդների ներգրավումը: Այդ նպատակով իրականացվում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի այցելություններ դպրոցներ, որտեղ ներկայացվում է մասնաճյուղի գործունեությունը, առկա մասնագիտությունների առանձնահատկությունները:

Մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հասարակությանը իրազեկելու համար տեղական հեռուստաընկերությունների տարբեր հաղորդումների և հեռուստաքննարկումների ժամանակ բազմիցս ներկայացվել են մասնաճյուղի գործունեությունը և զարգացման հեռանկարները: Այդ շարքում կարելի է առանձնացնել «Շիրակ» ՀՌԸ «Փակագիծ», և «Շանթ» ՀԸ «Տեսանկյուն» հաղորդաշարերը: Մասնաճյուղն իր գործունեությունն ավելի հրապարակային դարձնելու և հանրայնացնելու նպատակով մշտապես մասնակցում է տարբեր համաժողովների, ցուցահանդեսների: Հատկանշական է վերջին տարիներին /2009-2012թթ./ մասնաճյուղի մասնակցությունը «Ուսուցումը Հայաստանում» միջազգային ցուցահանդեսին:

Կարևորելով հանրային հարաբերությունների անհրաժեշտությունը և գործունեության հանրայնացումը՝ մասնաճյուղի խորհրդի որոշմամբ ձևավորվել է մասնաճյուղի գործունեությունը հանրայնացնող հանձնախումբ:

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում իրականացվող կրթական ու գիտական գործընթացների վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ են տրամադրվում հաշվետվությունների տեսքով և սոցիալական ցանցերի միջոցով: Գործում է մշտական կապ մայր բուհի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ: Բուհի ուսանողները ակտիվ են սոցիալական ցանցերում, որի շնորհիվ բավականին մեծ է իրազեկման աստիճանը:

Մասնաճյուղի գործունեությունը ակտիվորեն լուսաբանվում է նաև Վայոց ձորի մարզպետարանի կայքում՝ http://vdzor.gov.am :

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Բուհում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ

ՀՊՏՀ ռազմավարական ուղղություններից է հասարակության հետ կապերի զարգացումը, որն ամրագրված է «ՀՊՏՀ 2012-2016 թթ. զարգացման ռազմավարություն», ինչպես նաև Որակի խորհրդի կողմից հաստատված «ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմները» փաստաթղթերում:

2011թ. նոյեմբերին ՀՊՏՀ-ում ստեղծվել է լրատվության և հասարակայնության հետ

կապերի բաժինը՝ հասարակության հետ հետադարձ կապը ապահովելու, այդ հարաբերությունները համակարգելու և համալսարանի աշխատանքն ավելի բաց և թափանցիկ դարձնելու նպատակով: Բաժինը ոչ միայն բուհական կյանքի մասին տեղեկատվություն է ապահովում, այլև բուհի նոր կերպարի ստեղծման և տեղեկատվության թափանցիկության ապահովման համար կապեր է հաստատում լրատվամիջոցների և հանրության հետ՝ տեղի ունեցող զարգացումներն ու փոփոխությունները հասարակությանը ճիշտ հասցնելու նպատակադրմամբ:

Հասարակության լայն շերտերի հետ ՀՊՏՀ-ն այսօր աշխատում է 4 խոշոր ուղղություններով՝ «Տնտեսագետ» թերթի հրատարակում, բուհի պաշտոնական կայքի (www.asue.am), «Facebook» սոցիալական ցանցում ՀՊՏՀ պաշտոնական էջի գրեթե ամենօրյա սպասարկում ու զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքների իրականացում: Գործում է նաև ՀՊՏՀ Գյումրիի պաշտոնական կայքը (www.asuegb.am): Դեկտեմբեր ամսից կգործարկվի նաև Եղեգնաձորի մասնաճյուղի պաշտոնական կայքը: «Facebook» սոցիալական ցանցում ևս գործում են մասնաճյուղերի պաշտոնական էջերը:

Կայքը գործարկումից ի վեր հարստացվում է նոր խորագրերով և տեղեկատվությամբ, գրեթե ամենօրյա ռեժիմով ներկայացնում են բուհական անցուդարձին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ, հայտարարություններ, որով ապահովում է նշանակալի և անհրաժեշտ տեղեկատվություն: Նույն ռեժիմով սպասարկվում է 2011թ. նոյեմբերի 11–ին «Facebook» սոցիալական ցանցում բացված ՀՊՏՀ պաշտոնական էջը, որտեղ ևս ներկայացվում է բուհական կյանքին վերաբերող լրատվություն:

ՀՊՏՀ պաշտոնական կայքն (www.asue.am) ամենօրյա ռեժիմով ապահովում է լրատվություն՝ ներկայացնելով ոչ միայն բուհական միջոցառումները, այլև այն ամբողջ հարցերի շրջանակները, որոնք հետաքրքրում են հասարակությանը: Կայքի «Նորություններ» բաժինը թարմացվում է ամեն օր, երբեմն նաև շաբաթ և կիրակի օրերին: Բուհի պաշտոնական կայքում գրեթե բոլոր հրապարակումների, այնտեղ զետեղված տարատեսակ տեղեկատվական նյութերի վերաբերյալ ստացվում են արձագանքներ, որոնք հիմք են դառնում հետագա աշխատանքի և հետադարձ կապի ապահովման համար:

«Facebook»-ում բուհի պաշտոնական էջն ունի հետադարձ կապի ավելի լայն և հստակ հնարավորություն: Այդ կապի ապահովման կառուցակարգերն այստեղ ավելի ճկուն են և նկատելի:

Այս ամենին զուգահեռ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն իրականացնում է բուհի գործունեության լուսաբանումը, այսինքն՝ զբաղվում նրա կերպարի դրական հանրայնացմամբ: Բաժինը կապեր է հաստատել տասնյակ էլեկտրոնային կայքերի, թերթերի, ամսագրերի, հեռուստաընկերությունների հետ, որոնցում լուսաբանվում է բուհի անցուդարձը: Բուհի գործունեության լուսաբանումը իրականացվում է նաև բուհական իրադարձությունների մասին լուսաբանում ապահովելով: ՀՊՏՀ-ում գործում է հետևյալ կարգը՝ բուհական առանցքային միջոցառումների ժամանակ բաժինը լրատվամիջոցներին է ուղարկում միջոցառման անոնս–հրավերները, մամուլին ներկայացվող հաղորդագրություններ պատրաստում՝ բուն միջոցառման ժամանակ լրատվամիջոցներին ներկայացնելու համար, ապա՝ միջո-

ցառումից հետո կրկին լրատվամիջոցներին է ուղարկում իրադարձության մասին անհրաժեշտ հաղորդագրություն և լուսանկարներ: Բոլոր իրադարձությունների մասին լուսաբանումները ներկայացվում են բուհի պաշտոնական կայքի «ԶԼՄ–ները մեր մասին» ենթախորագրի ներքո: Զանգվածային լրատվամիջոցներով ՀՊՏՀ–ի մասին հրապարակումների քանակը անցնում է հարյուրի սահմանը: (Հիմքերը՝ հղումը՝ www.asue.am՝ «Մեդիա» բաժին, «ԶԼՄ–ները ՀՊՏՀ–ի մասին» ենթախորագիրը, կան նաև լրատվամիջոցների տպագիր օրինակները: «Youtube» ռեսուրսում բացվել է բուհի, տարածքը, որտեղ ևս ներկայացվում են տեսանյութեր (http://www.youtube.com/watch?v=u2DE5NMCUk0):

Բուհի մասին տեղեկատվության կա Վիկիպեդիայում, Երևանի քաղաքապետարանի կայքում: Հասարակության հետ հետադարձ կապը պահպանելու գործիքներից են նաև վարկանշային կայքերի հետ համագործակցությունը: ՀՊՏՀ պաշտոնական կայքը գրանցվել է «Գուգըլ անալիտիկս» և «Սըրքըլ» (www.circle.am) վարկանշային կայքերում, որոնցով ամենօրյա ռեժիմով հետևում են կայքի այցելուների վիճակագրությանը և շարժին: «Սըրքըլի» «Կրթություն և գիտություն» խորագրի ներքո, ՀՊՏՀ ընդամենը մի քանի ամսվա կյանք ունեցող պաշտոնական կայքը, արագորեն մտել է առաջին տասնյակ և հիմնականում «տեղաշարժվում է» 1–15-ի միջակայքում:

ՀՊՏՀ-ում ստեղծվել է հասարակության հետ հետադարձ կապի ապահովման համար կառուցակարգեր ներդնող ևս մեկ օղակ: ՀՊՏՀ կարիերայի և մարքեթինգի կենտրոնը բուհի շրջանավարտների կարիերային, աշխատանքի տեղավորվելու ընթացքին տեղեկանալու համար հստակ կառուցակարգեր է ներդրել: Արդյունքում ՀՊՏՀ-ում ստեղծել է շրջանավարտների տվյալների բազա:

ՀՊՏՀ հետադարձ կապի կառուցակարգերի ձևավորմանն ու զարգացմանն է նպաստում նաև Եվրամիության Տեմպուս ծրագրի շրջանակներում իրականացվող «Համալսարան-գործատու համագործակցություն» ծրագիրը, որի հիմնական նպատակն է շրջանավարտների և գործատուների տվյալների բազայի ստեղծումը, աշխատաշուկա-համալսարան կապի ամրապնդումը և աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրության հիման վրա կրթական ծրագրերի բարելավումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Բուհում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ

Համալսարանը կարևորում է ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով հասարակության դաստիարակումը, բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը, սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը, ինչն ամրագրված է ՀՊՏՀ կանոնադրությամբ:

Կադրերի վերապատրաստման ու մասնագետների որակավորման բարձրացման ծրագրերի իրագործման համար ՀՊՏՀ-ում կարևորվում է հարատև և լրացուցիչ կրթահամակարգի ընդլայնումը: Այդ նպատակով համալսարանի կառուցվածքում գործում է

շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնը, որն իրականացնում է լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ: 2009-2012թթ. այդ կառույցի կազմակերպած դասընթացներին մասնակցել և հավաստագիր են ստացել 1513 քաղաքացիական ծառայողներ, որոնք աշխատում են հանրապետության տարբեր նախարարություններում և գերատեսչություններում:

Եղեգնաձորի մասնաճյուղում պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ տարբեր հասարակական ու միջազգային կազմակերպությունների կողմից: Գործընկեր հասարակական կազմակերպություններից առավել ակտիվ են «Աշխատանք և հայրենիք» և «Երիտասարդ սերունդ» ՀԿ-ները, որոնց կողմից կազմակերպվող և հանրային կյանքին ու կրթությանը վերաբերող քննարկումներում համատեղ մասնակցություն են ունենում ինչպես ուսանողները, այնպես էլ տարբեր համայնքների բնակիչներ: Միջազգային կազմակերպություններից ակտիվ են UNDP, USAID, GIZ, EURASIA և այլն:

GIZ կազմակերպության կողմից 2010թ. կահավորված լսարանում պարբերաբար վերապատրաստումներ են անցնում Վայոց ձորի մարզի քաղաքացիական ու համայնքային ծառայողները, ներգրավվում են նաև մասնաճյուղի դասախոսները:

USAID կազմակերպության աջակցությամբ 2011թ. մասնաճյուղում ստեղծվել և համապատասխան տեխնիկայով կահավորվել է Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, որտեղ ուսանողները և մարզի երիտասարդական ակումբների ներկայացուցիչները պարբերաբար կազմակերպում են քննարկումներ:

EURASIA հիմնադրամի օժանդակությամբ 2012թ. մասնաճյուղում իրականացվել է էլեկտրոնային լրագրության դասընթաց, որի մեջ ընդգրկվել են մարզի բազմաթիվ համայնքների ներկայացուցիչներ, ովքեր մարզի տարածքում ստեղծել են սոցիալական ցանցեր և նրանց կապը մասնաճյուղի հետ բավականին ակտիվ է:

Մասնաճյուղի ուսանողները մասնակցել և հաղթել են UNDP և OSI կազմակերպությունների կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերում, որի շրջանակներում մարզի գործատուների մասնակցությամբ 2012 և 2013թթ. կազմակերպվել է «Աշխատանքի տոնավաճառ», 2013թ. ստեղծվել է «Բանավեճի ակումբ»:

Հասարակայնության հետ կապերի ձևավորման համար կարևոր է նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տարվա փետրվարին մասնաճյուղում կազմակերպվում են բաց դռների օրեր, որտեղ այցելում են այդ տարվա դպրոցների շրջանավարտները և ծնողները, ովքեր մասնագիտական կողմնորոշման շրջանակներում տեղեկացվում են բուհի կրթական ծրագրերի, հնարավորությունների ու գործունեության վերաբերյալ:

Համալսարանում իրականացվող հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրումը, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների շուրջ կազմակերպվող քննարկումները ևս համարվում են գիտելիքի փոխանցման կառուցակարգեր: ՀՊՏՀ-ն Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության «ՀՀ-ում ներառական տնտեսությանն ընդառաջ (SDC)» ծրագրի շրջանակներում բաց հարթակ է ստեղծելու տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող ակադեմիական քննարկումների համար:

Չափանիշ 8-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար:	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ-ում ստեղծված է լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին՝ հասարակության հետ հետադարձ կապը ապահովելու, այդ հարաբերությունները համակարգելու և համալսարանի աշխատանքն ավելի բաց և թափանցիկ դարձնելու նպատակով: 2. ՀՊՏՀ հաշվետվողականությունն ու ներկայացումը ապահովվում է նաև միջազգային ծրագրերի հաշվետվությունների միջոցով: 3. «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատանքների միջոցով իրականացվում է ՀՀ տնտեսությանն հիմնախնդիրների լուծմանն առնչվող գիտելիքի փոխանցում: 4. Տարբեր կազմակերպություններին և անհատներին սոցիալական աջակցության ցուցաբերման միջոցով հասարակական պատասխանատվության բարձր մակարդակի ապահովում: 5. ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներին առնչվող ակադեմիական քննարկումների համար համալսարանում բաց հարթակի ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքները: 6. ՀՊՏՀ պաշտոնական էլ. կայքի առկայություն: 7. Ներքին և արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականությունը և թափանցիկությունը ապահովող մեխանիզմների առկայությունը 8. ֆեյսբուք սոցիալական ցանցում, Youtube-ում ՀՊՏՀ բաժնի առկայությունը 9. ՀՊՏՀ խոշոր գործատու և հարկատու հանդիսանալը:	1. ՀՊՏՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կարողությունների հզորացում միջազգային ծրագրերով: 2. Միջազգային լրատվական տարածքում ներկայության ապահովում: 3. ՀՊՏՀ մասնակցությունը ՀՀ և միջազգային գիտական, մշակութային և հասարակական կյանքին:
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Հաշվետվողականության համակարգի գնահատման մեխանիզմների անկատարությունը: 2. Հասարակության հետ կապերի ոլորտում հետադարձ կապի գնահատման մեխանիզմների անկատարությունը: 3. ՀՊՏՀ գործունեությունը լուսաբանող նյութերի սակավություն:	1. Որակյալ կադրերի արտագաղթը: 2. Ֆինանսական մուտքերի հնարավոր նվազումը կապված վճարունակության և պետական ֆինանսավորման նվազման հետ:

Բարելավման ուղղություններ

1. ՀՊՏՀ-ում իրականացվող Եվրամիության Տեմպուս ծրագրի միջոցով համալսարան-գործատու հետադարձ կապի հստակ կառուցակարգերի ստեղծում:
2. Արտաքին շահակիցների հետ համագործակցության ընդլայնում:
3. ՀՊՏՀ մասնագիտությունները ներկայացնող ուղեցույցի մշակում:
4. Հաշվետվողականության համակարգի գնահատման մեխանիզմների բարելավում:
5. ՀՊՏՀ գործունեությունը լուսաբանող նյութերի մշակում և տարածում:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով բուհը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով բուհի միջազգայնացմանը

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր

ՀՊՏՀ արտաքին կապերի հաստատմանն ուղղված և, մասնավորաբար, միջազգայնացմանն առնչվող գործառույթը հիմնված է ՀՊՏՀ կանոնադրության վրա (հավելված 1.1):

Համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարության ուղղությունները սահմանված են «2006-2011 թթ. Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման հայեցակարգում» (հավելված 1.2) և «ՀՊՏՀ 2012-2016 թթ. զարգացման ռազմավարական ռազմավարական ծրագիր» (հավելված 1. 3) փաստաթղթերում:

Համալսարանի արտաքին կապերը 2006-2011թթ. համակարգել է կրթական բարեփոխումների և միջազգային կապերի վարչությունը: 2012թ. համալսարանի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում վարչությունը լուծարվել է, և դրա գործառույթները փոխանցվել են արտաքին կապերի նորաստեղծ բաժնին:

2013թ. ընթացքում ՀՊՏՀ սկսել է միջազգայնացման քաղաքականության փաստաթղթերի մշակումը, որի բաղադրիչներից են նաև ամբիոնների և ֆակուլտետների միջազգային գործունեության ծրագրերը: Մշակվել է նաև ՀՊՏՀ միջազգային գործունեության զարգացման ծրագրի նախագիծը: Գործընկեր համալսարանների հետ կապերի հաստատումը հիմնվում է համալսարանի միջազգայնացման նպատակների և խնդիրների, ինչպես նաև առկա ռեսուրսների վրա:

ՀՊՏՀ-ն կարևորվում է միջբուհական և միջազգային կապերի զարգացումը, քայլեր է ձեռնարկել համալսարանի միջազգայնացման զարգացման ուղղությամբ և, կարևորելով միջազգայնացման դրական ազդեցությունը կրթական գործընթացների

որակի, մասնագիտական վերապատրաստումների և, ընդհանուր առմամբ, որակի ապահովման վրա, ինչպես նաև մասնագիտական և ուսանողական շարժունությունը, յուրաքանչյուր տարի շարունակել է նախորդ տարիներին սկիզբ առած ակտիվ համագործակցությունը ՀՀ և այլ երկրների բուհերի, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների հետ: Միջազգայնացումը դիտարկվել է որպես շարունակական գործընթաց, և յուրաքանչյուր տարվա ընթացքում նոր գործընկերային հարաբերություններ են հաստատվել համալսարանների հետ: Այդ կապերից շատերը ամրագրվել են համագործակցության պայմանագրերով, համաձայնագրերով և փոխըմբռնման հուշագրերով:

ՀՊՏՀ-ում խրախուսվել է նաև արտաքին կապերի զարգացումը ամբիոնների և ֆակուլտետների մակարդակներով (միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը պայմանագիր է կնքել Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի նույնանուն ամբիոնի հետ: Օտար լեզուների ամբիոնը համագործակցել է Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի հետ):

ՀՊՏՀ ռեկտորի տարեկան հաշվետվությունում մշտապես ներկայացվում է միջազգային և միջբուհական կապերի արդի վիճակը և ամրագրվում են դրանց զարգացման ուղենիշները, այնուհետև դրանք կոնկրետ հանձնարարականներով արտացոլվում են համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներում:

2012թ. հուլիսին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը համալսարանին թույլատրեց օտար լեզվով կազմակերպել արտասահմանյան քաղաքացիների ուսուցումը: 2012-2013 ուստարում, ՀՊՏՀ-ն առաջին անգամ սկսեց Հնդկաստանից ու Նեպալից քաղաքացիների ընդունելություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Բուհի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց

ՀՊՏՀ արտաքին կապերի և միջազգայնացման հարցերով զբաղվող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումը արտաքին կապերի բաժինն է: Բաժինն իրականացնում է հիմնականում հետևյալ գործառույթները, որոնք ամրագրված են բաժնի կանոնադրության մեջ՝

- արտերկրի և ՀՀ բուհերի հետ կապերի հաստատում ու զարգացում, միջբուհական համագործակցության պայմանագրերի պատրաստում,
- արտերկրի բուհերի հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացում,
- արտերկրի բուհերի հետ դասախոսների փոխանակում և վերապատրաստում,
- միջազգային փորձի ուսումնասիրության և դրա կիրառման միջոցով կրթական ծրագրերի բարելավում,
- ուսումնական գործընթացի կատարելագործման և կրթական ոլորտի բարեփոխումների իրականացման նպատակով միջազգային դրամաշնորհային ծրագրերի մրցույթների մասնակցություն,
- օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կազմակերպում:

Բուհի արտաքին կապերը համակարգող բաժնի աշխատանքները մշտապես եղել են բուհի կառավարման մարմինների ուշադրության կենտրոնում: Բուհի խորհրդի,

ռեկտորատի, գիտխորհրդի նիստերում մշտապես գնահատվում են արտաքին կապերի գծով տարվող աշխատանքները, առկա դժվարությունները, թերությունները, նախանշվում են դրանց լուծման ուղիները:

Դիտարկվող ժամանակահատվածում համալսարանում էականորեն ընդլայնվել են ուսանողներին և դասախոսներին վերաբերող միջազգային կրթական և գիտական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության մատուցման աշխատանքները: Ավելի են ակտիվացել Հայաստանում գործող և միջազգային կրթական ծրագրեր իրականացնող կենտրոնների և հիմնադրամների տեղեկատվական բնույթի շփումները համալսարանի վերոնշյալ բաժնի հետ ինչպես համալսարանում, այնպես էլ համալսարանից դուրս:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Բուհն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ

ՀՊՏՀ-ն միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի բազմաթիվ համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

ՀՊՏՀ-ն Եվրամիության Էրազմուս Մունդուս ծրագրի շրջանակներում համագործակցել է կոնսորցիումի անդամ եվրոպական հետևյալ համալսարանների հետ՝ Հունաստանի Ալեքսանդեր տեխնոլոգիական կրթական ինստիտուտ, Մեծ Բրիտանիայի Սվենզիի, Ֆրանսիայի Անժերի, Իտալիայի Թուշիայի և Սապիենզայի, Բելգիայի Ֆրեյ, Լատվիայի Ռեզեկնեի և Բուլղարիայի Ռուսեի համալսարան: 2012-ից շարունակում է միջազգայնացմանն ուղղված ՀՊՏՀ ռազմավարության իրականացումը: Միջազգայնացման խրախուսման արդյունքում Տեմպուս ծրագրի շրջանակներում (ներառյալ Գյումրու մասնաճյուղը) այժմ ՀՊՏՀ-ն որակի ապահովման բաժնի կողմից 3 տարի ժամկետով իրականացնում է Տեմպուսի 7 ծրագիր:

2012 թվականից ՀՊՏՀ-ն իրականացնում է հետևյալ 3 ծրագրերը.

1. «Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն (Արարատ) ծրագիրը, որի համակարգողն առաջին անգամ Հայաստանի բուհ է՝ ՀՊՏՀ-ն,
2. «Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց» ծրագիրը,
3. «Բարձրագույն կրթության կառավարման մագիստրոսական ուսումնական ծրագիր կրթական վերափոխումներ իրականացնող առաջնորդների պատրաստման նպատակով» ծրագիրը:

2013թ.-ից ՀՊՏՀ-ն իրականացնելու է հետևյալ 4 ծրագրերը.

1. «Հայաստանի բուհերի որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնում»,
2. «Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում»,
3. «Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը: Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործըն-

թացի սկզբունքներին համահունչ համակարգի մշակում՝ արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով»,

4. «Մարդկային գործոնի միջոցով կրթական հաստատությունների առաջխաղացում»,
5. Եվրամիության «Էրազմուս Մունդուս Արտաքին համագործակցության պատուհան Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի համար» ծրագրի շրջանակներում եվրոպական երկրների առաջատար բուհերի հետ բարձր մրցույթային պայմաններով փոխանակվել են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, ասպիրանտներ և դասախոսներ:

Նշված դրամաշնորհային ու միջազգային ծրագրերում ներգրավվածության, ինչպես նաև միջազգային ցանցերին անդամակացության շրջանակներում ՀՊՏՀ-ն վերջին մի քանի տարիների ընթացքում ոչ միայն էապես զարգացրել է միջազգային համագործակցության շրջանակը, այլև նպաստել համալսարանում այդ համագործակցությունը փաստող կենտրոնների, կառույցների բացմանը, որոնք ամրագրված են «ՀՊՏՀ 2012-2016 թթ. զարգացման ռազմավարական ռազմավարական ծրագրում» և ավելի են ամրապնդում ձեռք բերված պայմանավորվածություններն ու երաշխավորում դրանց շարունակականությունը: Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՊՏՀ-ում 2011թ. ստեղծվել է ՀՊՏՀ որակի ապահովման բաժինը, իսկ 2013թ-ին «Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն (ԱՐԱՐԱՏ) ծրագրի շրջանակներում համալսարան-գործատու համագործակցության ակտիվացման և կրթական ծրագրերի բարելավման նպատակով ընդլայնվել են ուսումնամեթոդական բաժնի գործառույթները, և այն վերանվանվել է «Ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության բաժին»:

Վերոնշյալ բոլոր ծրագրերով ՀՊՏՀ-ն համագործակցում է միջազգային 34 կազմակերպությունների հետ:

Տեղական միջազգային կազմակերպություններից բուհը համագործակցում է G2iA (Հայկական միջազգային միջմասնագիտական խումբ) և «Ինթեգրիթի Էքշընն», USAID-ի հետ:

Տեղական կազմակերպություններից ՀՊՏՀ-ն համագործակցում է 17 բուհերի, 14 քոլեջների, 7 ավագ դպրոցների, 25 և ավելի կազմակերպությունների, ՀՀ պետական կառավարման 18 մարմինների հետ (ցանկը ներկայացված է ՀՊՏՀ www.asue.am կայքի «Կարիերա բաժնի», «Գործընկերներ» ենթաբաժին):

ՀՊՏՀ-ում դասավանդում են դասախոսներ և սովորում են ուսանողներ, որոնք միջազգային հեղինակավոր կրթական և գիտական ծրագրերի շրջանավարտներ են (օր.՝ ԱՄՆ Է.Մասկի մագիստրոսական ծրագիր և Ֆուլբրայթ գիտական ծրագիր, Գերմանիայի ԳԱՓԾ-ի (DAAD) կրթական և գիտահետազոտական ծրագրեր):

ՀՊՏՀ մասին օտար լեզուներով տեղեկատվական նյութերը հետևյալն են. ՀՊՏՀ պաշտոնական կայքի անգլերեն տարբերակը (www.asue.am/en), Վիկիպեդիա էլեկտրոնային ազատ հանրագիտարանում առկա է բուհի մասին տեղեկատվություն անգլերենով և ռուսերենով, Երևանի քաղաքապետարանի վեբ կայքում երկլեզու (հայերեն, անգլերեն)

տեղեկատվություն, բուհական եռալեզու բուկլետներ, ԿԳՆ օտարերկրյա քաղաքացիների համար նախատեսված անգլալեզու (www.studyinarmenia.org) կայքում նույնպես առկա է անգլերեն տեղեկատվություն բուհի մասին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Բուհն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար

ՀՊՏՀ շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնը կազմակերպել է անգլերենի տարբեր մակարդակների դասընթացներ ՀՊՏՀ 67 դասախոսների և վարչական աշխատակազմի համար:

ՀՊՏՀ-ում օտար լեզվի իմացությունն ապահովելու համար ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ, որոնք շարունակական բնույթ են կրում:

Աղյուսակ 18

Օտար լեզուների (ներառյալ ռուսերեն) տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիներին:

Աշխատակիցներ	2009		2010		2011		2012		2013	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Դասավանդող	366	100	382	100	378	100	696	1100	382 (12.11.13 դրությամբ)	100
Վարչական աշխատող	285	99	299	99	304	99	371	99	674 (12.11.13 դրությամբ)	99

Աղյուսակ 19

Օտար լեզուների տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիներին:

Ուսանողներ	2009		2010		2011		2012		2013	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Բակալավր	5564	75,6	5702	77	6766	70	5632	75	5698	80
Մագիստրանտ	551	80	1450	85	1202	86	2367	85	2147	85
Հետազոտող	19	100	34	100	40	100	23	100	29	100

Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզվով դասընթացներ/ՄԿԾ-ներ, օտարերկրյա ուսանողների թիվն ըստ տարիների /2012-2013 թթ./

Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Զբոսաշրջության շուկաներ և ծառայություններ (ապրանքներ)					3		
Տուր օպերատորություն					3		
Տուրիստական անիմացիաների կառավարում					3		
Մարքեթինգ					3		
Տրանսպորտային					3		

ծառայությունների կառավարումը զբոսաշրջության ոլորտում							
Զբոսարջության տեղեկատվական համակարգեր					3		
Նախապատրաստական դասընթաց						7	**16՝** 15.11.13 դրությամբ
Օտար լեզվով դասընթացներին/ՄԿԾ-ներ ներգրավված ուսանողների թիվն ըստ երկրների							
Երկրներ	**2007**	**2008**	**2009**	**2010**	**2011**	**2012**	**2013**
Հունաստան				1			
Պորտուգալիա					3		
Հնդկաստան						5	**30 22.11.13 դրությամբ**
Նեպալ						2	

Ստորև ներկայացված են ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի տվյալ-ները:

Աղյուսակ 20

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

Օտար լեզուների տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը 5 վերջին տարիներին										
Աշխատակիցներ	**2009**		**2010**		**2011**		**2012**		**2013**	
	քանակ	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**
դասավանդող	47	100	57	100	49	100	43	100	41	100
վարչական	24	100	29	100	35	100	36	100	32	100
Օտար լեզուների տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 5 տարիներին										
Ուսանողներ	**2009**		**2010**		**2011**		**2012**		**2013**	
	քանակ	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**
բակալավր	295	90	386	92	426	95	370	96	442	96
մագիստրոս	41	100	53	100	68	100	100	100	137	100

Աղյուսակ 21

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

Ռուսերենի տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին տարիներին										
Աշխատակիցներ	**2009**		**2010**		**2011**		**2012**		**2013**	
	քանակ	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**
դասավանդող	22	100	33	100	34	100	27	100	28	100
վարչական	8	100	8	100	9	100	9	100	9	100
Ռուսերենին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին տարիներին										
Ուսանողներ	**2009**		**2010**		**2011**		**2012**		**2013**	
	քանակ	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**	**քանակ**	**%**

բակալավր	81	95	120	96	124	96	187	98	233	98
մագիստրոս							29	100	57	100

Անգլերենին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին տարիներին

Աշխատակիցներ	2009		2010		2011		2012		2013	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%
դասավանդող	22	32	33	39	34	40	27	56	28	57
վարչական	8	40	8	40	9	54	9	54	9	54

Անգլերենին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին տարիներին

Ուսանողներ	2009		2010		2011		2012		2013	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%
բակալավր	81	49	120	52	124	53	187	56	233	65
մագիստրոս							29	86	57	91

ՀՊՏՀ-ն արտաքին կապերի և միջազգայնացման համեմատական վերլուծության ընթացքում որպես օրինակ դիտարկել է գործընկեր առաջավոր բուհերը, որոնք Տեմպուս ծրագրի կոնսորցիումի անդամ եվրոպական համալսարաններ են:

Չափանիշ 9-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար:

Ուժեղ կողմեր	Հնարավորություններ
1. ՀՊՏՀ արտաքին կապերի աշխարհագրության ընդլայնումը և այդ կապերի խորացումը: Հատկապես ՀՊՏՀ մասնակցությունը Եվրամիության Էրազմուս Մունդուս ծրագրին, ինչն էականորեն ընդլայնել է ՀՊՏՀ միջազգային համագործակցության շրջանակները և նշանակալից չափով հարստացրել արտաքին կապերի փորձը: 2. Աննախադեպ ձեռքբերում է թվով յոթ Տեմպուս ծրագրերին ՀՊՏՀ մասնակցությունը: 3. Առկա են այլ երկրների ուսանողների՝ ՀՊՏՀ-ում ուսումն անգլերենով շարունակելու համար ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման ու դասախոսների ընտրության փորձ և կարողություն: 4. ՀՊՏՀ դասախոսները մասնակցում են միջազգային վերապատրաստումների Տեմպուսի շրջանակում: 5. Օտար լեզուներ տիրապետող դասավանդողների առկայություն:	1. ՀՀ ԲՈՒՀ-երի հետ համագործակցություն: 2. Տեմպուսի և այլ միջազգային ծրագրերում ընդգրկվածությունը համալսարանական կոնսորցիումների ձևաչափով: 3. Հայաստանում տեղակայված օտարերկրյա դեսպանությունների և միջազգային կառույցների հետ համագործակցություն: 4. Տնտեսագիտական պրոֆիլի օտարերկրյա համալսարանների և կրթական կառույցների հետ համագործակցություն կրթության և հետազոտության ասպարեզում:
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. ՀՊՏՀ վարչական անձնակազմի թույլ կարողություններ միջազգային ծրագրերի մշակման ու իրականացման ոլորտում: 2. Դասավանդման նորագույն մեթոդների կիրառման նպատակով դասախոսների վերա-	1. Աշխարհաքաղաքական իրադրության փոփոխությունների հետևանքով միջազգային ծրագրերի կրճատում: 2. Ֆինանսական մուտքերի

պատրաստումների սակավություն: 3. Միջազգային գործունեության արդյունավետության գնահատման չափանիշների բացակայություն: 4. Միջազգային գործունեության վերաբերյալ ոչ լայնածավալ տեղեկատվական գործունեություն: 3. Փոքրաթիվ օտարերկրյա ուսանողներ: 4. Ուսանողների փոխանակման համաձայնագրերի իրացման ցածր արդյունավետություն: 5. ՀՊՏՀ-ի օտար լեզուներին տիրապետող փոքրաթիվ դասախոսական կազմ:	նվազում:

Բարելավման ուղղություններ

1. Վերապատրաստման կազմակերպում՝ ուղղված միջազգային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
2. Հայաստանում տեղակայված օտարերկրյա դեսպանությունների և միջազգային կառույցների հետ համագործակցության խորացում:
3. Տնտեսագիտական պրոֆիլի օտարերկրյա համալսարանների և կրթական կառույցների հետ համագործակցության ստեղծում և խորացում կրթության և հետազոտության ասպարեզում:
4. Դասավանդման նորագույն մեթոդների կիրառման նպատակով դասախոսների վերապատրաստումների կազմակերպում:
5. Միջազգային գործունեության արդյունավետության գնահատման չափանիշների ստեղծում:
6. Տեղեկատվական գործունեության բարելավում, այդ թվում՝ միջազգային գործունեության վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում:
7. Դասախոսների օտար լեզվի իմացության շարունակական բարելավում:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: Բուհն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որ նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Բուհն ունի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր

ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի ստեղծման մեթոդական հիմք է ծառայում 2008թ. հոկտեմբերի 31-ին գիտխորհրդի հաստատած «Մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ժամանակավոր կարգը» (այսուհետ՝ կարգ),

(հավելված 10.1): Դա կիրառվում է 2008/2009 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից: Կարգում արտացոլվել են որակի ներքին ապահովման հիմնական դրույթները, սկզբունքները, քաղաքականությունը և ընթացակարգերը:

Կարգում մասնավորապես սահմանված են՝ որակի ներբուհական ապահովման քաղաքականության սկզբունքները, կրթական ծրագրերի մշտադիտարկման և դրանց պարբերաբար վերանայման կառուցակարգերը, ուսանողների գիտելիքների գնահատման ընթացակարգերը, պրոֆեսորադասախոսական համակազմի որակի գնահատման բազմագործոնային համակարգը և դրա վերահսկողության և դասախոսների խրախուսման կառուցակարգերը, ուսումնական ռեսուրսներով ապահովվածությունը, արդյունավետության գնահատման համակարգը և այդ ռեսուրսների օգտագործման վերահսկողությունը, կրթության որակի ամփոփ գնահատման կառուցակարգերն ու հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերը, կրթության որակի գնահատման տեղեկատվական ապահովման համակարգը:

Վերը նշված կարգը մշակվել և հետագայում լրամշակվել է՝ հիմք ընդունելով ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված հարցումների արդյունքները և քննարկումները:

2011թ. դեկտեմբերի 20-ից ՀՊՏՀ-ում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» դրամաշնորհային ծրագիր, որը նպատակաուղղված է ՀՊՏՀ-ում որակի ներքին ապահովման ստորաբաժանման ստեղծմանը, դրա գործունեության սկզբունքների և կանոնակարգերի մշակմանը, հետագա զարգացմանն ու հզորացմանը, որակի ներքին ապահովման մշակույթի ձևավորմանը, որակի ապահովման եվրոպական չափանիշներին համահունչ կրթության որակի ապահովման ներբուհական նոր կառուցակարգերի ներդրմանը, դրանց անընդհատ վերանայման ու կատարելագործման ուղիների հստակեցմանը, ինչպես նաև նոր ընթացակարգերով և կառուցակարգերով որակի ներքին գնահատման իրականացմանը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ՀՊՏՀ-ում ստեղծված որակի ապահովման բաժնի աշխատակիցները, առաջնորդվելով որակի շարունակական բարելավման, որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին համապատասխանության, միջազգային և տեղական մակարդակում հաշվետվողականության ապահովման և մասնագիտական կրթության հավատարմագրման անհրաժեշտության սկզբունքներով, ինչպես նաև անցնելով անհրաժեշտ վերապատրաստումներ, ձեռնամուխ են եղել համալսարանում կրթության որակի ապահովման գործընթացների կանոնակարգման նպատակով մի շարք հայեցակարգային փաստաթղթերի մշակմանը, որոնց թվում՝

- մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման հիմնական սկզբունքներ,
- որակի ներքին ապահովման հայեցակարգ,
- ՀՊՏՀ ռազմավարության փիլիսոփայության ձևակերպման շրջանակ,
- ՀՊՏՀ որակի ապահովման շրջանակի ձևավորում,
- ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր,

- ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի կառուցակարգեր:

Թվարկված փաստաթղթերը քննարկվել և հաստատվել են ՀՊՏՀ որակի ապահովման խորհրդի կողմից, նախատեսվել է նշված հայեցակարգային փաստաթղթերից բխող լրացուցիչ կարգերի և ուղեցույցերի մշակում:

ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգերի կառուցումը ուղղորդվում է *Եվրոպական չափորոշիչներում և ուղենիշներում* ձևակերպված հետևյալ հիմնարար սկզբունքներով՝

- ՀՊՏՀ-ն առաջնային պատասխանատվություն է կրում կրթության որակի ապահովման համար,
- ՀՊՏՀ-ն կրթության որակի ապահովման համար հաշվետու է իր ուսանողներին, գործատուներին և հիմնադիրներին (կառավարությանը),
- ՀՊՏՀ-ն պետք է կարողանա հավաստել իր տրամադրած կրթության որակը երկրում և միջազգայնորեն,
- ՀՊՏՀ կրթական ծրագրերի որակը շարունակաբար բարելավվում է՝ ուսանողների և այլ շահակիցների սպասելիքներին համահունչ:

Որակի ապահովման համակարգի ստեղծմամբ և զարգացմամբ ՀՊՏՀ-ն ձևավորում է բարեփոխումների մի շրջանակ, որը նպաստելու է բուհի կարողությունների վերլուծությանը, արժևորմանը և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև վարչական, ֆինանսական և ուսումնական գործունեության բարելավմանը:

Որակի ապահովման գործընթացները ՀՊՏՀ-ում շարունակական բնույթ են կրելու և իրականացվելու են «պլանավորում – իրականացում – գնահատում -բարելավում» շրջափուլով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով բուհը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ

2008-2011թթ. որակի ապահովման գործընթացների իրականացումը ՀՊՏՀ-ում վերապահվել է գիտության և որակի կառավարման վարչությանը: 2012թ. հունվարի 11-ից որակի ապահովման աշխատանքները համակարգում է որակի ապահովման բաժինը(հավելված 10.2), որը համալրվել է անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով:

Որակի ապահովման բաժինը՝

- մշակում է որակի ներքին ապահովման ընթացակարգեր կրթական ծրագրերի հաստատման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման համար, հետևում և աջակցում է դրանց իրականացմանը ՀՊՏՀ ստորաբաժանումներում,
- կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
- պատասխանատու է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման և իրականացման համար,
- պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի չափման

գործիքակազմի (ուսանողական հարցումներ) մշակման համար,

- գնահատում է դասախոսական կազմի ուսումնամեթոդական գործունեությունը և դրա արդյունավետությունը:

Ըստ ՀՊՏՀ ռեկտորի 10.09.2012թ. N 161-Ա հրամանի և ՀՊՏՀ որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման կարգի (հավելված 10.3)՝ ՀՊՏՀ որակի ապահովման գործընթացների կանոնակարգման, արդյունավետ իրականացման և փորձնական ինքնավերլուծության նպատակով ձևավորվել են՝ որակի ապահովման խորհուրդ, ինքնավերլուծությունն իրականացնող 8 աշխատանքային խմբեր, որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուներ:

Որակի ապահովման խորհուրդը ստեղծվել է ՀՊՏՀ որակի ապահովման գործընթացների մասին որոշումներ կայացնելու և մշակված փաստաթղթերը հաստատելու նպատակով: Որակի աշխատանքային խմբերին վերապահված է ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտական կրթական ծրագրերի ինքնավերլուծության իրականացում՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 959-Ն որոշմամբ հաստատված մասնագիտական կրթության հավատարմագրման 10 չափանիշների և չափորոշիչների:

ՀՊՏՀ բոլոր ֆակուլտետներում և մասնագիտական ամբիոններում ինքնավերլուծության գործընթացի համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման համար նշանակվել են որակի ապահովման պատասխանատուներ:

Որակի ապահովման աշխատանքային խմբերը ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի աշխատակիցների աջակցությամբ 2012-2013թթ. ընթացքում իրականացրել են համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձնական ինքնավերլուծություն՝ համաձայն ՈԱԱԿ-ի կողմից մշակված և ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված ձևաչափի:



Գծապատկեր 16. Որակի ապահովման գործընթացի իրականացման գծապատկեր

Համալսարանի 20 աշխատակիցներ 2013 թ. մասնակցել են Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում Որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագետների կողմից իրականացվող «Որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում» խորագրով վերապատրաստման դասընթացների բոլոր երեք փուլերին: Վերոնշյալ վերապատրաստումները միտված են բուհերում որակի մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների վերաբերյալ առավել լայն շրջանակներում իրազեկվածության ընդլայնմանը:

Որակի ապահովման բաժնին ՀՊՏՀ թիվ 1 մասնաշենքում հատկացվել է մշտական գործող աշխատասենյակ, որն ապահովված է անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական ռեսուրսներով:

Առկա ռեսուրսների, բոլոր ստորաբաժանումների և կառուցվածքային միավորների գործունեության վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա ստեղծվել է տվյալների էլեկտրոնային բազա (http://survey.anqa.am):

ՀՊՏՀ որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով տրամադրվող ֆինանսական ռեսուրսներն են՝ Համաշխարհային բանկի «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները, որակի ապահովման բաժնի 6 աշխատակիցների ամենամսյա աշխատավարձը և հավելավճարները, որակի ապահովման բաժնի նյութական ռեսուրսների համալրմանն ուղղվող միջոցները: ՀՊՏՀ ղեկավարությունը նախատեսում է նաև ինքնավերլուծության գործընթացում որակի աշխատանքային խմբերի (պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների) ներգրավվածությունը ներառել վերջիններիս տարեկան բեռնվածության մեջ՝ նրանց ազատելով լսարանային ժամերի որոշ մասից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավված են ինչպես ներքին (ուսանողներ, դասախոսներ և վարչական կազմ), այնպես էլ արտաքին շահակիցներ (ՀՀ պետական կառավարման մարմինների և գործարար հատվածի ներկայացուցիչներ, ՀՊՏՀ շրջանավարտներ):

Որակի աշխատանքային խմբերը ձևավորվել են բուհի պրոֆեսորադասախոսական, ուսանողական և վարչական կազմի ներկայացուցիչներից, գործատուներից և շրջանավարտներից, որոնց ընտրությունն իրականացվել է հետևյալ սկզբունքներով.

- Պրոֆեսորադասախոսական կազմից աշխատանքային խմբի թեկնածուներին առաջադրում են ամբիոնները:
- Ուսանողների ներկայացուցիչներից աշխատանքային խմբի թեկնածուներ են առաջադրում ուսանողական խորհուրդը, ֆակուլտետները, ամբիոնները: Ուսանողական խորհրդի կողմից աշխատանքային խմբի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ցանկացած սովորող /ուսանող կամ ասպիրանտ/:

Ֆակուլտետները ընտրում են ցածր և միջին առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ըստ մասանգիտության և կուրսերի բաշխվածության՝ յուրաքանչյուր մասնագիտության բակալավրիատի 1-4-րդ և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ ուսումնական տարվա ուսանողներ:

- Վարչական անձնակազմի ընդգրկվածությունը որակի աշխատանքային խմբում համամասնական է վարչական ստորաբաժանումներին և ֆակուլտետներին:
- Որակի աշխատանքային խմբում կարող են ներգրավվել նաև գործատուներ և շրջանավարտներ:
- ՀՊՏՀ որակի ապահովման բաժինը, ըստ անհրաժեշտության, իրավասու է Որակի աշխատանքային խմբում ներգրավել տեղական և միջազգային փորձագետների:

ՀՊՏՀ-ն, ուսումնասիրելով աշխատաշուկայում մասնագիտությունների իրական պահանջարկը, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների գործատուների առաջարկությունները՝ դիտարկվող ժամանակահատվածում պահանջարկ ունեցող մասնագիտությունների և մասնագիտացումների համար համատեղ մշակել և իրականացնում է մագիստրոսական նոր կրթական ծրագրեր: Ներկայումս ՀՊՏՀ արտաքին շահակիցները (գործատուները) անմիջականորեն մասնակցում են 8 մագիստրոսական կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը: Այս սկզբունքը ՀՊՏՀ-ն միտված է տարածել մյուս մասնագիտությունների մասնագիտացումների վրա:

ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության և գնահատման նպատակով ուսանողների և դասախոսների շրջանում կատարվել է հարցում առկա ռեսուրսներով բավարարվածության վերաբերյալ: Հարցման արդյունքները վերլուծվել, ամփոփվել և հրապարակվել են 2012թ. ապրիլի 17-ին կայացած աշխատաժողովում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է

ՀՊՏՀ-ում որակի ապահովման գործընթացների շարունակական բնույթն իրագործվում է «պլանավորում – իրականացում – գնահատում -բարելավում» շրջափուլով:

ՀՊՏՀ գիտական խորհրդի և որակի ապահովման խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են որակի ներքին համակարգի բաղադրիչներին վերաբերող հարցեր և ընդունվում որակի մշակույթի արմատավորման հիմնարար որոշումներ: Մասնավորապես՝ 2008թ. հաստատված «Մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ժամանակավոր կարգը» ենթարկվել է լրամշակման՝ հիմք ընդունելով ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված հարցումների արդյունքները և քննարկումները:

Որակի ապահովման բաժնի կողմից մշակված հայեցակարգային փաստաթղթերի հիման վրա մշակվում են դրանցում ամրագրված սկզբունքների կիրառումն ապահովող կարգեր և ուղեցույցներ:

Որակի ապահովման աշխատանքային խմբերը ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի աշխատակիցների աջակցությամբ 2012-2013թթ. ընթացքում իրականացրել են համալսարանի ենթակառուցվածքային կարողությունների փորձնական ինքնավերլուծություն՝ համաձայն Որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից մշակված և Կառավարության որոշման հավելված կազմող ձևաչափի: Հավաքագրված տեղեկատվության ամփոփման, ինչպես նաև որակի աշխատանքային խմբերի ու որակի ապահովման բաժնի

աշխատակիցների համատեղ քննարկումների արդյունքում մշակված ՀՊՏՀ փորձնական ինքնավերլուծության զեկույցը ներկայացվել է որակի ապահովման խորհրդի ուսումնասիրմանը, ստացված դիտողությունները հաշվի են առնվել ինքնավերլուծության վերջնական զեկույց պատրաստելիս: Դա քննարկվել է նաև ՀՊՏՀ գիտական խորհրդի նիստում:

ՀՊՏՀ դասախոսները և աշխատակիցները պարբերաբար մասնակցում են ՈԱԱԿ-ի վերապատրաստման դասընթացներին, աշխատաժողովներին՝ արդիականացնելով և կատարելագործելով որակի ներքին ապահովման համակարգը:

Կրթության որակի ճանաչման, որակավորումների համադրելիության և մրցունակության ապահովման նպատակով ՀՊՏՀ-ն ակտիվ գործունեություն է ծավալում կրթական միջազգային կառույցների և արտերկրի համալսարանների հետ համագործակցելու ասպարեզում: Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման ժամանակ հիմք են տեղական և արտասահմանյան առաջատար բուհերի բենչմարքինգի արդյունքները: Բենչմարքինգ իրականացվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում՝ ՀՊՏՀ կողմից գործուղված դասախոսների և վարչական աշխատակիցների միջոցով: Մասնավորապես՝ ՀՊՏՀ կողմից բենչմարքինգ է իրականացվել հետևյալ գործընկեր համալսարաններում.

- *Հայաստանի Հանրապետությունում՝* Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, Հայաստանի պետական ազգարային համալսարան, Հայաստանի պետական ճարտարապետաշինարարական համալսարան, Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան, Մ.Նալբանդյանի անվ. Գյումրու պետական մանկավարժական համալսարան, Գավառի պետական համալսարան, Գորիսի պետական համալսարան:
- *Արտասահմանում՝* Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ (Շվեդիա), Կոբլենց-Լանդաուի համալսարան (Գերմանիա), Ալիկանտեի համալսարան (Իսպանիա), Մարի Կյուրի-Սկլադովսկայայի համալսարան (Լեհաստան), Իլյայի պետական համալսարան, Շոթա Ռուսթավելիի պետական համալսարան (Վրաստան), AlmaLaurea միջհամալսարանական կոնսորցիում (Իտալիա), Բաթ Սպայի համալսարան (Միացյալ Թագավորություն):

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար

ՀՊՏՀ-ում ավարտվել է ՀՀ ՈԱԱԿ հիմնադրամի մշակած 1-ին, 2-րդ և 3-րդ էլեկտրոնային ծավալուն հարցաշարերի լրացումը, որի գլխավոր նպատակը ՀՊՏՀ հավատարմագրման գործընթացի և որակի ապահովման արտաքին գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ձևավորումն է: Սեփական նախաձեռնությամբ ՀՊՏՀ-ում իրականացված փորձնական ինքնավերլուծության ժամանակ նախանշվել են անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և մշակման կառուցակարգերը, հստակեցվել է գործընթացում ներգրավված շահակիցների շրջանակը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բուհի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով բուհի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար

ՀՊՏՀ-ում 2012-2013թթ. «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման և դրա հետագա բարելավման» ծրագրի շրջանակներում համալսարանում ընթացող որակի ապահովման գործընթացների թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ կազմակերպվել է 5 աշխատաժողով.

1. 17 ապրիլի 2012թ., թեման՝ «Որակի ապահովման համակարգ. քաղաքականություն և ընթացակարգեր»,
2. 25 հունիսի 2012թ., թեման՝ «Առաքելություն և գործընթացներ»,
3. 4 դեկտեմբերի 2012թ., թեման՝ «Որակի ապահովման մեխանիզմների կիրառում»,
4. 24 հունիսի 2013թ., թեման՝ «Որակի ապահովման հետադարձ կապի մշակման մեխանիզմներ»,
5. 17 սեպտեմբերի, 2013թ., թեման՝ «Ինքնավերլուծության արդյունքների հիման վրա որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի վերանայում»:

Որակի ապահովման համակարգի թափանցիկությունն ապահովվում է նաև ՀՊՏՀ որակի ապահովման խորհրդին և գիտական խորհրդին ներկայացվող հաշվետվությունների միջոցով:

ՀՊՏՀ պաշտոնական կայքում (www.asue.am) հրապարակվում է բուհի գործունեության, կառուցվածքային միավորների, առկա մասնագիտությունների, գործող կրթական ծրագրերի, ընդունված որոշումների, նորությունների և այլնի մասին բազմակողմանի և թափանցիկ տեղեկատվություն: Բացի այդ, ներքին և արտաքին շահակիցները համալսարանի գործունեության վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն ունեն ՀՊՏՀ ֆեյսբուքյան էջում: «Տնտեսագետ» պաշտոնաթերթում պարբերաբար տեղեկատվություն է հրապարակվում ՀՊՏՀ գործունեության վերաբերյալ:

Կրթական գործընթացների վերաբերյալ ուսանողների դիտարկումները, առաջարկություններն ու դիտողությունները հրապարակվում են ուսնողական խորհրդի «Էկոնոմ +» ամսաթերթում:

«Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց» ծրագրի շրջանակներում մշակվել է շրջանավարտներին միտված հարցաթերթիկ, որտեղ համալսարանի գործունեությանը վերաբերող հարցերի միջոցով հնարավոր կլինի ուսումնասիրել նրանց կարծիքը ՀՊՏՀ գործունեության վերաբերյալ: Այդպիսով հետադարձ կապ կապահովվի բուհի և շրջանավարտների միջև՝ հիմքեր ստեղծելով ՀՊՏՀ գործունեության հետագա բարելավման համար:

Չափանիշ 10-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 3 տարիների համար:	
Ուժեղ կողմեր	**Հնարավորություններ**
1. ՀՊՏՀ-ում ստեղծվել է որակի ապահովման բաժին, որը հագեցված է անհրաժեշտ մարդկային, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով: 2. Որակի ապահովման բաժինը մշակել է մի շարք հայեցակարգային փաստաթղթեր, որոնց հիման վրա կմշակվեն համապատասխան կարգեր և ուղեցույցեր: 3. ՀՊՏՀ-ում ստեղծվել է բուհի ինքնավերլուծության և ենթակառուցվածքային հավատարմագրման համար անհրաժեշտ տվյալների էլեկտրոնային բազա: 4. Շրջանավարտների համար մշակված հարցաթերթիկի միջոցով հնարավոր կլինի ուսումնասիրել նրանց կարծիքը ՀՊՏՀ-ի վերաբերյալ՝ հիմքեր ստեղծելով գործունեության հետագա բարելավման համար: 5. Գործատուների հետ իրականացվում են համատեղ կրթական ծրագրեր՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: 6. ՀՊՏՀ որակի ապահովման՝ ինքնավերլուծության աշխատանքային խմբերի, ֆակուլտետային ներկայացուցիչների և Որակի խորհրդի գործունեությունը: 7. Որակի ապահովման համակարգի ձեռնարկի /ուղեցույցի/ առկայությունը: 8. Որակի ապահովման մեխանիզմների և գործիքների առկայությունը: 9. Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը: 10. ՀՊՏՀ աշխատակիցների մասնակցությունը ՈԱԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվող վերապատրաստումներին: 11. ՀՊՏՀ գործունեության և որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը	1. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համագործակցություն: 2. Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի ուղղությամբ աշխատանքի հնարավորություն միջազգային ծրագրերի շրջանակներում, մասնավորապես՝ Տեմպուսի:
Թույլ կողմեր	**Վտանգներ**
1. Որակի ապահովման և հետադարձ կապի որոշ մեխանիզմների անկատարությունը: 2. Որակի ապահովման գործընթացում ուսանողների մասնակցության կառուցակարգի անկատարություն: 3. ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության աշխատանքային խմբերի,	1. Կառավարության, կրթության լիազոր մարմնի և ՈԱԱԿ-ի կողմից օրենսդրական անբարենպաստ փոփոխությունները: 2. Որակի ապահովման գործիքակազմին և

ֆակուլտետային պատասխանատուների և Որակի խորհրդի աշխատակիցների շահադրդման պակաս: 4. Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական և այլ ռեսուրսների բաշխման վարչական կարգավորման անկատարություն: 5. Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման ընթացակարգերի անկատարություն: 6. Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի անկատարությունը: 7. Որակի ապահովման վերլուծության և գնահատման գործիքակազմի անկատարությունը: 8. Որակի մշակույթի նորաստեղծությամբ պայմանավորված դրա ոչ լիարժեքությունը:	մեթոդաբանությանը տիրապետող մասնագետների սակավությունը:

Բարելավման ուղղություններ

1. Որակի ապահովման մշակված հայեցակարգային փաստաթղթերից բխող և որակի ներքին ապահովման համակարգի առանձին ոլորտները կարգավորող ընթացակարգերի ու կարգերի մշակում և կիրառում:
2. Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման ընթացակարգերի մշակում:
3. Որակի ապահովման գործընթացի շարունակականությունն ապահովելու նպատակով վերապատրաստումների իրականացում;
4. Որակի ապահովման գործընթացում ուսանողների մասնակցության ընդլայնում և կառուցակարգի մշակում:
5. Որակի ապահովման վերլուծության և գնահատման գործիքակազմի բարելավում, անձնակազմի վերլուծական կարողությունների հզորացում:
6. Հետագա ինքնավերլուծության համար տեղեկատվության հավաքագրման ձևաչափերի մշակում՝ ըստ ՀՊՏՀ գործունեության ուղղությունների:
7. Իրականացնել արտաքին շահակիցների հետ կայուն հետադարձ կապի քաղաքականությունը և ընթացակարգերը: